

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒՋԵԼԵԱՆ
ՀԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ

ASSADOUR GUZELIAN

HAMO AND FADILEH

ԱՍԱՏՈՒՐ ԿԻԴՁԵԼԵԱՆ
ՀԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ

ASSADOUR GUZELIAN
HAMO AND FADILEH

ԵՐԵՎԱՆ-2009
YEREVAN-2009

ՀՏԴ 891.981-1 Կիւզեւեան
ԳՄԴ 843-5
Կ 590

ԿԻԻԶԵԼԵԱՆ ԱՍԱՏՈՒՐ

Կ 590

«Չամոյ եւ Ֆատիլէ»: Պոեմ:/ Կիւզեւեան Ա.-եր.:
ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2009.-208 էջ:

Ասատուր Կյուզեւեանի «Չամոյ եւ Ֆատիլէ» գիրքը լույս է տեսել 1960 թ. Կալկաթայում և սպառվել է կարճ ժամանակում: Աշխարհասփյուռ բարեկամները խնդրել են վերահրատարակել այն, և հեղինակը, գրեթե 50 տարի անց, հրատարակում է «Չամոյ եւ Ֆատիլէ» գիրքը նույնությամբ, հավելելով անգլերեն թարգմանությունը, որ նույնպես կատարվել է գրեթե կես դար առաջ, ինչպես նաև գրախոսականներ, պոեմի հետ կապված նյութեր: Կատարված են միայն տեխնիկական փոփոխություններ:

ԳՄԴ 843-5

ISBN 978-99941-53-95-4

© Ա. ԿԻԻԶԵԼԵԱՆ, 2009

© «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատարակչություն, 2009



Խմբագրի կողմից

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԽՐԱՆՔ

Ես հպարտության զգացում ապրեցի, երբ իմ բարեկամ Ասատուր Կյուզելյանը հայտնեց, որ մտադիր է վերահրատարակել 1960 թվականին լույս տեսած իր «Համոյ եւ Ֆատիլէ» պոեմը եւ որոշել է գրքի խմբագրումը հանձնարարել ինձ:

Այդ հպարտության զգացումը պատահական չէ: Չէ՞ որ դեռես 1961 թվականին այդ գիրքը ջերմ ընծայագրով ստացել եմ հեղինակից, որն այդ ժամանակ ապրում էր հեռավոր Կալկաթայում եւ դասավանդում էր Հայոց մարդասիրական ճեմարանում: Դեռես այն ժամանակ ես իմ հիացումն էի արտահայտել երիտասարդ հեղինակին՝ ստեղծագործական սխրանքի, ժողովրդական ավանդապատումը կյանքի արտացոլման, մարդասիրական վեհ զգացումների արտահայտման, սիրո անզուգական զգացման ճշմարտացի ներկայացման համար:

Խմբագրել, չի նշանակում ամեն ինչ վերափոխել: Խմբագրել նշանակում է հնարավոր բացթողումները նկատել, սխալներից խուսափել: Այդ է եղել իմ՝ խմբագրի նպատակը: Ուրախ եմ, որ ոչինչ փոփոխել պետք չէ, որ գրքի վերահրատարակությունը թյուրիմացությունների տեղիք չի տալիս:

Ուրախ եմ, որ ներկայացնում եմ նաեւ դյուցանգնապոեմի անգլերեն թարգմանությունը, մամուլում եղած արձագանքները, այն ջերմ ու անկեղծ խոսքերը, որ ասվել են Ասատուր Կյուզելյանի «Համոյ եւ Ֆատիլէ» գրքի մասին:

Դեռես այն ժամանակ՝ անցած դարի 60-ական թվականներին, «Համոյ եւ Ֆատիլէ» գիրքը ջերմությանը ընդունվեց ընթերցողի կողմից: Հանոզված եմ, որ ժամանակի քննությունը բռնած դյուցանգնապոեմը, որը չի կորցրել իր արդիականության հնչեղությունը, սիրով կընդունվի արդեն մեծ ճանաչում գտած Ասատուր Կյուզելյանի բարեկամների, ընկերների, ընթերցողների կողմից: Թեեւ հեղինակը ցանկանում էր այս հրատարակությունը տեսնել միայն դասական ուղղագրությամբ, սակայն նպատակահարմար գտանք որոշ նյութեր թողնել ըստ բնագրերի:

Կրկին ու կրկին հպարտ եմ նաեւ նրանով, որ գիրքն այս անգամ տպագրվում է Երեւանում, Ասատուր Կյուզելյանին հարազատ դարձած քաղաքում, ազատ ու անկախ Հայաստանում:

Ալբերտ Փարսադանյան





ԱՍԱՏՈՒՐ ԿԻՋԵԼԵԱՆ

ՀԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ

Կ Ա Լ Կ Ա Ք Ա

1960

*1960 թուականին հրատարակուած «Համոյ եւ Ֆատիլէ»
գրփիսիս ղոսաթերթը*





ՉՕՆ

Ահա քեզմէ, քու ամբարեղ հնադարեան,
Մուրազ սիրոյ, իմաստութեան ափ մը ցորեան
Ակօսներուն մէջ տողերուս ես կը ցանեմ,
Հին մեղեդին նոր սրինգով կը նւագեմ:

Երգիս գինին կը նուիրեմ ազատատենչ
Մերունդներու խրախճանքին, որ միշտ անշէջ
Մնայ անոնց երջանկութեան ջահն արփավառ
Եւ նոր դարու երկնքին վրայ փայլի պայծառ:

Արդարաշող արեւին տակ թող նորածագ,
Յաւէտ չորնայ ճահիճը հին ստրկութեան,
Ատելութեան որոմը սեւ՝ ըլլայ ատոք,
Փխրուն հողի կուրծքին վրայ ոսկի ցորեան:





ՄՈՒՏՔ

Հէ՛յ հին օրեր, կապո՛յտ իղձեր, յիշատակնե՛ր,
Ահա նորէն ձեզի կու գամ, հպա՛րտ սարեր,
Պապակ սիրտս շրթունք կ'ընեմ համբոյրին ձեր
Անցած օրեր, անրջազգեստ բիլ երազներ ... :

Ժամանակը մատներուն մէջ սէրս խեղդեց.
Բարակ ծուխի մը պէս կապոյտ յուշ մը մնաց
Հին օրերէն, ափ մը մոխիր մնաց միայն
Հոգիիս մէջ հին խարոյկէն երջանկութեան:

Սիրտս հիմա ձիաւոր մ'է անտառներուն
Մէջ յուշերուս, բիլ իղձերուս, սերերուս հին,
Հիմա հոգիս կամուրջ մ'է ծեր, որուն տակէն
Ծով կը թափի անցեալս ամբողջ գլգլալէն:





Երազ կոյսեր, ձեր աչքերուն հուրն ես կ'երգեմ
Չնաշխարհիկ Ֆատիլէի աչքերուն մէջ,
Անոր ըմբոստ կուրծքին ներքեւ ձեր սրտերն եմ
Ես գետեղեր, անոր այրող համբոյրին մէջ

Ձեր շրթներուն կարմիր աւիշն եմ ես դրեր...
Դուք էք միայն լարը քնարիս, յիշատակներ՝,
Դուք էք խօսողն ընդերքներէն մէն մի տողիս,
Ձեր մատներով ծաղիկն այս բիլ կը քաղեմ ես:

Դուք երազ էք հիմա սակայն, անուրջ միայն...
Թող այս երգս ըլլայ համբոյր մեխակաբոյր
Ձեր յուշերուն, ըլլայ արեւ՝ աշունի գոյն
Ձեր վիշտերուն՝ մշտադալար պայծառ գարուն:





ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հազար գարուն, հազար արեւ մեր սարերուն,
Մեր կոյսերուն կերասաշուրթ, կակաչի գոյն
Մեր յոյսերուն, ջահել տղոց կաղնեմարմին,
Սիրողներու վարդ սիրտերուն, հազար գարուն:

Հազար համբոյր մեր դաշտերուն, մեր գիւղերուն,
Հազար սրինգ մեր պատանի հովիւներուն,
Հազար երազ անոնց երգին ու տաղերուն,
Հազար համբոյր անոնց պապակ շրթունքներուն:

Սէ՛րը յաւերժ պիտի ապրի երկրի վրայ,
Մահն ալ օր մը անոր առջեւ ծունկի պիտ գայ,
«Մահը անմահ» ծունկի պիտ գայ ու պիտի լայ,
Նախանձի որդն երբ մարդոց սրտէն հեռանայ:





Ա

1

Համոյի հայեացքն զերթ համբոյր մը տաք,
Դպաւ կարօտով կատարին սարի.
Քունէն նոր զարթնող ինչպէս գեղուիի,
Անպէ վերմակը նետեց ձորին մէջ
Ու մերկ մարմինը Սաման սարն ահա
Ծածկեց շղարշով. շողերն արեւուն
Վարդ ժպիտ դարձան վրան այտերուն:

Գիտեց անձկութեամբ կատարն այդ վսեմ,
Տխուր յուշերու մշուշոտ ճամբէն
Միտքը տարաւ զինք մանուկ օրերուն:

2

Շատ փոքրիկ էր ան տաս տարի առաջ,
Տղայ մը անհոգ դեռ ութ տարեկան,
Երբ հովիւները դաշոյն մը կուրծքին,
Այդ սարի լանջէն հայրը տուն բերին,
Գիւղէն քիչ հեռու փոս մը փորեցին
Եւ սառած մարմինն յանձնեցին հողին:
Շատ լացաւ մայրը, մազերը փետտեց,
Հօր շիրմին վրայ տաք արցունք ցանեց.
Համոյին ըսաւ, որ ալ հայր չունէր,
Խալիլ պէկը զինք որբուկ էր թողեր:





3

Համոն վշտաբեկ, այն օրէն ի վեր,
Արեւածագէն մինչեւ ուշ գիշեր
Անտառներու մէջ յար կը թափառէր,
Սարերու լանջին վշտոտ երգ կ'երգէր.

-Եկէք հաւքեր, բարի հաւքեր,
Եկէք հաւքեր, վայրի հաւքեր,
Աշունի գոյն սրտիս ծառին,
Կանաչ բերէք, սարի հաւքեր:

4

Օրերը դանդաղ, ուղտերու նման,
Ժամանակի գորշ ու անծայրածիր
Անապատներէն եկան ու անցան,
Ի գուր փնտրելու խնդութեան աղբիւր:
Քաղցն ու զրկանքը եղան խորթ մայրեր
Եւ իրենց դաժան արհամարհանքով
Համոյի սիրտը ըրին վշտի ծով:

-Հէ՛յ սարեր, հպարտ սարեր,
Հայր չունիմ, կանաչ սարեր,
Սրտիս մէջ կարօտ ունիմ,
Ինձ համբոյր տուէք, սարեր:





Այդ ո՞վ է երգողն իրիկնամուտին,
Այս ոսկեմարմին լեռներու լանջին.

-Աղբիւր եմ, ջուր չունիմ,
Աշուղ եմ, սազ չունիմ,
Սէգ սարեր, դարդս լացէք,
Ես որք եմ, հայր չունիմ:

Հազիւ աւարտած երգը վշտազին,
Ընդոստ, սարսափով վեր ցատկեց Համոն.
Ծառի մը ետեւ ձիաւոր մը կար,
Որ երգով տարուած զինք մտիկ կ'ընէր:

- Ո՞ր գիւղեն կու գաս, ի՞նչ է անունդ,-
Մեղմօրէն հարցուց որսորդն անձանօթ.
Համոն լուռ մնաց, չպատասխանեց:

- Ես Արիֆ պէկն եմ, ոչխարներ ունիմ
Աստղերու թիւէն շատ-շատ աւելի,
Շքեղ պալատս եկուր քեզ տանիմ,
Եւ հովի կարգեմ հօտիս անուանի:





Արիֆ պէկն անգութ երեսուն տարի
Գիւղացիներուն արիւնն էր քամեր,
Պալատ էր շիներ՝ քանդելով տուներ,
Անհամար այգի՝ խոփովն աղքատի,
Քրտինքն էր ցաներ շինականներու,
Անոնց մանգաղով ոսկի հնձելու:

Համոն չէր ուզեր անոր հացն ուտել,
Բայց անգութ քաղցը, պէկ մ'ալ ինք դաժան,
Հուժկու մատներով կը խեղդէր տղան:
Մօր յոյսի ծառը բախտի արեւէն,
Տարի մը կ'ընէր, չորցեր էր արդէն .
Հիւանդ պառկած էր Խոլթիքէ Ֆիտանն:





Բ

1

Համոն գեղանի երիտասարդ մ'եր,
Քսան տարեկան, երբ համբուս արդէն
Որպէս մեծ երգիչ ու սրնգահար,
Մինչեւ Սեւ ծովու ափերն էր հասեր.
Թէ որ ան ուզէր թռչուններն անգամ
Իր մեղեդիով կը գինովցներ.
Իր հօտն անուանի մեկ մարդու նման,
Հլու, հնազանդ, կը տանէր աղբիւր
Ու պապակ ոչխարն իր հետ կը քշէր,
Կը հանէր սարերն՝ առանց տալու ջուր:

Պարման աղջիկներ գողնալ կ'ուզէին
Հովիւ Համոյի սրտի բանալին
Ու տիրել անոր սիրոյ պալատին:
Բայց չոպան տղան սրտին մէջ միայն
Ունէր մեկ աղբիւր, ձիւնի պէս մաքուր,
Ուրկէ մայրը լոկ՝ կու գար խմել ջուր:





2

Արիֆ պէկն ունէր մի սիրուն աղջիկ,
Սարերու կրծքին բացուած մի յասմիկ,
Մեւ-սեւ աչքերով հուրի գեղեցիկ:
Նման չէր իր հօր Ֆատիլէն բարի,
Անոր սրտին մէջ ծառը նախանձի
Եւ ատելութեան չունէր արմատներ:

Կ'օգնէր բոլորին, գթոտ սիրտ ունէր,
Աչքի լոյսն էր ան շինականներուն,
Մեծ նշանառու, իբրեւ քաջ որսկան,
Ամբողջ գիւղին մէջ անուն ունէր ան:
Քանի՛ պէկզատէ, քանի խան, իշխան,
Թագուն իդճերով կը դիտէին զայն:





3

Հօր վեգիլին հետ գարնան առտու մը
Դէպի անտառը որսի գնաց ան.
Մինչեւ երեկոյ ի գուր ման եկան
Սար ու ձոր ինկած՝ որսալու այծեամ:

Աղբիւրի մը քով երբ հասան խոնջած,
Ձիւն վար իջաւ պաղ ջուր խմելու.
Գլուխը հակեց... բայց անշարժ մնաց,
Ականջը լարեց սարի կատարէն
Առուակի նման հոսող նուագին.
Ծարար մոռցաւ, կանգնեցաւ ոտքի,
Աչքերը յառեց դէպի մեղեդին,
Ու յոյզ մը պատեց անոր ջինջ հոգին.
- Ո՞վ է նուագողն,- հարցուց վեգիլին:
- Ձեր հովիւ Համոն, մի ճորտի տղայ,
Որուն երգերէն հայրդ գինովցած,
Ջայն իր մեծ հօտին հովիւ է կարգած:
Հայրը անիրաւ, անարդար մարդ էր,
Խալիլ պէկ զանի սպանեց գաղտնի:





- Վեզիլ, գնա տուն, կ'ուզեմ առանձին
Սարն ի վեր ելլել այս վերջալոյսին,-
Ըսաւ Ֆատիլէն եւ արագարար,
Հովիւին վազող գառնուկ մը ինչպէս,
Սրինգի կանչէն բարձրացաւ դէպ սար:

-Լօ, լօ, լօ, լօ, սարի այծեամ,
Մ'երթար ջուրի, բարի այծեամ,
Պէկերն անգութ հայրս զարկին,
Քեզ կը սպասեն, սիրուն այծեամ:

Արեւի վերջին շողերը գրկած,
Հովերը եկան, համբոյրի նման
Հովիւ Համոյի շուրթերուն հպան:

Պէկի աղջիկը մնաց քարացած...
Ի՛նչ պոյ ու պոսաթ, ի՛նչ տեսք ունէր ան...
Ժայռի մը վրայ նստած սա տղան
Բացուած ծաղիկ մ'էր, կ'ուզէր պոկել զայն,
Միւնպիւլն այդ սարի, շնչել բոյրն անոր,
Կ'ուզէր զինովնալ տեսքովն հրավառ...





Առաջին անգամ զգաց Ֆատիլէն
Կախարդիչ թոյրը մեռնող արեւուն,
Բոյրը ծառերուն ու գարնան օդին,
Զգաց կարօտը սիրոյ համբոյրին,
Տենչով վառեցան ջահերը սրտին:

Համոն ետ դարձաւ, նայեցաւ ապշած,
Արեւը մտած էր արդէն անտառ,
Ծառի մը ետեւ՝ թողած մէկ պատառ...
Միթէ սա հուրի՞ն... ո՛հ. այո, ան էր,
Նոյն այդ աղջիկն էր, դեռ երէկ գիշեր,
Իր երազին մէջ ծաղիկ կը քաղէր:
Համոն բռներ էր, համբուրել կ'ուզէր,
Յասմիկ էր դարձեր փերին գեղուհի.
Ուզեր էր քաղել, նեկտարն յասմիկին
Խմել տոփանքով՝ որպէս վառ գինի.

-Երազիս մէջ քեզ
Ուզեցի բռնել
Աղջիկ տենչավառ,
Դուն յասմիկ դարձար:





Դէմքդ կը վառի
Նման արեւի,
Շրթներդ կարմիր,
Թերթեր են վարդի:

Հասակդ բարդի,
Մազդ այծեամի
Աչքերուն նման
Անվերջ կը փայլի:

Նայուածքդ վարդի
Համբոյր կը հոսի,
Շրթներուն վրայ
Իմ պապակ սրտի:

Հոսեցաւ երգը պաղ աղբիւրի պէս
Պէկի աղջկան ծով իղձերուն մէջ:
Ֆատիլէն քաղեց սերն հովի տղուն,
Կարմիր վարդ դարձաւ ` սիրտն անոր կոկոն.

-Ծարաւ եմ, ջուր չունիմ,
Ծաղիկ եմ, բոյր չունիմ,
Սրտիդ մէջ պաղ ջուր կայ,
Քեզմէ զատ աղբիւր չունիմ:





4

Բայց ի՞նչ ունայն մտածումի ալիքներ են,
Որ կը խուժեն մտքէն հեռու՝ սիրող սրտին,
Ո՞վ է տեսեր, որ իշխանի դուստրը պարման,
Շրթունքները դնէ շուրթին հովի տղուն,
Կամ պատանի ճորտը «լկտի» արժանանայ
Սեւ աչքերուն իշխանագարմ նուրբ աղջկայ:

Թող աստղերը վկայ ըլլան իմ խօսքերուն,
Հաւասար է մեր բոլորին սիրոյ գինին,
Որ բռնատրն աշխարհակալ կ'ընէ գերի
Քոչար կոյսի մը աչքերուն, տեսքին վայրի:
Սիրտը ճրագ մըն է մարած, պատրոյզն անոր՝
Նայուածքներու սլաքներն են, ուղղուած իրար...
Իշխանի մը սիրտը յանկարծ կը կայծուի
Շինականի մ'աչքի լոյսէն, դուստրը պէկի՝
Կը բռնկի չոպան տղու մը աչքերէն,
Որ անոր սէր մուրալ կու տայ հովի լաճէն:

5

Քաղցր երգ մը արդէն հիմա կը դողդողայ
Չեփիտի պէս, Ֆատիլէի շուրթին վրայ.
-Ծարաւ ես, պաղ ջուր ունիմ,
Ծաղիկ ես, ես բոյր ունիմ,
Սիրտդ բիլ իղձի ծով է,
Շուրթիս վրայ համբոյր ունիմ:





6

Գիշերն ահա գաղտագողի, դանդաղօրէն,
Ստուերաքայլ վեր կը մագլցի ձորերէն,
Կ'ուզէ գրկել ու համբուրել շողն արեւուն,
Որ կը փախչի, գերթ վիրատր եղնիկ վայրի
Ու հեւասպառ ժայռերէն վար կը գլորի...
Իսկ Ֆատիլէն ինչպէս կտոր մ'արեգակի,
Ծառի մը տակ դեռ կը շողայ, կը շողշողայ:

7

Աստղերն իրենց անոյշ նիրհէն արթնցեր են,
Ու երկնքի կապոյտ լիճին մէջ կը լողան:
Արծաթագգեստ որպէս լուսաստղ, սա սեւաչեայ
Հովիւ տղան ժպիտ-ժպիտ կը պլպլայ
Ֆատիլէի մտածումի երկնքին վրայ:

Իսկ Համոյի տենչանքները կակաչաբոյր,
Բոժոժատր գառներու պէս, պէկի դասեր
Համբոյրներու կածաններէն կը բարձրանան
Դէպի անոր սրտի սարը կախարդական...
Ծաղիկ կայ հոն, որ բոյր ունի անմահութեան,
Լճակ մը բիլ՝ ուր վառ իղճեր, տաս տարեկան
Կարմրաթշիկ աղջիկներու պէս կը լողան...:





8

Անտառին մէջ կարծես գաղտնի շշուկ մը կար,
Երբ Ֆատիլէն ոտքի ելաւ, նայեցաւ վար.
Գիղի լամբերն աչքով ըրին, որ ալ տուն գար:

- Պէտք է երթամ...

- Աստղերը թող

Վկայ ըլլա՞ն...

-Մատանիս առ

Որպէս երդում:

- Ես շուան եմ,

Ոսկի չունիմ:

- Ոսկին փուճ է,

Սէրդ տուր ինձ,

Որպէս միակ

Սրտիս մանեակ...:

Մտածումի ջահերն ամբողջ սիրոյ հովէն
Մէկիկ- մէկիկ աչքերն իրենց մունջ փակեցին,
Երբ Ֆատիլէն իջաւ սարէն կարաւելէն:

9

Պէկի դուստրը հիմա գիտեր, թէ սերն ի՞նչ էր,
Բիլ անուրջ էր, աշուղի խօսք, հին առասպել.
Իր մամիկն էր հեքիաթն այդ վառ իրեն պատմեր,
Ոսկեժպիտ չոպան մըն էր ծաղիկ տուեր
Ասկէ հազար տարի առաջ պէկի դստեր...:





Գ

1

Վկայ է Աստուած, նախանձը պիտի
Սրտին մէջ մարդոց սիրոյ հետ ապրի.
Միշտ պիտի ծլի սիրոյ ցորենի
Դաշտին մէջ փխրուն՝ որոմը չարի:

Մտածումներու անտառին մէջ սեւ,
Այն օրէն ի վեր, երբ դուստրը պէկի
Մոռցեր էր ծարաւն ու վազեր էր սար,
Աղուեսախորհուրդ ծերուկ վեգիլի
Կասկածի ծիլը դարձեր էր մեծ ծառ:

Նախանձն հոգւոյն մէջ գորշ օձ մը դաժան,
Նենգ մարդ մըն էր ան՝ վաթսուն տարեկան.
Զծնող, խաբեբայ, կեղծիքով սնած,
Քանի՛ զհիղացի մահուամբ էր պատժած:

Հարուստ էր այն յոյժ, պէկն իրեն նուէր
Դեռ անցեալ տարի, զիւղ մըն էր տուեր:
Ոսկին ու դաւը երկու եղբայրներ,
Անոր սրտին մէջ տուն էին շիներ:

Պարկեշտութիւնը թոյլ հովիւ մըն էր,
Որ հօտն իր կեանքին չէր կրնար վարել:
Առիծ էր դաժան աղքատներուն մօտ,
Պէկերուն առջեւ՝ աղուէս մը կեղտոտ:





2

Տարի մը կ'ընէր, Գախը լերան տէր
Օմար պէկն անոր հարիր էգ ոչխար,
Երկու հարիր այծ տալ խոստացեր էր,
Չքնաղ Ֆատիլէն եթէ նագիրան՝
Արիֆ պէկը տար իրեն կնութեան:

Երկար մտածեց, թէ ինչպէ՞ս արդեօք,
Ֆատիլէն կրնար բաժնել Համոյէն...:
«Աշուն է արդէն», - ըսաւ ինքն իրեն,
Գնաց պէկին մօտ, աջ ձեռքը կուրծքին,
ճարտար խօսքերով զինքը համոզեց,
Թէ ձմեռն արդէն յաղթեր էր գարնան,
Պէտք էր դաշտ տարուեր ոչխարն անպայման:





Դ

1

Ամբողջ ձմեռ դաշտը մնաց չոպան Համոն,
Ամբողջ ձմեռ խոհերուն մութ երկինքներէն
Սրտին վրայ իջաւ միայն տխրութեան ձիւն...:
Կարօտ ունէր, հոգին կ'այրէր, կ'ուզէր նորէն
Ծաղիկ-ծաղիկ Ֆատիլէի շրթունքներէն
Կարօտավառ համբոյր քաղել առատօրէն.

-Կը կանչեմ, ո՞ւր ես;
Սիրոյ հուր ես,
Այրեր եմ ծարաւ,
Դուն պաղ ջուր ես:

2

Եկան գարնան անոյշ օրեր, բոյրով լեցուն,
Իրենց շուրթին հազար յասմիկ, հազար համբոյր,
Նուէր բերին կարօտավառ հովի տղուն:





3

Ժպիտ եղաւ, եղաւ ծիծաղ արեւն ահա
Սաման սարի ապառաժեայ այտերուն վրայ.
Լեռնալանջը կաքաւներու զուարթ կանչէն
Քունէն ելաւ, հագաւ լոյսէ վառ պատմունճան,
Չեռքով ըրաւ, հովիւները կանչեց իրեն:

Չոպան Համոն հօտը քշեց դէպի սարեր
Սիրտը խնդուն, շուրթներուն երգ զուարթագին.
Ծառերն հովին բերան եղան, բարեւ բերին
Ֆատիլէէն ու ականջին փսփսացին.

- Եարդ այսօր, լօ տղայ,
Ալ ու արուան շոր հագած,
Վերջալոյսին սար պիտ գայ:

Ո՛հ, ի՛նչ լաւ է, կեանքն իրաւ է, սերն երազ չէ,
Եարս անգին, վարդեր ձեռքին, մայրամուտին
Լորիկի պէս կաքաւելէն սար պիտի գայ,
Եւ աչքերուն ջինջ աղբիւրէն սափոր մը սեր,
Փարչ մը երազ պիտի թափէ սրտիս վրայ:





4

Մինչեւ կէսօր ծառի մը տակ հովիւ Համոն
Սրինգ նուագեց ու երագեց աչքերով բաց.
Ոչխարներն երբ մակաղեցան՝ երգեց անոնց
Անրջային սիրոյ հեքիաթն իր հոգիին,
Յետոյ գնաց երանգ-երանգ ծաղիկ քաղեց,
Եղնկաչեայ եարին համար փունջեր կապեց.

-Արե՛ւ, տուն գնա,
Բարով քուն գնա,
Եարս սար պիտ գայ,
Քեզմէ կ'ամչնայ:

5

Կամար կապած բարակ մէջքին ոսկեօղակ,
Մարմաշ հագուստ, վրան զարդեր՝ յակինթ, գմբուխտ,
Ճակտին կապած Հնտուստանի եագմա կապոյտ,
Դէմքին վրայ սիւմպիւլ ծիծաղ, մեխակ ժպիտ
Աչքերուն մէջ, եարը եկաւ շորորալէն:
Հովիւ Համոն, մատներովն իր շրթունքներուն,
Քաղեց վարդերն Ֆատիլէի համբոյրներուն:

-Համբոյր կայ, որ պաղ ջուր է,
Համբոյր կայ՝ այրող հուր է,
Եարի անոյշ համբոյրը՝
Եարի շուրթին աղբիւր է:





6

Նաւակ մըն է սէրը փոքրիկ, ծովը՝ կեանքն է,
Հագա՛ր երնէկ բոլոր անոնց, որոնք կրնան
Թիավարել, հասնիլ ծովափն երջանկութեան...:

Սէրն երբեմն անզօր եղնիկ մ'է անտառի,
Նախանձը սեւ՝ նենգ որսորդ մը արիւնարբու,
Որուն կապարճը նետով լի է մահացու:

Ծեր վեգիլը թուփի մ'ետեւ թակարդ լարած,
Գաղտագողի, համբուրիլը տեսաւ անոնց,
Ու հեռացաւ, իժի մը պէս անձայն սողաց:

7

Երազ տեսաւ դուստրը պէկին այդ նոյն գիշեր...
Աստղերն աշխոյժ, երկնքի բիլ ու անյարիր
Գաշտերուն մէջ կը շրջէին գերթ գառնուկներ:
Լուսնակն անոյշ կապոյտ լճի լանջին վրան,
Արծաթ խոփով լոյծ ակօսներ կը բանար լայն,
Ու կը ցանէր շողիկ-շողիկ լոյսի հունտեր:
Սարի վրայ եարը կ'երգէր, զինք կը կանչէր.

-Եա՛ր, հագեր ես ալ ու ալուան,
Կրծքիդ դրեր վարդ ու շուշան,





Սրտիդ իղձերն կարմրաթշիկ,
Սեւ աչքերուդ մէջ կը լողան:»

Սարի լանջին էր արդէն,
Խրճիթի մը մէջ սիրուն,
Շրջապատուած անհամար,
Ծաղիկներով գոյնզգոյն:

Եկաւ Համոն երգելով,
Պաղ ջուր բերաւ սափորով,
Խմեց, սիրտը հովացաւ
Եարին անոյշ համբոյրով:

Բայց կարճ տեւեց, շուտով անցաւ երազն անգին,
Անտառներէն խժոռադէմ ամպեր ելան,
Վիշապային յօնքերն իրենց թուխ՝ կիտեցին,
Ձեռքերնուն մէջ հսկայ աղեղ, կայծակ նետեր,
Աչքերնուն շանթ՝ կռիւ տուին մահասարսուտ...
Բռնկեցաւ երկինքն անհուն ու ամպագոռ,
Կաղնիներու հազարամեայ ինչպէս անտառ:
Երազին մէջ իշխանուհին սարսափահար
Ճշաց ուժգին ու արթնցաւ: Կէս գիշեր էր,
Պայծառ երկինք՝ արծաթահեր աստղերով բիր...
Լուսնակն աղուոր, պատուհանէն ներս կը հոսէր,
Հեքիաթավառ՝ ինչպէս հրաշք լոյսի աղբիւր:





Ե

1

- Ապրած մնաս, պէկ, արեւշատութեան
Մաղթանք է բերած ծառադ անարժան:
- Բարի օր, վեգիլ, նորութիւններ կան,
Թէ կ'ուզես հինը պատմել ձեռով նոր:
- Հինն է մայրը միշտ նոր երեւոյթի,
Չարութիւններով կեանքն է միշտ յղի...
Փորձուած մարդ ես, հարց մ'ունիմք քեզի,
Հաւատք կ'ընծայե՞ս արդեօք երազի:

Լրջացաւ պէկը, յօնքերը կիտեց.
- Երազն հայելին է միշտ գալիքի:
-Այս գիշեր տխուր, վատ երազ տեսայ.
Քունի մէջ էր ողջ պալատդ անդորր,
Լուսինը կու լար սարերուն վրայ:
Հովիտ , Համոն, սիրոյ երգ կ'երգէր
Եւ Սաման սարէն կ'իջներ դէպի գիւղ.
Քեօշքէն ներս մտաւ ուրախ, աներկիւղ,
Գնաց սենեակը քու չքնաղ դատեր.
Կարծես երկնքէն աստղ մ'իջած ըլլար,
- Ո՛հ, ինչպէ՞ս պատմեմ, սիրտս կը դողայ,
Պարման աղջիկդ շուրթները դրաւ
Չոպան Համոյի շուրթներուն վրայ...
Ու երկարօրէն մնացին արբած.





Սաստիկ յուզումէն լուսինը յանկարծ
Խեղդամահ եղաւ սարի գագաթին,
Աստղերն երեսնուն սեւ քօղ ծածկեցին,
Որպէսզի պէկի աղջիկը հուրի,
Չտեսնեն պառկած գրկին մէջ ճորտի...:

Կատղեցաւ պէկը, կանգնեցաւ ոտքի,
Արիւն ժայթքեցաւ աչքէն ահարկու:

-Ղամաս կը տեսնե՞ս,- գոռաց վեգիլին,-
Միայն մէկ հարուած, եւ մինչեւ անոր
Սիրտը թունաւոր ես կ'ընեմ երկու,
Կը փորեմ աչքերն, որ պոյը չինար
Յաւետ չտեսնէ դատերն իմ չքնաղ...:
Ձիդ թամբէ իսկոյն, գնա Սաման սար,
Այդ լակոտը նենգ, այստեղ բեր իսկոյն:





Լսեց Ֆատիլէն դրան ետեւէն,
Լսեց ամէն բան ու դողաց ահէն,
Վազեց պէկին մօտ, ինկաւ ոտքերուն.
- Բայց երազ է, հայր, երազ է տեսեր...
Երազիս մէջ ես, դեռ երէկ գիշեր
Թագուիի դարձայ ադամանդազգեստ...
Մեր գիւղի ակէն՝ ոսկի կը հոսեր...
Մին երազ էր, հայր, ծուխի պէս երազ:
- Կրնայ, աղջիկս, դեռ դուն շատ փոքր ես,
Օր մ'ալ երազը ըլլալ իրական,
Աղքատին սիրտը նենգ է յաւիտեան:
Հովիւ շատ ունինք, ինչո՞ւ վախսն այսպէս,
Ինչո՞ւ դատրիկս, մնայ սրտիս մէջ.
Ճորտերէս շուն մ'ալ թող պակաս ըլլայ,
Նետի մը գինը չ'արժեր հինգ փարայ:

- Բարի ես դուն, հայր, աղբիւրը խղճիդ
Բիրեղի նման՝ մաքուր ու վճիտ.
Երդուէ քու դասեր, որ ձեռքդ պիտի
Չթաթխես անմեղ արեան Համոյի:

- Անիմաստ բան է խիղճ ու խղճմտանք,
Նենգ շինականի մտքի յերիւրանք.
Եթէ սաղմին մէջ չարը չխեղդես,
Շուտով կը մեծնայ ու կ'ըլլայ փորձանք:





3

Նախանձն ու սէրը դէմ դիմաց ելան,
Ինչպէս թշնամի երկու փեհլիվան՝
Կատաղի թափով երկար կռուեցան.
Բայց սէրը յաղթեց, սէրն եղաւ յասմիկ,
Նախանձը մնաց՝ անարմատ ծաղիկ...:

4

Ուսին եափունջի, ձեռքին գաւազան,
Կանգնեցաւ Համոն պէկին դէմ դաժան,
Որուն նայուածքը քարբի մը նման
Սողաց իր բոյնէն ու փաթթուեցաւ
Չոպան տղայի աչքերուն անձայն.
-Ի՞նչ կ'ընես, Համոյ, գիշերով եթէ
Անօթի գայլ մը հօտէդ ներս մտնէ
Ու փորձէ տանիլ ոչխար մը անկէ:

Համոն տեղեակ չէր, թէ պէկը ինչո՞ւ
Ուզեր էր տեսնել զինքը այս առտու.
Անմեղ գառի պէս ժպտեցաւ ուստի,
Խօսեցաւ հանդարտ, առանց շփոթի.

-Ապրած մնաս, պէկ, Աստուած քեզ կեանք տայ,
Հօտիդ մէջ մտնել ո՛չ մէկ գայլ կրնայ,
Նետս կը գամեն ճիշտ սրտին վրայ:





-Դո՛ւն ես, խաբեբայ, անպատիւ լակոտ,
Իմ հօտիս գայլը դուն ես, անամօթ,
Որ կ'ուզես դուստրս գողնալ սեւաչեայ...
Լաւ մտիկ ըրէ, վճիռս ահա,
Դաշոյնս կ'ընեն նետ սրտիդ վրայ,
Եթէ մինչեւ լոյս գլուխդ չառնես
Ու Սաման սարէն անդարձ չհեռնաս:

- Առաւօտ կանուխ ոտքերուս փոշին
Յաւէտ կը թօթուեն ես Սաման սարէն,
Բնաւեր թռչուն, կը թռչիմ հեռո՛ւն,
Շինականներու քրտինքով հարբած,
Քեզ նման անխիղճ, անհոգի մարդուն՝
Չեն ուտեր հացը, թէ որ տաս ոսկի.
Աղքատ գիղացիք գառներ են բարի,
Պէկերն են անոնց գայլերն անօթի:
Որպէս յիշատակ պահէ խօսքս վերջին,
Օղ ըրէ ոսկի, ականջէդ կախէ.
Սէրը եղնիկ չէ, որ նետով զարնես,
Ոչ ալ ճորտ՝ որուն արիւնը քամես.
Սէրը ծաղիկ մ'է, քնքուշ, անարատ,
Որ քու սրտիդ մէջ չէ դրած արմատ,
Աշուղ մըն է ծեր ու քաղցրաժպիտ,
Որ չ'երգեր բնաւ մարդերուն մօտ վատ...
Աշուղը մեռնի, երգը կը մնայ,
Սիրողը մեռնի, սէրը կը մնայ,
Միայն սէրն անմահ՝ այս երկրի վրայ:





5

Համոն դուրս եկաւ պէկի պալատէն,
Աչքերուն մէջ վառ վրէժի կրակ.
Մտածումներուն նժոյգներն վայրագ,
Կը վազվզէին հիմա քառատրոփ,
Սրտի դաշտերէն կ'անցնէին արագ,
Սիրոյ ալ վարդեր, իղձեր մանուշակ,
Կը ճգնուէին սմբակներուն տակ:
Սարերու տղուն, չոպան Համոյին
Վիշտը սալ մըն էր ու հոգին դարբին,
Որ ցասման մուրճով կը շինէր դաշոյն...:

6

Մինչեւ ուշ գիշեր ման եկաւ Համոն,
Անտառներու մէջ, սարերու լանջին.
Դեղնեցաւ կանաչ ծառն երջանկութեան,
Տժգոյն թերթերով աշունի նման:
Յիշեց մայրն հիւանդ, գնաց դէպի տուն,
Հրաժեշտ տալու բարի պառաւիհն,
Օրհնութիւնն անոր, խօսքերը վերջին՝
Ընելու վահան կեանքին դէմ դաժան:





7

Բայց աւա՛ղ ուշ էր, վերջին յոյսն յուշ էր.
Մտեր էր մայրը... բախտի դաշոյնն էր
Վշտոտ սիրտն անոր երկուքի բաժներ:
Աչքը դեռ բաց էր, հայելին յոյսին,
Որուն մէջ չըսուած, մեղմ, աղօթածայն,

Բարութեամբ յորդող բիւր խօսքեր կային:
Հեծեծեց Համոն, մոռցաւ ամէն բան,
Ցասման ձիւները իսկոյն հալեցան...:

Տունէն քիչ հեռու փորեց գերեզման
Ու մօր դիակը յանձնեց սեւ հողին.
Յետոյ ման եկաւ, քաղեց ծաղիկներ,
Թերթերնուն վրայ վճիտ արցունքներ,
Ու մօր շիրիմը զարդարեց անտէր:

Ծառերը տխուր ֆշշացին վշտոտ,
Լացին սրտագին աստղերն ու լուսին,
Ապա իջան վար լճին մէջ վճիտ՝
Արցունքն աչքերնուն ջուրով լուացին:





8

Առաւօտ կանուխ վեր ելաւ Համոն,
Գիտեց սարերը կարօտով անհուն,
Մանկութեան յուշերն եղան շրթունքներ,
Եւ Սաման սարի ծաղիկ այտերէն
Մնաս բարովի համբոյր քաղեցին.

-Հէ՛յ սարեր, պայծառ սարեր,
Իմ կանաչ, ծաղկոտ սարեր,
Մութ անյն է պատեր հոգիս,
Ինձ արեւ բերէք սարեր:

Սաման սար, կարօտս տուր,
Սէրս տուր, բարես տուր,
Սեւաչեայ եարս երբ գայ,
Գրկէ գայն, համբոյրս տուր...:





Զ

1

Գարնանային ոսկեմարմին երեկոյ մ'եր.
Չոպան Հանոն վերջին անգամ դիտեց տխուր
Սաման սարը ամպերու մէջ վարդափրփուր,
Խոհերն ամբողջ, զերդ տատրակներ, թռան հեռուն
Երամ-երամ, դէպ հորիզոնն իր յուշերուն.

- Լօ, լօ, լօ, լօ, որք եմ անտուն,
Լօ, լօ, լօ, լօ, սիրտս արին,
Սարի հաւքեր, բարի հաւքեր,
Եարը եարէն հեռացուցին:

- Լօ, լօ, լօ, լօ, կանաչ գարուն,
Սիրտս արին կակաչի գոյն,
Ծառ ու ծաղկունք վիշտս լացէք,
Պէկը խլեց եարս անգին...:

Սարերն իրենց ամպէ փաթթոցը քակեցին
Ու ամեհի, խոր ձորերուն մէջ նետեցին.
Հնչիւններու ու գոյներու համայնական
Շքեղութիւն մը ծնաւ վառ, անրջային.





-Առանց սիրոյ մեխակներուն,
Կեանքը դատարկ թաղար մըն է,
Առանց եարի տաք համբոյրին,
Կեանքը խամրած մեխակ մըն է:

Գաղտնի սերը շատ քաղցր է,
Վերջալոյսին սար եկուր, եար,
Ամէն լոպէն մէկ տարի է,
Չորի ճամբով շուտ եկուր, եար:

2

Դէմքին շղարշ երազի գոյն, աշխարհն հագին՝
Պատմուճան մը ունի աննիւթ, հեքիաթային:

Յիշեց Համոն, յիշեց անոյշ օրերը հին...

Դեռ երէկ էր, երբ կը բացուէր, Ֆատիլէի
Համբոյրը վարդ դողդողացող շրթունքներուն՝
Երբ մատներն իր կը լողային՝ գիշերի գոյն
Ալիքներուն մէջ մազերուն անոյշ եարին...
Դեռ երէկ էր, երբ կը յորդէր սիրտը խնդուն,
Սարերուն վրայ սիրոյ երգեր կ'երգէր եարին:





-Շուրթդ թաղար, համբոյրդ անոյշ
Վարդ, մանուշակ,
Սիրտդ նաւակ, վառ սէրդ թի,
Կեանքն է լճակ:

Հիմա սակայն, երբ լեռները հագնին ոսկի,
Եւ արեւը հորիզոնին վրայ բռնկի,
Թափառական հովի տղուն մտքի տխուր
Խրճիթէն ներս՝ սեւազգեստ վիշտը կու լայ լուռ:

-Սիրուն ծաղիկներ, եարիս շրթունքներ,
Համբոյր տուէք ինձ, բեղմնափոշին ձեր,
Ձեր բոյրը քաղցր բերէք ինձ նուէր,
Գարնան ծաղիկներ, եարիս շրթունքներ:

Այնպէս խորունկ երգեց Համոն ու տխրագին,
Որ ծառերը փշփշացին ու խոր լացին,
Հովերն անոյշ համբոյր տուին ու լուռ գացին,
Այրող սրտին պաղ ջուր տուին, հեռուն գացին:





Մէրն ալ արդէն արեւ մըն է,որ կը հալի
Ժամանակի օվկիանոսին մէջ ամեհի.
Յիշատակի ոսկի բիծեր լոկ կը մնան
Հորիզոնին վրայ տժգոյն՝ գիտակցութեան...
Կը կմնան հոն անոնք սառած այնքան ատեն,
Որքան ատեն մտքէն հեռու՝ զգացումի
Քարայրին մէջ մարդիկ մնան սրտին գերի...:

Քանի՛-քանի՛ սերունդ անցաւ նոյն ճամբայէն,
Դարեր եկան, դարեր անցան ինչպէս վայրկեան.
Որքան՛ մարդիկ իրենց մտքի սուզանաւով
Իջան խորունկ, սիրոյ ծովուն ընդերքներուն,
Հոն գտնելու երջանկութեան մարգարիտն հին...
Սակայն սէրը մնաց յաւէտ անլուծելի
Մեծ հանելուկ, փակ դռներով բերդ մը հսկայ:

Բայց ո՞ր է այս խորհուրդներու հին մեհեանին,
Սիրոյ բերդին անճառելի մեծ բանալին,
Ո՞ր պարիկն է դռներն անոր փակեր ամուր,
Անոնց ետեւն է բանտարկուեր, տխուր ու լուռ:





Է

1

Վաստակաբեկ ճամբորդներու նման անձայն,
Ապագայի մութ կիրճերէն օրերն եկան՝
Մախադներուն մէջ լեցուցած արցունք ու վիշտ,
Անցեալի խոր ձորերուն մէջ անյայտացան:

2

Նստաւ Համոն ամայագեղ սարի լանջին.
Աչեղ ծաղկունք նայուածքներովն իրենց աղու
Վերջալոյսի շառափները կը դիտէին:
Սարին վրայ ձայներ լսեց բոժոժներու.
Բոյրով արբշիռ զեփիւռին հետ՝ թախծահնչին
Սիրերգի մը ալիքները համբուրեցին
Վշտով առլեփ շրթունքները իր յուշերուն.

-Լէ տըլէ, լէ տըլէ եար,
Վարդ եմ քաղեր, արի տար,
Վանայ քաղաք հեռու չէ,
Աչքս ճամբիդ մնաց եար:





Ոչխարներու հօտ մ'էր փռուեր դարն ի վեր,
Գառնուկները ազահօրէն իրար բերնէ
Կը խլէին հիւթեղահամ բաղարջուկներ.
Երկու խոյեր կոտոշն իրենց ըրած աշտէ,
Գուպարի մը մէջ կատաղի՝ ճակատ-ճակտի
Կը զարնէին, մաքիներուն ի տես բարի:
Հովին հօտին, դեռ պատանի, սիրերզ կ'երգէր
Ու կը դիտէր հեռուն հորիզոնն ոսկեհեր:

4

- Բարեւ, պրրօ,- մօտենալով ըսաւ Համոն:
- Բարով եկար, հազար բարի. այս ուշ ժամուն
Ուրկէ՞ կու գաս եւ ո՞ր կ'երթաս, դարիպ եղբայր.
- Սաման սարն է վաթանս իմ, կու գամ անկէ,
Թէ ո՞ր կ'երթամ, պատասխանել շատ դժար է ... :
- Սաման սարէն Վանայ քաղաք պեզիրկաններ
Միայն կուգան, ան ալ տարին երկու անգամ.
Բայց կը տեսնեմ, ո՛չ ուղտ ունիս, ոչ ալ ջորի,
Ի՞նչ կ'որոնես լեռներուն մէջ այս ամայի:





- Ճակատագրի փոթորկաշունչ ծովուն վրայ
Թիավարողն ի՞նչ գիտնայ, թե ո՞ր կը տանին
Հարուածները այիքներուն նաւն իր կեանքին:
Պէկերն են տէրն այս աշխարհին, հովիւ եղբայր,
Իրաւագուրկ մարդն է նման տղու մը կոյր,
Որուն համար կեանքն է բաժակ, լոյսը՝ գինի,
Առանց գինոյ բաժակն արդեօք արժէք ունի՞,-
Ըսաւ Համոն ու նստեցաւ քարի մը վրայ,
Դիտեց գառներն անմեղունակ, «ախ» քաշեց խոր
Եւ կենսավէպն իր անարեւ պատմեց անոր:
Երբ աւարտեց, սրտի ամպերն արցունք դարձան
Վշտի հովէն, ու կաթեցան աչքերէն վար:

5

Արտասուքը տկարութեան է լոկ նշան,
Միտքը երկինք՝ կամքն է արեւն երջանկութեան,
Անոր լոյսը կրնայ միայն ցանել յոյսի
Պայծառ սերմեր ակօսներուն մէջ գալիքի:





6

Գիշերն ելաւ անտառներէն խաւարամած,
Ու շրջագգեստն անպարագիծ նետեց Վանայ
Անդորրաշունչ ու խոհական սարերուն վրայ:
Խարոյկին շուրջ, որուն բոցերն օճամարմին
Ոգիներու նման խելար կը դառնային
Զիրար գրկած՝ ճոճոացող կրակին մէջ,
Արեւախանձ ու կաշմբունն քիւրտ եւ հայ քաջ
Չոպան տղաք բոլորուեցան վաստակախոնջ:

Հեքիաթային այդ լեռներու կուրծքին վրայ,
Ուրկէ դարերն մրրկարշաւ գերթ ասպետներ,
Եկեր, անցեր են քառատրոփ, Աստուած գիտէ,
Ակնթարթի մը մէջ միայն, քանի անգամ,
Ամէն գիշեր, երբ հօտն յոգնած լուռ մակաղէր,
Յաղթաբազուկ հովիւ տղաքը լեռնական
Դաշխուրաններն իրենց սրտին կը լեցնէին
Հեքիաթներու յաւերժահոս աղբիւրներէն,
Կը խմէին, գերթ վարար գետ հին դարերէն
Հոսող անոնց իմաստութիւնն առատօրէն:





7

Հակոն, Հասոն, Մսթոն, Սարոն ու ծերունի
Աբո Ապտոն համոզեցին չոպան Համոն,
Որ իրենց հետ Վանայ սարին վրայ ապրի.

- Վախճան չունի օտարութեան փշոտ ճամբան,-
Խօսեցաւ ծեր Աբո Ապտոն, - ապրիր մեզ հետ,
Ըլլանք եղբայր թե՛ վշտի մէջ, թէ խնդութեան.
Եղբայրը՝ լոկ եղբօր կրնայ գտնել դարման:
- Ոսկի խօսք է, Աբո Ապտոյ,- ըսաւ Սարոն,-
Թէ որ չօգնէ հայ հովիւը քիւրտ չոպանին,
Չըլլայ թիկունք անիրաւուածն իր նմանին,
Մեզ պէս խեղճին պէկե՞րն հապա պիտի օգնեն:





Ը

1

Չմեռն անցաւ: Արեգակի տաք համբոյրէն
Արծաթաշող հալեցաւ ձիւնը լեռներուն:
Ալ ծաղիկներ Վանայ սարի այտը դալար
Համբուրեցին շրթունքներով կարօտավառ:
Հովիւներու գուարթ երգէն ու համերգէն
Բոժոժներու, սար ու դարեր խիւնդ յորդեցան...:

Սակայն Համոն մնաց տխուր, կարօտ եարին,
Սիայն անոր արեւատենչ սրտին վրայ
Վշտի ձիւնը մնաց անհալ՝ սառոյց հսկայ,
Ուրտեղ, աւա՛ղ, բարի շողերն ուրախութեան,
Ճառագայթներն աղօտ յոյսին բնաւ չհասան:

2

Եարին վրայ կը մտածէր օր մը նորէն.
Երբ կասկածի ամպ մը պատեց միտքն տարօրէն,
Սիրտը կարծես ըսաւ իրեն ծիծաղելէն.
- Յիմար տղայ, եարդ վաղուց մոռցած է քեզ.
Ժամանակը ակօսած է դաշտն յուշերուն
Խոփովն հատու, եւ նոր իղձեր, նոր երազներ
Այնտեղ հիմա բողբոջած են, կազմած ցօղուն:





«Կնոջ սիրտը պալատ մըն է,- մտածեց ան,-
Ուր անհամար փակ դռներով սենեակներ կան,
Որոնց մէջ լուռ, հազար իղձեր կը քնանան.
Ան սիրածին մէկ բանալին կու տայ միայն,
Իսկ միւսները՝ բոլոր անոնց, որոնք կու գան
Երկրպագել հմայքներուն իր անցաւոր».
Մթափեցաւ իր մտքերէն չոպան Համոն:
Գարնանային ծաղիկներու բոյրով օծուն
Ձեփիւռն անոյշ իր մատներով դէմքը շոյեց:
Դիտեց դիւրուած հեքիաթասքանչ բնութիւնն ան,
Ուր ամէն իր, ամէն մասնիկ գեղեցկութեան,
Անճառելի դաշնակութեան շղարշ մ'ունէր...:
Ականջ դրաւ կաքաւներուն կանչին
Ու կարկաչին գլգլացող աղբիւրներուն,
Որոնք հարբած սէգ լեռներուն ճերմակ գինով,
Ծիծաղելէն կը վազէին դէպ Վանայ ծով:

-Ոչ, խաբկանք չէ կեանքն այս հրաշք.
Հոն ամէն բան բոյր մը ունի յաւերժական...
Մութն ըստ ինքնեան գոյութիւն չէ, այլ լոկ պատրանք,
Կենսատու լոյսին բացակայութիւնն է ան,
Սէրը արեւ, կասկածը շուք մըն է միայն,
Սէրը բիլ ծով, իսկ կասկածը ճերմակ փրփուր,
Չոր ալիքներն ափ կը նետեն ջարդուփշուր:





Թ

1

Աշնանային ոսկեմարմին երեկոյ մ'եր,
Երբ անծանօթ ձիաւոր մը պատգամաբեր,
Փոշեյարոյց սար բարձրացաւ Վանի ճամբով,
Սանձահարեց ձին հեւասպառ Համոյին քով:

- Ամենագօր Օհան պէկը այս իրիկուն
Կ'ուզէ տեսնել Սաման Տաղցի հովիւ Համոն,-
Ըսաւ կտրուկ եւ սրարշաւ վերադարձաւ:

2

Օհան պէկը արհունարբու հայ իշխան մ'եր,
Որուն անունն Աղթամարէն մինչեւ Բաղէշ,
Դեռ մինչեւ Մուշ ու Մանազկերտ սարսափ կ'ազդէր:
Քանի անգամ Եփրատն անցեր, մինչեւ Խնուս,
Մինչեւ Կարին յարձակեր էր ու աւերեր,
Իր ոտքերուն տակ ապալեր ըրեր դաշտեր:
Փոխվրէժը չէր ուշանար. աւատապետ,
Իշխան ու խան, մութ գիշերով կու գային Վան,
Յանկարծակի կը քշէին ձի ու ոչխար,
Կը տանէին իրենց գաւառն որպէս աւար,
Խեղճ գիւղացին մէջտեղ ոտքի կոխան կ'ըլլար:





3

Հովիւները ոչխարն երբ որ սար հանեցին,
Չոպան Համոն յայտնեց անոնց Օհան պէկին
Ձինք տեսնելու ցանկութիւնը այս ուշ ժամուն.

- Օր մ'ալ այսպէս նստած էի դալար լանջին
Սաման սարի, մտամոլոր, երբ եկան զիս,
Յանկարծակի, Արիֆ պէկի առջեւ տարին:

- Անհոգ կեցիր,- ըսաւ Սարոն չարաճիճի,-
Օհան Պէկը դեռ հարսնացու աղջիկ չունի.
Մեր «Մեծ Գայլ»ը երկու բանի համար կ'ապրի,
Վարդաշրթունք պարման աղջիկ եւ բարկ գինի:

- Իսկ նուագէն,- ըսաւ Մսթոն,- շատ կ'ախորժի:

4

Երգ ու ծիծաղ, թմբուկի ձայն, նռան գինի,
Մեծ խնջոյք կայ պալատին մէջ Օհան պէկի.
Արաբիայէն վարձակ կիներ կը կաքաւեն.
Անոնց շարժումը կը հալի մարմարամած
Յատակին վրայ. անոնց բումբերը կիսաբաց
Ու վարդաթոյր, իշխաններուն գինեխելար՝
Տենչանքներուն կը բոցեն ջահը կրքավառ:





Պորտապարը կը վերջանայ հուռաներու
Եւ ծափերու տարափին տակ խլացուցիչ.
Տենչը կ'եռայ աչքերու մէջ, սրտերու մէջ:
Մատռուակներ նռան գինով կը լեցնեն
Դաշխուրաններն արծաթագօծ, ու կը խմեն
Ներկաները հզոր պէկի կենացն անգին:
Կոյր աշուղ մը փառքի ուրախ երգ մը կ'երգէ.

- Պէկ անաչառ, իշխան արդար,
Կտրուկ մնայ թող սուրդ յար,
Մեր սարերուն տէր ու պաշտպան,
Մնաս յաւերժ դուն անսասան:

5

Նիզակակիր մանկլաիկը մեծ իշխանին
Իմաց տուաւ, թէ եկած է Սաման Տաղցին.

- Օր ու արեւ ու խնդութիւն մեծ իշխանին,
Արդարության, բարի գործի անոյշ գինին
Թող անպակաս մնայ յաւետ իր բաժակէն:





Օհան պէկը ոտքի ելաւ զարմացահար,
Կասկածանքով, կարծես մէկէն խաբուած ըլլար,
Ըսաւ անոր. «Դո՞ւն ես Համոն սրնգահար,
Որուն անունն Սաման սարէն մինչեւ Սեւ ծով,
Համբաւն անոր՝ կը տարածուի հովի բերնով»:

- Վիշտն է մայրը մեղեդիիս, հզօր իշխան:

- Ինձ պատմած են պէզիրկաններն Սաման սարի,
Թէ կը քշես հօտդ պապակ մինչեւ գետափ,
Կը հանես սար հազար գլուխ կուշտ-կուռ ոչխար
Սրինգովդ, առանց կաթիլ մ'իսկ տալու ջուր:

- Կը փափաքի՞ մեծ իշխանն իր փորձել ծառան:

Ներկաները լիահագագ ծիծաղեցան,
Կտրուկ ձայնով առաջարկեց իշխան մը ծեր.

- Եթէ լաճն այս լոկ մաքի մը սրինգովն իր
Պահէ ծարաւ, պատուոյ խօսք է, իրեն հարիւր
Արարական պիսակաւոր ոչխար կու տամ:

- Իսկ ես ընտիր ձի մը իրեն կ'ընեն նուէր,-
Միւս անկիւնէն պոռաց ուրիշ մը գինեհար:





Ոտից ցգլուխ Օհան պէկը չափեց Համոն,
Չեռքը դրաւ անոր ուսին. «Կը կարծէի,
Որ ծերունի աշուղ մըն էր Սաման Տաղի
Հովի Համոն,- սուր հեզնանքով խօսեցաւ ան
Ու դէմքին վրայ կնճիռ ունէր իմաստութեան,-
Իսկ քու բերնէդ թարմ կաթի հոտ կու գայ միայն:

Ծաղրը պէկին ու քահ-քահը ներկաներուն,
Չոպան տղուն համբերութեան ա՛լ վերջ տուին.
- Մարդու խելքը գլխուն մէջ է, հզօր իշխան,
Ոչ տարիքին,- գուսպ յուզումով ըսաւ Համոն,-
Իսկ ինչ որ կը վերաբերի իմ նուագին,
Պատրաստ եմ ես գրաւը ձեր ընդունելու,
Հազար ոչխար կը տանիմ հոր իմ սրինգով,
Կը պահեմ ժամ մ'ամբողջ ծարաւ գուռերուն քով:

- Եթէ շահիս գրան այս մեծ, պալատիս մէջ
Կը պահեմ քեզ որպէս գուսան. ապա թէ ոչ,
Ահա կ'երդնում պատուոյս վրայ,- ահեղագոչ
Գոռաց պէկը,-տեղոյն վրայ քեզ կը սպանեն,
Ու մարմինդ ուրուրներուն նուէր կ'ընեն:





6

Հօտը հսկայ քշեց Համոն մտամոլոր...
Եթէ սրինգն իր յոյզերուն դաւաճանէր,
Եթէ աղբիւրն յանկարծ սառէր իր նուագին,
Չկարկաչէր ու չկանչէր ոչխարն իրեն,
Եթէ անգութ մտածումին մատները բիրտ
Կոտորտէին լարերը նուրբ սրտի քնարին...:

Կասկածներուն ցուրտ հովերէն վստահութեան
Կանաչ դաշտերն աշունի գոյն դեղին հագան...
Բայց ալ ուշ էր, սրտին սարը լի մշուշ էր:
Համոն դիմեց մաքիներուն պաղատագին,
Դիմեց անմեղ, բարի, ծարաւ գառնուկներուն.

-«Բարի գառներ, ես ջուր ունիմ,
Դուք ծարաւ էք, պաղ ջուր ունիմ,
Եօթնականի սրինգիս վրայ,
Բիւրեղի պէս աղբիւր ունիմ:





7

Աշնանային հիւանդագին միջօրէ մ'էր,
Կը հազային հիւծախտաւոր տժգոյն ծառեր.
Տերեւներու խշխշոցը գերթ շարական՝
Անտառին մէջ կը տարածէր մահուան գուժկան:

Գուռերուն մօտ, նենգախորհուրդ խան ու իշխան,
Ե՛ր հովիւներ կը սպասէին մեծ անձկութեամբ:

8

Վազվզեցին ոչխարները փոշեյարոյց
Դէպի ջրարբ, հորթուկներու նման ազահ,
Որոնք կուրթէն յետոյ կ'երթան ստինքներուն
Կաթը ծծել իրենց մօրը՝ շաքարահամ,
Բայց չհասած դեռ գուռերուն, անշարժացան...
Մեղեղի մը տարածուեցաւ անուշաձայն,
Կախարդական հնչիւններու գուլալ աղբիւր
Մը հոսեցաւ, որուն կարկաչն իբրեւ պաղ ջուր,
Ոչխարները ալիք-ալիք խմեցին լուռ,
Ապա եկան հովիւին շուրջ խոնուեցան:





Այդ նուագով, հոգիս վկայ, ով որ ըլլար,
Խան կամ իշխան, առանց գինոյ կը գինովնար...:

Բոցն հալեցաւ ատելոթյան Օհան պէկի
Աչքերուն մէջ, քմծիծաղը դէմքին վրայ
Պայծառացաւ, դարձաւ ժպիտ հիացումի:





Ժ

1

Չոպան Համոն եղաւ գուսանն Օհան պէկի,
Մասնակցեցաւ հազար ու մէկ խնջոյքներու,
Գովքը երգեց իր տաղերով բոցալեզու
Վարձակ կանանց կաթնամարմին ու գեղեցիկ,
Եւ վարդաշուրթ հարճերուն շէկ, ոսկեծամիկ,
Սեղան նստաւ պէկերու հետ, խմեց գինի,
Չորս տարուան մէջ ծիլն համբաւին դարձաւ կաղնի:

2

Երազ տեսաւ հովիւ Համոն, տխուր երազ.
Վանայ սարին վրայ սրինգ կը նուագէր,
Եարը եկաւ աչքերուն մէջ հազար մուրազ,
Երազին մէջ եարը եկաւ երազաչեայ,
Ձեռքին ունէր թօշնած վարդեր, գլխուն վրայ՝
Սուգի եագմա. «Ֆատիլէն եմ, կը յիշե՞ս զիս,
Քամբախտ եարդ եմ, զոր թողուցիր անմխիթար,
Որուն միայն արցունք տուիր ու հեռացար:
Ջուրն աչքերուս չորցաւ ընդմիշտ. օրերն եկան
Իրենց պապակն յագեցուցին անոր ակէն,
Ու հեռացան վշտերուս մութ ճամբաներէն:





Յոյսիս վարդերը թօշնեցան թաղարին մէջ
Տարիներու. միայն ծիլ մը մնաց կանաչ,
Ծիլ մը դալար, որուն ամէն արեւծագին
Ջուր կու տամ ես սպասումիս ակնադբիրէն...
Սիրոյ ծիլն է այդ անթառամ, որուն վրայ
Հին յուշերէս ջինջ ցօղեր կան աղամանդեայ»:

3

Եօթն անգամ նոյն երազը կրկնուեցաւ,
Եօթն անգամ Համոն ուզեց սիրով անբաւ
Գրկել եարը, շուրթը դնել անոր շուրթին
Կարօտակէզ, ու լեցնել թասը դատարկ
Իր մուրագին, ընպէլ սրտի կարմիր գինին...
Բայց Ֆատիլէն եղնկավազ փախաւ արագ:

Վերջին անգամ հարսանիքի շորեր հագին
Եկաւ եարը, կուրծքին շարած քարեր անգին,
Գուսան Համոն էշխով վառուած երգեց եարին,





Ու մտածեց, գուցէ երգով իր սիրավառ
Արժանանայ անոր կրակ մէկ համբոյրին:

«Նազիրան եար,
Կաքաւաճեմ
Ֆատիլէ,
Շուրթիդ վրայ
Շաքարահամ
Համբոյր կայ:

Կարօտ եմ ես
Սեւ աչքերուդ,
Իմ անոյշ,
Սրտիս վրայ
Իջեր է մութ...
Ու մշուշ...»:

4

Սակայն եարը մնաց անշարժ, ըսաւ տխուր.
- Եթէ եզիթ տղամարդ ես եւ խօսքիդ տէր,
Եթէ սրտիդ մէջ ունիս դեռ պճեղ մը սէր,
Եթէ փառքիդ ու համբաւիդ ահեղ քամին
Չէ խաւարած սիրոյդ ոսկի ճրագը հին,
Եթէ ածուն քու յուշերուդ վարձակ կիներ
Խոփովն իրենց համբոյրներուն չեն հերկած դեռ,
Բաժակին մէջ սուրբ վրէժիդ, եթէ դաժան,
Արիւնաքամ իշխանն ու խան թոյն չեն դրած,





Անմիջապես կ'աշտանակես ձիդ սեւաբաշ,
Եարդ կու գաս Սաման սարէն կը փախցնես
Ու կը տիրես անոր սիրոյն՝ ինչպէս հերոս:

5

Հովիւ Համոն աղջամուղջին թամբեց իր ձին,
Առաւ նիզակ, նետ ու աղեղ, արաբական
Նժոյզն իր ժիր աշտանակեց, մրրկարշաւ
Ասպետ մ'ինչպէս դէպի Վանայ սար բարձրացաւ:
Հակոն, Հասոն, Սարոն, Սսթոն ու ծերունի
Աբօ Ապտոն ձիուն վայրագ խրնջիւնէն
Վեր ցատկեցին: Համոն հապճեպ անոնց պատմեց
Երազն իր սեւ, յետոյ, գրկեց զանոնք մէկ-մէկ,
Հրաժեշտ առաւ ընկերներէն իր սրտակից.

- Ահա կ'երթամ, սիրտս է ճամբան, իսկ բախտս՝ ձի,
Որ սրարշաւ ճակատագրիս զիս կը տանի...
Եթէ նաւակն իմ իղձերուն տոկաց ահեղ
Այլքներուն եւ հասցուց զիս սիրոյ կղզին,
Շուտով, նորէն կը համբուրուիմք կարօտագին.
Մինչեւ ամիս մ'սպասեցէք, եթէ չեկայ,
Ոչխարներս բաժնեցէք, հալալ ըլլայ:

- Աստուած օրինէ ճամբադ, Համոյ, եւ քեզ ոյժ տայ,
Մորազներուդ դաշտին վրայ երջանկութեան
Կարմիր վարդեր, սիրոյ շուշաններ թող բանայ:
Գնա, տղաս, որպէս մարտիկ աներկեւան,
Վերադարձիր՝ հերոսի մը պէս յաղթական,-
Ըսաւ ծերուկ Աբօ Ապտոն հօր մը նման:





ԺԱ

1

Վերջալոյսի ոսկի բոցը Սաման սարի
Սէգ կատարին փոշիացաւ գերթ շէկ նոխիր,
Հորիզոնը վրէժի գոյն հազաւ կարմիր:
Տակաւ աստղերն անամպ երկնքի այտերուն վրայ
Դարձան ժպիտ, դարձան ծիծաղ, ոսկենկար:

2

Պատուհանին առջեւ կանգնած անրջախոհ
Պէկի դուստրը դիտեց տխուր սարերը վեհ,
Հեքիաթային հսկաներու պէս լայնալանջ
Ու վիթխարի: Միտքը թռաւ, գաղթող ինչպէս
Վայրի կռունկ, դէպի սարի գագաթը վէս.
Բացաւ շրթերն իր հոգիին, կարօտի ծով,
Ծծեց կախարդ հին օրերուն համբոյրը գով.
Բայց երբ ուրախ ճիչեր հասան ականջներուն,
Մտածումի անձաներուն մէջ դրին բոյն
Յուսալքման բուերը գորշ, մահահանգոյն.
Իսկ երագներն երբեմնի վառ, վարդանկար,
Մղձավանջի սեւ շապիկներ հազան բոլոր.





Երջանկութեան ոսկեփետուր պլպուլն աղուոր,
Որ ամէն օր, վերջալոյսին, հին օրերուն,
Մրտի ծառին վրայ կու գար երգեր երգել,
Անյուսութեան ուրուրները տարին անդարձ:

Քանի՛ գարուն, քանի՛ աշուն աչքը մնաց
Եարի դարձին, քանի՛-քանի՛ կռունկներու
Հետ խօսեցաւ, ցաւը պատմեց սարի հովին,
Կարկաչահոս աղբիւրներէն համբոյր խմեց,
Համբոյր դրաւ անոնց շուրթին, որ զայն տանին
Պանդուխտ եարին, սարի չոպան թուխ Համոյին:

Հիմա անցեալն իրեն երազ լոկ կը թուեր.
Կեանքը կիզիչ անապատ մ'եր, իսկ ինք՝ ճամբորդ
Անովասիս աւագուտին մէջ անյարիր.
Որուն տանող ճամբուն վրայ, հովիւ մը թուխ,
Բաժակ մ'համբոյրով թրջեր էր շուրթն իր տոչոր,
Հոգիին մէջ կրակ թափեր ու հեռացեր:





3

Անուրջներու մէջ թերեւս շատ թափառէր,
Գուսաններուն եթէ ուրախ երգը չգար,
Մահահնչիւն գոյժ մը ինչպէս, զինք խանգարել,
Պարողներու ուրախ ճիչը վագրի մ'հանգոյն
Արիւնարբու ժանիքներով չբզկտէր
Սաթ աչքերով անմեղ եղնիկն երազներուն:

4

-Գինի՛, գինի՛ լեցուցէք վառ, մատռուակներ,
Հարսնետորներ, ազնուական պէկ, աղաներ,
Բոլորդ մէկ փարչերը ձեր լիափրփուր
Օմար պէկի թանկ կենացը պարպէք ցմրուր.
Աստուած թող միշտ փեսին սուրը պահէ կտրուկ,
Սաման սարի ադամանդը չնաշխարհիկ,
Արիֆ պէկի դուստրը քաղցրիկ, միայն անոր
է արժանի: Թող հարսնիքն այս, անքակտելի
Դաշինք մ'ըլլայ, եղբայրութեան կապ մը ոսկի,
Տոհմերուն մէջ մեծահռչակ երկու պէկի,-
Ճառն աւարտեց վեգիլն ադուէս՝ կեղծիքով լի:





5

Փռշեթաթախ օտարական մ'ուշ գիշերով
Ձիէն իջաւ հովիւի մը խրճիթին քով
Վաստակաբեկ ու հեւասպառ: Կը վրնջէր
Արաբական նժոյգը սեւ եւ բերնին տաք,
Ճերմակ փրփուրն բաշին վրայ կը սրսկէր:

Ասպնջական ծեր հովիւը ներս հրամցուց
Յոգնած ճամբորդն այդ տարօրէն, իսկ Ֆիտանին,
Միակ դասերն պատուէր տուաւ, ձիուն դարման
Ու գարի տալ, բերել լաւաշ հաց ու պանիր:
Հովուի աղջիկը նախ բերաւ տաշտ մը լի ջուր,
Որպէս յարգանք, լուաց ոտքերն իրենց հիւրին,
Բերաւ ափսէն եղեգնահիւս, մէջը պանիր,
Փարչ մը պաղ թան ու կորեկ հաց դրաւ գետին:

Բայց չկերաւ հովիւ Համոն. մտիկ ըրաւ
Երգը հովին, որ թմբուկի ձայներն իբրեւ
Գոյժ՝ կը տանէր հանդիպակաց սէգ սարերուն...
Մթնեց հոգին, ձեռք մ'անձանօթ, յանկարծակի,
Ժանգոտ դաշոյնն իր մխրճեց աշուղ տղուն
Մոմի մը պէս պլպլացող յոյսի սրտին:





-Աբօ, դուն ալ ուրախ թմբկի ձայն կը լսե՞ս:
- Ղարիպ եղբայր, ճիշդ եօթն օր է, քառսուն սարէն,
Քառսուն ձորէն փեհիվաններ, սազանդարներ
Հաւաքուեր են, եկեր այստեղ. Արիֆ պէկն իր
Միակ աղջիկն աղաւնեսիրտ, հարս է տուեր
Յիսունը անց աղուէսի մը, Օմար պէկին:
Քառսուն անգամ քառսուն տակառ նռան գինին
Եօթն օրուան մէջ հարսնետրները խմեցին:

- Ձեր տիրուհին միթէ՞ ազնիւ հոգի ունի,
Որ կը գովես անոր սիրտը խօսքով ոսկի...

- Է՛յ բարեկամ, անցորդ եղբայր, աշխարհն այս սին
Չօրաւորին համար շքեղ քար մ'է անգին...
Աղքատ մարդու քրտինքը տաք՝ ունետրի
Խրախճանքին ու հարսանքին կարմիր գինի,
Չոր կը խմեն պէկն ու իշխանն առատօրէն:
Անիրաւուած խեղճ գիւղացին ամբողջ տարին
Կորեկ կ'ուտէ, իր հզօր տէրը որպէսզի
Ուտէ նաշիհ, հարճերուն հետ խմէ գինի,
Բայց Ֆատիլէն, թող արեւն իր Աստուած օրհնէ,
Խիղճը ոսկի, սիրտն անստգիտ աղամանդ մ'է:
Աւելի քան եօթ տարի է հիմա կարծեն,
Սեւաչեայ մեր իշխանուհին իր մատանին
Չոպան տղու մըն էր տուեր որպէս երդում:





Արիֆ պէկը զայն արտրեց մեր սարերէն,
Երջանկութիւնն իր աղջկան հինա միակ,
Օմար պէկին կը վաճառէ որպէս ապրանք:

Ծեր հովիւը չիբուխն իր սեւ վառեց հանդարտ,
Որուն ծուխը կապտածուէն, ինչպէս վշտոտ,
Յուսարեկ սրտէն բարձրացող խորունկ հառաչ,
Տարածուեցաւ գուլայ-գուլայ խրճիթին մէջ:

Դիտեց Համոն շղարշացող ծուխը բարակ...
Միրտն ալ կարծես ծխամորճ մ'էր, ուր բախտն անգութ
Լեցուցեր էր հին երազներն իր կապտաթոյր,
Իղձերն ամբողջ, յուշերը բիւ, գորս կը ծխեր
Ազահօրէն, յոյսն Համոյին կ'ընէր մոխիր:

- Չահէլ տղայ, թող մուրազիդ հունտը ոսկի
Ապագայի փխրուն հողին մէջ ուռճանայ,
Կաղնիանայ, երջանկութեան անուշահամ
Պտուղներով մինչեւ գետին թող կռանայ.
Բայց կը տեսնեն, որ անպատում վիշտ մ'անծանօթ
Սրտիդ ծառը կը կրծոտէ որպէս սեւ որդ:





Պատմեց Համոն ծերունիին բարեհամբոյր
Վէպն իր կեանքին՝ ողբերգութեան մը պէս տխուր.
- Դարդս մեծ է,- ըսաւ անոր,- անհուն վշտի
Քարայրին մէջ շղթայուած է սիրտս, քեռի,
Խորհուրդ մը տուր, ո՞րն է ճամբան վերջին յոյսի:

Համոյի սեւ աչքերուն մէջ կար խորունկ ցաւ...
Անձրեւէն ետք բացուող ինչպէս երկինք՝ տակաւ
Ծերունիին մոռալ դէմքը պայծառացաւ,
Դուռը բացաւ, դիտեց երկինքն աստեղավառ.
- Հոս մնա, եւ յուշերուդ սիրտը զովացուր,
Երագներուդ փարչը լեցուր աստղերէն վար
Հոսող լոյսի արծաթափայլ շողերով վառ,-
Ըսաւ ուրախ ու շտապով խրճիթ մտաւ,
Վերադարձաւ իր աղջկան ձեռքէն բռնած:
Քաղցրաժպիտ Ֆիտանն հագած էր **տավաթի**
Ֆիստանն իր ալ, ճակտին կապած ունէր սպիտակ
Սետաքս եագմա, վզէն կախած կապոյտ մանեակ:
- Ծակատագիրդ ձիաւոր մ'է արագ ու քաջ,
Եվ դուն հասիր նպատակիդ արեւծագէն առաջ,





Մերդ որսկան, բախտդ կապարճ մըն է ոսկի,
Որուն մէջ լոկ՝ վերջին նետդ ունիս յոյսի.
Եթէ սիրոյդ ծաղիկը դեռ չէ թառամած
Սրտի կապոյտ թաղարին մէջ Ֆատիլէի,
Նետն այդ վերջին, հոգիս վկայ, որ ճիշտ կ'երթայ
Ու կը գամուի նպատակիդ թիրախին վրայ...
Այս գիշեր իսկ կ'առնես որսդ արծիւի պէս
Անգղներու սեւ ճանկերէն, կ'աշտանակես
Չիդ սեւաբաշ, կը հեռանաս արագօրէն,
Մրրկարշաւ կ'երթաս դէպ Վան՝ Սաման սարէն,-
Ծերուկն ըսաւ հովի տղուն հօր մը նման:

7

Արիֆ պէկի պալատէն ներս երբոր մտան,
Ծեր աշուղ մը գովքը կ'երգէր Ֆատիլէի,
Իսկ պէկերու ռհմակն ամբողջ կ'ըմպէր գինի:
Թախիժ մ'իջաւ հոգիին վրայ հէք Համոյի,
Յոյզերն անոր տերեւաթափ ծառեր դարձան,
Որոնց վրայ սեւափետուր գերթ ազռաներ,
Մտածումները թառեցան երամ-երամ:





Աշուղներու գուարթ երգը մուրճի մը պէս
Սրտի սալին վրայ կ'իջներ արագ-արագ...
Սպասումի ու անձկութեան երկունքն արդեօք,
Որ սաստիկ կը գալարէր հոգին կարեվէր,
Ծիրանեգոյն յոյսի շող մը պիտի ծնէ՞ր...:

8

«Ունայնութիւն ունայնութեանց», պատգամն այս հին,
Վաղ դարերու կապոյտ նեկտարն իմաստութեան,
Վշտի թասով միշտ խմեր է աղանորդին,
Զերթ վտիտ մոմ շիջաներ է երբ շողն յոյսին:
Սակայն սիրող սիրտը կարօտ է համբոյրի,
Իմաստութեան հունտին համար աւիշ չունի.
Կեանքէն աւելի թանկ կ'արժէ մեխակ բուրող՝
Եարի շուրթէն քաղուած համբոյր մը սիրացօղ...:





Մօտեցաւ ան երգիչներուն ու բարեւեց,
Օհան պէկի գուսանն ըլլալն յայտնեց անոնց,
- Վանէն կու գամ, կ' երթամ Հալէպ բախտ փնտրելու:

- Ղարիպ գուսան, մեր մօտ կեցիր, թող միասին
Գովքը երգենք հօօր փեսին, հարսին ջահել,
Բախտիդ ճամբան վաղն առաւօտ կ'երթաս փնտրել:

Հովիւ Համոն ծալապատիկ երգիչներու
Խալիչային վրայ նստաւ. պատկառելի
Ծերունի մը ալեմօրուս, փարչ մը գինի
Տուաւ անոր, խմել կենացն առաջարկեց
Հարսին փերի, արեւագեղ դստեր պէկի,
Ու գովերգել չքնաղ տեսքը, սիրտը ոսկի:

Լեցուն փարչը վերցուց Համոն, երջանկութիւն
Մաղթեց հարսին եւ ցմրուր խմեց գինին:





10

Կասկածները անհետացան դանդաղօրէն,
Լոյսէն փախչող ինչպէս ստուեր սրտի ձորէն,
Հին յուշերը զերթ պլպուլներ կարօտավառ
Վերադարձան, յոյսի արեւ բերին պայծառ:

Շուրջն ամէն բան անրջացաւ, հեքիաթ դարձաւ...

.....
Սարի լանջին էր հիմա ան, ձեռքին վարդեր
Եկաւ եարը, համբոյր բերաւ պապակ շուրթին,
Հին սիրերգ մը, որով սիրտն էր եարին բացեր,
Երգեց Համոն, կարօտի ծով դարձաւ հոգին.

- Երագիս մէջ քեզ
Ուզեցի բռնել,
Աղջիկ տենչավառ,
Դուն յասմիկ դարձար...

11

Պատուհանէն ալիքն երգին գաղտագողի
Ներս սահեցաւ, շոյեց դէմքը Ֆատիլէի,
Ինչպէս եարի դողդոջ համբոյր՝ եղաւ պաղ ջուր,
Եւ զովացուց սիրտը ծարաւ, յոյսէն այրի:





Բիլ երկնքէն կարծես սիրոյ պարիկն իջաւ,
Եւ իր լոյսէ գաւազանով կախարդական,
Ֆատիլէի սիրտը աշուն՝ փոխեց գարնան...:

12

Մեր գրականության Բիւրականի աստղադիտարանում զետեղուած հեռադիտակը հայ բանաստեղծութեան երկնականարում յայտնաբերել է մի նոր աստղ, որի լոյսի առաջին ճառագայթներն արդէն հասել են գրասէր հասարակութեան: Այդ նոր աստղը պրն. Ասատուր Կիւզելեանն է:

Ա. Կիւզելեանը թէև արևմտահայ գրող է, բայց ամուսնացած լինելով հնդկահայուհու հետ՝ մտել է արևելահայ շրջանակի մէջ: Յեղինակի այս անդրանիկ ստեղծագործութիւնը գրուած է, շատ քիչ շեղումներով, զուտ արևմտահայ բարբառով:

Գրքոյկի լեզուն սահուն է, բառերը մեծամասնաբար մաքուր հայերէն են, իսկ հեղինակին բառապաշարը՝ մեծ է ու լիառատ: Բանաստեղծը կարծես խորշում է նոյն բառը կրկնել կամ գոհանալ առօրեայ գործածական արտահայտութիւններով: Դրա համար էլ նա թափանցել է հնադարեան փոշոտ գրքերի ծալքերը և այնտեղից դուրս բերել՝ զուտ հայկական բառապաշարի գանձերը: Եթէ գրքում տեղ են գտել օտար բառեր, ինչպիսիք են թաս, չոբան և այլն, դրանք արդէն վաղուց իւրացուած են և ազատօրէն գործ են ածուում մեր առօրեայ խօսակցական լեզուի և գրականութեան մէջ: Յեղինակի այս ստեղծագործութեամբ արևմտահայ գրականութիւնը հարստացել է մի նոր գոհարով և Ասատուր Կիւզելեանն իր անդրանիկ աշխատութեամբ իսկ նուաճել է իր պատուոյ տեղը մեր ազգային լաւագոյն հեղինակների շարքում: Յոյս ունենք, որ նա անելի եռանդուն աշխատանքով կը հարստացնի մեր գրականութիւնը:

Գրքոյկի ծաւալը փոքր է, բայց սիրավէպը ներկայացնելու հեղինակի ունակութիւնը կարելի է հանճարեղ որակել: Պոեման լի է ազնիւ զգացումներով ու մտքերով, որոնց նպատակն է հետագայ սերունդները ներշնչել պայծառ ապագայի, ազատութեան, արդարութեան և եղբայրութեան գաղափարներով: Յեղինակն իր կերտած տիպարների, հովիւ Յամոյի, ծերուկ Աբօ Ապտոյի և ուրիշների հոգեկան ազնւութիւնը, բարութիւնն ու արդարադատութիւնը գեղեցկօրէն հակադրում է բեգերի և աղաների շահամուլ ու անարդար վերաբերմունքին: Օրինակի համար, երբ Օմար բեգին է ներկայանում Յամոն բեգի հրամանով, մի կոյր աշուղ գովերգում էր նրան.





**-Պէկ անաչառ, իշխան արդար,
Կտրուկ մնայ թող սուրդ յար,
Մեր սարերուն տէր ու պաշտպան,
Մնաս յաւերժ դուն անասան:**

Երբ բէգը հարցնում է՝

**Դո՞ւն ես համբաւաւոր սրնգահար Յամոն,
Որուն անունն Սաման սարէն մինչև Սև ծով,
Համբաւն անոր կը տարածուի հովի բերնով:**

Համոն չի գովերգում նրան կոյր աշուղի օրինակով.

**Օր ու արև ու խնդութիւն մեծ իշխանին,
Արդարութեան, բարի գործի անոյշ գինին
Թող անպակաս մնայ յաւէտ իր բաժակէն:**

Յետոյ անելացնում է.

Վիշտն է մայրը մեղեդիիս, հզօր իշխան:

Ի՞նչ մեծ իմաստ, վեհանձնութիւն ու խորութիւն կայ այդ տողերում: Կատարեալ մի գոհար: Հեղինակը գեղեցիկ, յարմար ու հանճարեղ պատասխան է հիւսել իր հերոսի համար: Այսպիսի բանաստեղծական գոհարներ շատ կան գրքում: Պոեման վարպետօրէն կառուցուած մի թանկագին մանեակ է, որի գոհարները դուրս են թափուում իւրաքանչիւր էջից: Գրքոյկի թերութիւններն այնքան սակաւ են ու աննշան, որ դրանցով զբաղուելն անիմաստ է: Թերութիւնների խոշորագոյնն ու ամենակարևորը կարելի է համարել այն, որ հեղինակը շատ բարձր բանաստեղծական ոճով է գրել իր ստեղծագործութիւնը և դրա համար էլ, թերևս, մատչելի չէ բոլոր ընթերցողներին: Միւս կողմից՝ Համոյի համար գրած երգերը, թէև սրտաբուխ, հակիրճ ու իմաստալից, բայց շատ պարզ ու հասարակ կառոյց ունեն և յաճախ չեն համապատասխանում հեղինակի բանաստեղծական բարձր ոճին, մանաւանդ հերոսների բերանով արտասանուած հանճարեղ խօսքերին:





Վեպի պատմութիւնը քաղուած է քրտական ժողովրդական երգապատումներից, որոնք գալիս են դարերի խորքից:

Բանաստեղծի բացատրությամբ՝

**Ոսկեժպիտ չոպան մըն էր ծաղիկ տուեր,
հազար տարի առաջ, պեկի դստեր:**

Իսկ իր «Ձօն»-ուն գրում է՝ «հնադարեան ամբարդ» կամ «հին մեղեդին նոր սրինգով կը նուագեն»:

Ժողովրդական այս փոքրիկ հեքիաթից Ասատուր Կիւզելեանը հիւսել է մի գեղեցիկ ու սքանչելի բանաստեղծական ստեղծագործութիւն:

Չեղինակը գրքոյկի մէջ, բացի իր բուն բանաստեղծական վէպից, տուել է երեք ուրիշ հակիրճ ոտանաւորներ «Ձօն», «Մուտք» և «Նախերգանք» վերնագրերով:

Բանաստեղծն իր այս հակիրճ քերթուածով յստակօրէն բնութագրում է վէպի մէջ իր արծարծած վեհ գաղափարները, խոկումներն ու տենչերը, որով ընթերցողն անմիջապէս կարողանում է թափանցել բովանդակ վէպի էութեանն ու հոգեբանութեանը:

Չասկանալի է թե ինչպիսի սիրալիր ընդունելութիւն է գտնելու գիրքը մեր հայրենիքի ընթերցասէր հասարակութեան կողմից: Մեզանում այսօր ունենք զգալի քանակութեամբ քուրտ ժողովրդի գաւակներ, որոնք ոչ միայն անթերի խօսում ու կարդում են, այլ նաև ստեղծագործում՝ հայերէն լեզուով:

Բանաստեղծն իր ստեղծագործութիւնը չի ձօնում իշխաններին կամ բարեկաններին ըստ ընդունուած սովորութեան, այլ նա իր «երգի գինին» նուիրում է ազատատենչ սերունդներու խրախճանքին:

**Երգիս գինին կը նուիրեմ ազատատենչ
Սերունդներու խրախճանքին, որ միշտ անշէջ
Մնայ անոնց երջանկութեան ջահն արփավառ
Եւ նոր դարու երկնքին վրայ փայլի պայծառ:**





Հեղինակն ինչքան սիրում է արդարութիւնը, նոյն ուժգնութեամբ ատում է ստրկութիւնը: Նա համոզւած է, որ ստրկութեան հին ճահիճը կը չորանայ արդարաշող արևին տակ նորածագ:

Բանաստեղծը չի սիրում նաև ատելութիւնը: Նա ցանկանում է, որ ատելութեան «սեւ որոմը» վերածուի ոսկի ցորենի.

**Արդարութեան արևուն տակ թող նորածագ,
Յաւէտ չորնայ ճահիճը հին ստրկութեան,
Ատելութեան որոմը սև՝ ըլլայ ատոք
Փխրուն հողի կուրծքին վրայ ոսկի ցորեան:**

Ձօնում արտայայտած վեհ գաղափարների համար, հեղինակն անպայման կը ստանայ բարձր գնահատանքի մեր քուէն...

ՄՈՒՏՔ

Այս վեց քառեակներից բաղկացած ոտանաւորի մէջ, որը շատ բարձր բանաստեղծական ոճով է գրուած, հեղինակը երգում է իր կեանքի հին օրերը, իղծերը, յուշերն ու երազները: Անդրադառնալով իր կորցրած սիրոյն, բանաստեղծը գրում է.

**Ժամանակը մատներուն մէջ սէրս խեղդեց.
Բարակ ծուխի մը պէս կապոյտ յուշ մը մնաց
Հին օրերէն, ասի մը մոխիր մնաց միայն
Հոգիս մէջ հին խարոյկէն երջանկութեան:**

Վերջին երեք քառեակները նուիրուած են երազ կոյսերի, որոնց աչքերի հուրն է բանաստեղծը երգում Ֆատիլէի աչքերում, նրանց սրտերն է գետեղել բէգի աղջկայ ըմբոստ կուրծքի տակ, նրանք են եղել միայն լարն իր քնարին և վերջապէս՝ նրանց ձայնն է լսում ամէն տողի ընթերքներից: Հեղինակը խօսքն ուղղելով երազ կոյսերին՝ այսպէս է վերջացնում «Մուտք»-ը.

**Դուք երազ էք հիմայ սակայն, անուրջ միայն...
Թող այս երգս ըլլայ համբոյր մեխակաբոյր
Ձեր յուշերուն, ըլլայ արև՝ աշունի գոյն
Ձեր վիշտերուն՝ մշտադալար պայծառ գարուն:**





ՆԱԽԵՐԳԱՆՔ

Բանաստեղծի այս գեղեցիկ երեք քառեակները համբոյր ու բանաղթանք են՝ նուիրուած մեր սարերին, կերասաշուրթ մեր կոյսերին, մեր յոյսերին, ջահել տղաներին, սիրողների վարդ սրտերին, մեր դաշտերին, գիւղերին ու պատանի հովիւներին: Բանաստեղծը համոզուած է, որ սէրն ապրելու է յաւիտեան, և երբ նախանձի որդը մարդկանց սրտից հեռանայ, այդ ժամանակ նոյնիսկ «անմահ մահը» սիրոյ առաջ ծունկի է գալու և լացելու: Նախանձի մասին մի ուրիշ տեղ բանաստեղծն ասում է.

**Վկայ է Աստուած, նախանձը պիտի
Սրտին մէջ մարդոց սիրոյ հետ ապրի,
Միշտ պիտի ծլի սիրոյ ցորենի
Դաշտին մէջ փխրուն՝ որոմը չարի:**

Նախանձը աղետալի դեր է խաղում պոեմայում և վէպին տալիս ողբերգական վախճան:

ՀԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ

Վեպն սկսվում է Համոյի երիտասարդական կեանքի հենց առաջին օրերից, երբ նա փարթամակազմ ու գեղադէմ՝ հազիւ տասնութ տարեկան երիտասարդ էր, որին աղետալի վիշտը գցել էր լեռներն ու անտառները:

**Շատ փոքր էր նա տաս տարի առաջ,
Տղայ մը անհոգ դեռ ութ տարեկան,
Երբ հովիւները դաշոյն մը կուրծքին
Այդ սարի լանջէն հայրը տուն բերին,
Գիւղէն քիչ հեռու փոս մը փորեցին
Եւ սառած մարմինը յանձնեցին հողին:**

Այս քանի տողերով հեղինակը բաց է անում մեր առջև մի ամբողջ աշխարհ, ուր տիրում են դաժան բռնութիւնն ու անարդարութիւնը: Ինչէ՛ր չեն ասում այդ տողերը...:





Չեղինակը մի քանի բառերով գծում է պատկերը ժամանակուայ տիրող անարդարութեան, բեգերի միահեծան տիրապետութեան և իրաւագուրկ ժողովրդի տառապանքի: Բէգը սպանում է Յամոյի հորը: Իր գործած ոճիրի համար պատժուում է նա: Անշուշտ՝ ոչ: Պատժում է իրաւագուրկ գիւղացին, որին նոյնիսկ թոյլ չի տրուում սպանուածին թաղել գերեզմանատանը.

**Շատ լացավ մայրը, մագերը փետեց,
Յօր շիրմին վրայ տաք արցունք ցանեց,
Յամոյին ըսաւ, որ ալ հայր չունէր,
ԱրիՖ պէկը զինք որբուկ էր թողեր:**

Այս դէպքից յետոյ տասը տարի շարունակ Յամոն թափառում է լեռներում, անտառներում, վշտոտ երգերով դիմում է հաւքերին, սարերին ու իր ցաւը յայտնում նրանց: Մի օր էլ Յամոյին մօտենում է մի ձիաւոր, երբ հովիւը հագիւ աւարտել էր իր նուագը: Անծանօթը կախարդուել էր Յամոյի նուագով.

**-Ես ԱրիՖ պէկն եմ, ոչխարներ ունիմ,
Աստղերու թիւէն շատ-շատ աւելի,
Շքեղ պալատս եկուր քեզ տանիմ.
Եւ հովիւ կարգեմ հօտիս անուանի:**

Յամոյին արդէն յայտնի էր ԱրիՖ բէկի ով լինելը.

**ԱրիՖ բէկն անգութ երեսուն տարի
Գիւղացիներուն արիւնն էր քամեր,
Պալատ էր շինէր՝ քանդելով տուեր,
Անհամար այգի՝ խոփովն աղքատի,
Քրտինքն էր ցանէր շինականներու,
Անոնց մանգաղով ոսկի հնծելու:**

Սկզբունքով Յամոն պէտք է մերժեր բէգի առաջարկը: Ազնիւ մարդը հեռու պէտք է մնար նման անիրաւ ու դաժան մարդուց: Սկզբունքային այս հարցը վէպի կառուցուածքի համար շատ բարձր, բայց էական է: Չեղինակը մեծ վարպետութեամբ դուրս է գալիս այդ դժուար կացութիւնից իր հետագայ վեց տողերով:





**Համոն չէր ուզեր անոր հացն ուտել,
Բայց անգութ քաղցը՝ պէկ մ'ալ ինք դաժան,
Հուժկու մատներով կը խեղդէր տղան:
Սօր յոյսի ծառը բախտի արևէն,
Տարի մը կ'ըներ, չորցեր էր արդէն.
Հիւանդ պառկած էր խոլթիքէ Ֆիտան:**

Այս մի քանի տողով հեղինակն արդէն ամէն բան պարզում է և անտեղի աւելորդաբանութիւնների մէջ չի ընկնում, այլ ընթերցողին է թողնում յանգել եզրակացութեան:

Արդէն երկու տարի է, որ քսանամեայ գեղանի երիտասարդ Համոյի համբաւը որպէս երգիչ և սրնգահար տարածուել էր ամենուր, հասել՝ մինչեւ Սև ծով: Իր հօտից բացի, սարերի թռչուններն էլ հմայում էին Համոյի մեղեդիներով: Բազում պարմանի աղջիկներ ուզում էին տիրել Համոյի սիրոյն.

**Բայց չոպան տղան սրտին մէջ միայն
Ունէր մէկ աղբիւր, ծիւնի պէս մաքուր,
Ուրկէ մայրը լոկ՝ կու գար խմել ջուր:**

Հեղինակը թողնում է Համոյին սարերում ու կենդրոնանում հերոսուհու՝ Ֆատիլէի նկարագրի կերտման վրայ: Նա բանաստեղծական գեղեցիկ պատկերներով տող առ տող գծում է Ֆատիլէի կերպարը ազնւութեան, բարութեան ու սիրոյ գոյներով:

**ԱրիՖ պէկն ունէր մի սիրուն աղջիկ,
Սարերու կուրծքին բացուած մի յասմիկ,
Սև-սև աչքերով հուրի գեղեցիկ:**

**Նման չէր իր հօր Ֆատիլէն բարի,
Անոր սրտին մէջ ծառը նախանձի
Եւ ատելութեան՝ չունէր արմատներ:**

Ֆատիլէի նկարագիրը, որ հակապատկերն է հօր նկարագրին, մարդկային ազնիւ զգացումների, բարու, գեղեցկութեան, արդարութեան թելերով է հիւսված.





**Գթոտ սիրտ ունէր, կ'օգնէր բոլորին,
Աչքի լոյսն էր ան շինականներուն:**

Ինչպէս հետագայում պիտի տեսնենք, գիւղացիները միշտ պատրաստ էին օգնելու Ֆատիլէին, որ բացի բարի հոգի ունենալուց՝ ունէր նաև քաջ որսկանի համբաւ.

**Մեծ նշանառու, իբրև քաջ որսկան,
Ամբողջ գիւղին մէջ անուն ունէր ան:
Քանի պէկզատէ, քանի խան, իշխան,
Թագուն իղձերով կը դիտէին զայն:**

Վէպի կառոյցի համար կարևոր տողեր են սրանք: Հեղինակն ընդգծում է Ֆատիլէի մեծ նշանառու լինելու հանգամանքը, որը հերոսուհուն հնարավորութիւն է տալիս որսի գնալ սարերը և հանդիպել Համոյին: Ֆատիլէի վարպետ նշանառու լինելու հանգամանքը կատարում է մի ուրիշ կարևոր դեր: Նա նետահար սպանում է իրեն և Համոյին հալածողներից մէկին, փրկում հովիւների կեանքն ու յաջողացնում իրենց փախուստը:

Սիրավէպի կառոյցն օղակ առ օղակ շարունակւում է: Ֆատիլէն հօր վեգիլի հետ որսից տուն վերադարձին ուզում է աղբիւրից ջուր խմել, յանկարծ սրնգի ձայն է լսում և յափշտակուած մեղեդիից, մոռանում է ծարաւն ու վեգիլից ուզում է իմանալ նուագողի ինքնութիւնը.

**Ձեր հովիւ Համոն, մի ճորտի տղայ,
Որուն երգերէն հայրդ գինովցած,
Ձայն իր մեծ հօտին հովիւ է կարգած:
Հայրը անհրաւ, անարդար մարդ էր,
Խալիլ պէկ զանի սպանեց գաղտնի:**

Այստեղ հեղինակը մի քանի բառով բնութագրում է վեգիլի սրտում ամբարուած նախանձը, ատելութիւնը, որոնք մեծ դեր են կատարում այս ողբերգական սիրավէպի մէջ: Ֆատիլէն, որ վեգիլի մէջ տեսնում էր խորամանկ ու քծնող մարդուն, անտեսում է ասուած խօսքերը, հրահանգում նրան՝ գնալ տուն և ինք բարձրանում է սարն ի վեր, դէպի կախարդիչ մեղեդին:





Բանաստեղծը հետևեալ տողերով է նկարագրում այն պահը, երբ Ֆատիլէն առաջին անգամ տեսնում է Յամոյին.

**Պէկի աղջիկը մնաց քարացած...
Ինչ պոյ ու պուսաթ, ինչ տեսք ունէր ան...
Ժայռի մը վրայ նստած սա տղան
Բացուած ծաղիկ մ'էր, կ'ուզէր պոկել զայն:**

Առաջին անգամ Ֆատիլէն զգում է կարօտը սիրոյ համբոյրի և նրա սրտի ջահերը վառուում են տենչով: Այդ պահին Յամոն ետ է դառնում ու մնում է ապշած: Նրան թւում է՝ տեսնում է ճիշտ այն հուրին, որին տեսել էր դեռ երէկ գիշեր երազում:

**Երազիս մէջ քեզ
Ուզեցի բռնել,
Աղջիկ տենչավառ,
Դու յասմիկ դարձար:**

Երգում է Յամոն և այդ գովերգը հոսում է՝

**Յոսեցաւ երգը պաղ աղբիւրի պէս
Պէկի աղջկան ծով իղձերուն մէջ:
Ֆատիլէն քաղեց սէրն հովիւ տղուն,
Կարմիր վարդ դարձաւ սիրտն անոր կոկոն:**

Սա է լինում Յամոյի և Ֆատիլէի առաջին հանդիպումը: Բաժանուելուց առաջ, երբ աղջիկն իր մատանին է տալիս Յամոյին որպէս սիրոյ երդում, տղան յայտնում է, որ ի վիճակի չէ ոսկին ոսկով փոխանակելու: Ֆատիլէն հետևեալ բառերով հանգստացնում է նրան.

**Ոսկին փուճ է,
Սէրդ տուր ինձ,
Որպէս միակ
Սրտիս մանեակ:**





Վեպի հիմնական առանցքը թեև սերն է, բայց ինչպես նշեցինք, բանաստեղծը խօսում է նաև նախանձի ներկայացրած բացասական ոյժի մասին: Բանաստեղծը բուռն սիրուց առաջացած նախանձին չի ակնարկում, այլ խօսում է չար նախանձի մասին, որը բնակում է միայն վատ մարդկանց սրտերում, որոնցից մեկը ծերուկ վեգիլն է:

Բանաստեղծը վեգիլին կերպարը բնութագրում է հետևեալ բառերով.

**Նախանձն հոգւոյն մէջ գորշ օձ մը դաժան,
Նենգ մարդ մըն էր ան՝ վաթսուն տարեկան.
Քծնող, խաբեբայ, կեղծիքով սնած՝
Քանի գիւղացի մահուամբ էր պատժած:
Հարուստ էր ան յոյժ, պէկն իրեն նուէր
Դեռ անցեալ տարի գիւղ մըն էր տուեր:
Ոսկին ու դաւը երկու եղբայրներ՝
Անոր սրտի մէջ տուն էին շիներ:**

Գեղեցիկ նկարագրություն: Վեգիլը խորհրդանշում է ճիշտ այն մարդկանց, որոնք ավելի վատհոգի, նենգամիտ ու արիւնաբու են լինում, քան իրենց տերերը:

**Պարկեշտութիւնը թոյլ հովիւ մըն էր,
Որ հօտն իր կեանքին չէր կրնար վարել,
Առիժ էր դաժան՝ աղքատներուն մօտ,
Պէկերուն առջև՝ աղուէս մը կեղտոտ...:**

Հեղինակի պարկեշտութիւն հասկացողութիւնը բնութագրող քառեակը կատարեալ գոհար է: Նա դարձեալ իր մարգարտաշար խօսքերի խարազանով անխնաօրէն մտրակում, գանակոծում է բեգերին և իրենց նմաններին:

Յիրաւի, պարկեշտութիւնը միայն աղքատներից է պահանջւում:

Նոր իրադարձութիւններով հարստանում է պոեմայի պատմութիւնը ստեղծելով լարուածութիւն ընթերցողի մտքի մէջ:





Պարզուում է, որ Օմար բեկը վեգիլին խոստացել է երկու հարիւր այծ, պայմանաւ, որ նա համոզի Արիֆ բեգին, որ Ֆատիլէն իրեն կնութեան տայ: Նախանձը մի կողմից, իր ազահութեան ծարաւը գոհացնելու տենչը միւս կողմից պարտադրում են վեգիլին դիմել կտրուկ միջոցների: Սիրահարներն իրարից բաժանելու նպատակով, նա համուզում է բեգին Համոյին ձմեռուայ ամիսներին ոչխարների հետ ուղարկի դաշտերը: Ամբողջ ձմեռ Համոն հօտի հետ մնում է դաշտերում ու գարնան քշում է ոչխարներին դարձեալ դեպի սարերը: Ո՛հ, ինչ լաւ է, կեանքն իրաւ է, սերը երազ չէ, մտածում է հովիւը:

Բանաստեղծի համար սերը կեանքի ծովում մի նաւակ է: Նա երանի է տալիս բոլոր նրանց, ովքեր կարողանում են թիավարել և հասնել երջանկութեան ծովափը: Դժբախտաբար շատ քիչերին է յաջողում կեանքի դաժան պայմանների, չար մարդկանց ստեղծած խոչընդոտների պատճառով հասնել քառափում իրենց սպասող սիրակերտ հիւղակը:

**Սերն երբեմն անզօր եղնիկ մ'է անտառի,
Նախանձը սև՝ նենգ որսորդ մը արիւնարբու,
Որու կապարձը նետով լի է մահացու:
Ծեր վեգիլը թուփի մ'ետ թակարդ լարած,
Գաղտագողի համբուրուիլը տեսաւ անոնց
Ու հեռացաւ, իժի մը պէս անձայն սողաց:**

Նենգամիտ վեգիլը զգուշանում է իր տեսածը պատմել բեգին իբրև ականատես՝ վախենալով հետևանքներից: Երբ բեգը դիմում է վեգիլին՝

**Բարի օր, վեգիլ, նորութիւններ կա՞ն,
Թէ կ'ուզես հինը պատմել ձևով նոր:**

Չարամիտ վեգիլը քաջ իմանալով, որ բեգը հաւատում է երազի, պատասխանում է.

**Հինն է մայրը միշտ նոր երևոյթի,
Չարութիւններով կեանքն է միշտ յղի:**





**Փորձուած մարդ ես, հարց մ'ունիմ քեզի,
Հաւատք կ'ընծայե՞ս արդեօք երազի:**

Երբ բեզն ասում է, որ երազը գալիքի հայելին է, վեգիլն իսկոյն պատմում է իր հերիւրած երազի մասին, ըստ որում Համոն սարից իջնում է գիշերով, մտնում է Ֆատիլէի սենեակն ու համբուրում աղջկան: Կատաղած բեզը գոռում է.

**-Ղամաս կտեսնե՞ս,-գոռաց վեգիլին,-
Միայն մեկ հարուած և միչև անոր
Սիրտը թունաւոր ես կ'ընեն երկու,
Կը փորեն աչքերն, որ պոյը չինար,
Հաւէտ չտեսնէ դուստերն իմ չքնաղ:
Ձիդ թամբէ իսկոյն, գնա Սաման սար,
Այդ լակոտը նենգ այստեղ բեր իսկոյն:**

Ֆատիլէն, որ դրան ետևից լսել էր ամեն բան, վազում է ներս ու ընկնում բեզի ոտքերին: Աշխատում է համոզել հօրը, որ վեգիլը երազ է տեսել միայն: «Ես էլ, - ասում է նա, - երազումս թագուհի էի դարձել, բայց երբ զարթնեցի, երազս ցնդեց»:

Սիրավեպի այս բաժնում բանաստեղծը ցոյց է տալիս, թէ ինչպիսի անարդար ու նենգ միջոցներով ճորտատէրերը, բռնակալները, իշխաններն ու խաները զրկել են բանւոր ու գիւղացի դասակարգին նոյնիսկ տարրական իրաւունքներից.

**Հովիւ շատ ունիմ, ինչո՞ւ վախն այսպես,
Ինչո՞ւ դատրիկս, մնայ սրտիս մէջ,
Ճորտերէն շուն մ'ալ թող պակաս ըլլայ,
Նետի մը գինը չ'արժեր հինգ փարայ:**

Բանաստեղծի նպատակն է ընթերցողի սրտում ցասում սերմանել դէպի բռնակալ ու անարդար բեգերը, որոնց անմարդկային արարքներին ենթարկուել են բարի ու ազնիւ մարդիկ, երբ նրանք իրենց ճակտի հալալ քրտինքով փորձել են պահել իրենց գոյութիւնը:





Ֆատիլէն աղաչում ու պաղատում է, որ հայրը ձեռքերը չթաթախի Յամոյի անմեղ արեան մէջ, բեգի պատասխանը լինում է.

**Անհմաստ բան է խիղճ ու խղճմտանք,
Նենգ շինականի մտքի յերիւրանք,
Եթէ սաղմին մէջ չարը չխեղդես,
Շուտով կը մեծնայ ու կ'ըլլայ փորձանք:**

Բանաստեղծի վերոգրեալ քառեակում խտացրած միտքը ոչ միայն ներկայացնում է անցած գնացած մի շրջանի մտայնութիւն, այլ բնութագրում է նաև այսօր դեռ քաղաքակիրթ աշխարհում տեղի ունեցող բազմաթիւ իրավիճակներ և իրադարձութիւններ: Խիղճ ու խղճմտանք շինականներից ու հասարակ բանուորից է պահանջուում, բայց ոչ բեգից, խանից կամ իշխանից:

Վերջապես միայն սերն է յաղթահարում ատելությանը, երբ բեգը համաձայնում է չսպանել Յամոյին: Դրա փոխարէն պահանջում է, որ հովիւը մինչև արշալոյս հեռանայ Սաման սարից: Բեգի պատիժը, մանաւանդ երբ նկատի առնենք նրա բարկութեան չափը, համեմատաբար մեղմ է, իսկ Յամոյի պատասխանը, որ իր մէջ խտացնում է շինականների բողոքի ձայնը, ինչպէս նաև արդարութեան յաղթանակի հաւատքն ու սիրոյ անմահութեան համոզումը, շատ յանդուգն է:

**Որպէս յիշատակ պահէ խօսքս վերջին,
Օղ ըրէ ոսկի, ականջէդ կախէ.
Սէրը եղնիկ չէ, որ նետով զարնես,
Ոչ ալ ճորտ, որուն արիւնը քամես.**

**Սէրը ծաղիկ մ'է քնքուշ, անարատ,
Որ քու սրտիդ մէջ չէ դրած արմատ,
Աշուղ մըն է ծեր ու քաղցրաժպիտ,
Որ չերգեր բնաւ մարդերուն մօտ վատ.
Աշուղը մեռնի, երգը կը մնայ,
Սիրողը մեռնի, սէրը կը մնայ,
Միայն սէրն անմահ՝ այս երկրի վրայ:**





Բանաստեղծն այս երկխօսութեամբ մի կողմից դատապարտում է բեզերի բիրտ ու դաժան վերաբերմունքն աշխատաւոր դասակարգի հանդէպ, միւս կողմից՝ սիրավեպի հերոսին հագցընում է անարդարութեան դէմ պայքարող յանդուգն և անաչառ մարդու տարագ: Բանաստեղծը Համոյի տիպարի մէջ խտացրել է բոլոր ժամանակների անհրաւուած, մարդկային իրաւունքներից զրկուած ու բռնաբարուած ազնիւ մարդկանց պատկերը: Հեղինակը բանաստեղծական տպաւորիչ պատկերներով է գծել իր հերոսի դիմագիծը, բնութագրելով նրան որպէս անաչառ, անկեղծ, շինականի վշտերն իր հոգում ամբարած, գեղեցիկի սիրով հմայուած մի տղամարդ:

Համոն մինչև ուշ գիշեր սարալանջերում ու անտառներում ման գալուց յետոյ, որոշում է գնալ տուն և մօրը օրհնութիւնն ստանալ նախքան Սաման սարից հեռանալը: Նա մօրը գտնում է անկողնում մահացած: Անշնչացած մօր բարութեամբ լի բաց աչքերում երիտասարդ հովիւը տեսնում է գուրգուրանք ու սէր, օրհնութիւն ու բարեմաղթանք, որոնք հովիւ տղի սրտի ցասման ձիւները հալեցնում են: Համոն տնից քիչ հեռու փոս է փորում և մօր մարմինը յանձնում է հողին: Ծաղիկներ է հաւաքում ու դնում շիրմին, ապա լացում ու հեռանում:

Ինչքան մեծ ու խորն է լինում սէրը, նոյնքան մեծ ու խորն է լինում նրա կորուստի պատճառած վիշտը: Համոն աշխարհում ամենից շատ սիրում էր մօրն ու Ֆատիլէին, առաջինին կորցնում է յաւէտ, իսկ երկրորդից չար մարդիկ պարտադրում են, որ հեռանայ: Այս զգացական իրավիճակը ընթերցողի մէջ առաջացնում է և՛ սրտառուչ ու թախծոտ տրամադրութիւն, և՛ ցասում՝ անարդարութեան հեղինակների դէմ:

Սիրավեպի հերոսի կերպարը դրական նոր գիծերով է հարստանում, դառնում է աւելի մեղմ, քնքուշ ու ազնուահոգի: Հեղինակի նպատակն է եղել ընթերցողին սիրել տալ իր վեպի հերոսին: Եւ ոչ մի խոսք, որ բանաստեղծն յաջողւել է իր առաջադրութեան մէջ: Համոն Սաման սարին հրաժեշտ է տալիս ու բռնում օտարութեան ճամապարհը, միշտ երգելով ու յիշելով իր եարին:

Ասատուր Կիւզելեանը սիրոյ նուիրուած քառեակների շատ գեղեցիկ շարք ունի, որից ցանկանում են ընթերցողին ներկայացնել մի քանիսը:





Առանց սիրոյ մեխակներուն,
Կեանքը դատարկ թաղար մըն է,
Առանց եարի տաք համբոյրին,
Կեանքը խամրած մեխակ մըն է:

Գաղտնի սերը շատ քաղցր է,
Վերջալոյսին սար եկուր, եար,
Ամէն բոպէն մէկ տարի է,
Չորի ճամբով շուտ արի, եար:

Սերն ալ արդէն արև մըն է, որ կը հալի
Ժամանակի օվկիանոսին մէջ ամեհի.
Յիշատակի ոսկի բիծեր լոկ կը մնան
Հորիզոնին վրայ տժգոյն գիտակցութեան.
Կը մնան հոն անոնք սառած այնքան ատեն,
Որքան ատեն մտքէն հեռու, զգացումի
Քարայրին մէջ մարդիկ մնան սրտին գերի:

Հետևենք պոեմայի պատմության:

Համոն թափառելով հասնում է Վանայ սարերը, որտեղ իրեն ասպնջականութիւն են տալիս քուրդ ու հայ հովիւները: Այն հարցին, թէ որտեղից է գալիս, ուր է գնում, Համոն պատասխանում է.

Սաման սարն է վաթանս իմ, կու գամ անկէ,
Թէ ո՞ւր կ'երթամ՝ պատասխանել շատ դժուար է.

ճակատագրի փոթորկաշունչ ծովուն վրայ
Թիավարողն ի՞նչ իմանայ, թէ ո՞ւր կը տանին
Հարուածները ալիքներուն նաւն իր կեանքին:
Պէկերն են տէրն այս աշխարհին, հովիւ եղբայր,
Իրաւագուրկ մարդն է նման տղու մը կոյր,
Որուն համար կեանքն է բաժակ, լոյսը՝ գինի.
Առանց գինւոյ բաժակն արդեօք արժէք ունի՞:

Չոպանները մեծ գուրգուրանքով ընդունում են Համոյին:





Երբ գիշեր է լինում, բոլոր հովիւները՝ Զակոն, Զասոն, Սսթոն, Սարոն և ծերունի Աթո Ապտոն հաւաքւում ու յափշտակուած հին հեքիաթներ են լսում, պատմում իրենց կեանքից ու հետաքրքրութեամբ լսում՝ Զամոյին: Նրանք աշխատում են համոզել Զամոյին, որ մնայ իրենց հետ Վանայ սարերում: Ահա նրանց սրտառուչ խօսքերը.

**- Վախճան չունի օտարութեան փշոտ ճամբան,-
Խօսեցաւ ծեր Աթո Ապտոն,- ապրիր մեզ հետ,
Ըլլանք եղբայր թէ՛ վշտի մէջ, թէ՛ խնդութեան,
Եղբայրը լոկ եղբօր կրնայ գտնել դարման:**

**- Ոսկի խօսք է, Աթո Ապտոյ, - ըսաւ Սարոն,-
Թէ որ չօգնէ հայ հովիւը քիւրտ չոպանին,
Մեզ պէս խեղճին պէկե՞րն հապա պիտի օգնեն:**

և հետո՝

Վախճան չունի օտարութեան փշոտ ճամբան:

Այս հարցը մեզ , հայերիս համար ունեցել է ճակատագրական նշանակութիւն, յատկապէս Մեծ եղեռնից յետոյ: Բազմաչարչար հայ ժողովուրդը քանի՛ քանի երկրներում ապաստան է գտել, հայրենիքից հեռու՝ մնացել թափառական:

Բանաստեղծը կարծէք Սարոյի բերնով խօսում է հայ ժողովրդի անունից, անձնական վշտին տալով ազգային տարագ: Զեղինակը քիւրտ և հայ հովիւներին խորհրդանիշ է համարում դարերով անիրաւուած քիւրտ և հայ ժողովրդի: Զամոն ձմեռը չոպանների հետ անցկացնում է Վանայ սարերում:

Նա տխուր է, կարօտ եարին: Տառապում է նա երբեմն սիրոյ, երբեմն էլ կասկածանքի հոսանքում: Յաճախ գալիս են այն եզրակացութեան, որ Ֆատիլէն արդէն իսկ մոռացել է իրեն և յանձնուել ուրիշի: Գարնանային ծաղիկների բոյրից շուտով սթափուում է և պախարակում իրեն:

**Ոչ, խաբկանք չէ կեանքն այս հրաշք,
Չոն ամէն բան բոյր մը ունի յաւերժական.
Մութն ըստինքեան գոյութիւն չէ, այլ լոկ պատրանք,
Կենսատու լոյսին բացակայութիւնն է ան.**





**Սէրը արև՝ կասկածը շուք մըն է միայն,
Սէրը բիլ ծով՝ իսկ կասկածը ճերմակ փրփուր,
Ջոր ալիքներն ափ կը նետեն ջարդ ու փշուր:**

Վանայ սարերուն, որպէս երգիչ և սրնգահար, Յամոյի համբաւը տարածուում է ամէնուր: Աշնանային մի օր մի ծիաւոր մօտենում է Յամոյին ու յայտնում, որ Օհան բեգը ուզում է իրեն տեսնել պալատում:

Օհան բեգը վանեցի մի իշխան էր, որի անունը ահ ու սարսափ էր տարածել Աղթամարից մինչև Բաղէշ, Մուշ, Մանազկերտ, Խնուս, Կարին: Յարձակում կողոպտում, գիւղ ու ավան աներում էր նա: Շուտով սակայն, որպէս վրէժ հակառակորդ իշխան ու խան յարձակում էին ու կողոպտում Վանայ շրջանի գիւղերը: Մէջտեղում տուժողն ու տառապողը գիւղացին էր: Յամոն չոպան ընկերներին յայտնում է Օհան բեգի ցանկութիւնն ու ճանապարհ է ընկնում: Օհան բեգի պալատում մեծ խրախճանք է: Յամոն դիմում է բեգին հետևեալ բառերով.

**Օր ու արև ու խնդութիւն մեծ իշխանին,
Արդարութեան, բարի գործի անոյշ գինին
Թող անպակաս մնայ յաւետ իր բաժակէն:**

Բանաստեղծը առիթ չի փախցնում գովերգելու սիրոյ, արդարութեան ու բարի գործի գաղափարը, որը կազմում է սիրավէպի առանցքը:

Օհան բեգը Յամոյին ասում է, որ իրեն պատմել են սամանտաղցի հովիւի համբաւի մասին՝

**Ինձ պատմած են պեգիրկաններն Սաման սարի,
Թէ կը քշես հօտդ պապակ մինչև գետափ,
Կը հանես սար հազար գլուխ կուշտ-կուռ ոչխար
Սրինգովդ, առանց կաթիլ մ'իսկ տալու ջուր:**

Բոլորը ծաղրում են Յամոյին, որ զսպուած զայրոյթով հաստատում է պեգիրկանների ասածը: Օհան բեգը խոստանում է հովիւ Յամոյին պալատում պահել իբրև գուսան, եթե յաջողի իրագործիլ իր ասածը:





Համոն շահում է գրաւն ու դառնում Օհան բէգի պալատական գուսանը: Մասնակցում է նրա կազմակերպած բազմաթիւ խրախճանքներին: Գովերգում է վարձկան կանանց ու կարմրաշուրթ շէկ հարճերին: Գեղեցիկ կանայք փորձում են գրաւել Համոյի սիրտը, սակայն Համոն միայն իր եարի մասին է մտածում: Տարիներ շարունակ թէև Հանոն մնում է Օհան բէգի պալատական գուսանը, խաների ու իշխանների հետ նստում է սեղան, գովքը երգում սիրունների, վարձու կանանց ու հարճերի, սակայն մնում է միշտ հաւատարիմ Ֆատիլէի: Համոն երեք գիշեր շարունակ նոյն երազն է տեսնում, որ հիմնովին փոխում է Համոյի կենսագրութիւնը: Երագում Ֆատիլէն խօսում է իր հետ և ասում.

**Եթէ եգիթ տղամարդ ես և խօսքիդ տէր,
Եթէ սրտիդ մէջ ունիս դեռ պճեղ մը սէր,
Եթէ փառքիդ ու համբաւիդ ահեղ քամին
Չէ խաւարած սիրոյդ ոսկի ճրագը հին,
Եթէ ածուն քու յուշերուդ վարձակ կիներ
Խոփովն իրենց համբոյրներուն չեն հերկած դեռ,
Բաժակին մէջ սուրբ վրեժիդ, եթէ դաժան,
Արիւնաքամ իշխան ու խան չեն դրած թոյն,
Անմիջապէս կ'աշտանակես ձիդ սևաբաշ,
Եարդ կու գաս Սաման սարէն կը փախցնես
Ու կը տիրես անոր սիրոյն, ինչպէս հերոս...:**

Համոն, առանց հետևանքների մասին մտածելու, որոշում է վերադառնալ Սաման սար: Առաջին հերթին նա բարձրանում է Վանայ սարերը իր հովիւ ընկերներին հրաժեշտ տալու:

Ահա բանաստեղծական գեղեցիկ բառերով ու պատկերներով նկարագրուած այդ սրտառուչ տեսարանը՝

**Ահա կ'երթամ, սիրտս է ճամբան, իսկ բախտս ձի,
Որ սրարշաւ ճակատագրիս զիս կը տանի...
Եթէ նաւակն իմ իղձերուս տոկաց ահեղ
Ալիքներուն և հասցուց զիս սիրոյ կղզին,
Շուտով նորէն կը համբուրուիմք կարօտագին:**





**Մինչև ամիս մ'սպասեցեք, եթէ չեկայ,
Ոչխարներս բաժանուեցեք, հալալ ըլլայ...:**

Բանաստեղծը սիրավէպն այնպես է հիւսել, որ էջ առ էջ Համոյի կերպարն աւելի է գեղեցկանում ու հարստանում մարդկային ազնիւ երանգներով, որին իբրև հետևանք՝ ընթերցողն էլ աւելի է սիրում ու յարգում վէպի հերոսին: Նոյնքան սրտառուչ են Աբո Ապտոյի հրաժեշտի խօսքերը արտասանուած հովիւների անունից.

**Աստուծ օրինէ ճամբադ, Համոյ, և քեզ ոյժ տայ.
Մուրազներուդ դաշտին վրայ երջանկութեան
Կարմիր վարդեր, սիրոյ շուշաններ թող բանայ:
Գնա, տղաս, որպէս մարտիկ աներկեւան,
Վերադարձիր հերոսի մը պէս յաղթական,-
Ըսաւ ծերուկ Աբո Ապտոն հօր մը նման:**

Ամբողջ սիրավէպի տարածքին բանաստեղծական գեղեցիկ տողերով ընդգծուած է սիրոյ, եղբայրութեան, արդարութեան, ազնուութեան, հոգեկան անաղարտ զգացումների գաղափարը: Հեղինակը ընթերցողին նորից փոխադրում է Սաման սար: Ի՞նչ է տեղի ունենում Արիֆ բեգի տանը: Հարսանեկան մեծ խրախճանք է: Մատռուակները գինի են լցնում հարսնւորների, բեգերի, աղաների փարչերին և բոլորը խմում են Օմար բեգի կենացը:

Ֆատիլէն պատուհանի առջև կանգնած՝ տխուր, անրջախոհ, հանդիպակաց վեհ սարերին է նայում ու յիշում կարօտով հին օրերը, բայց խրախճանքի ուրախ ձայները հասնում են ականջին՝ բեգի դստեր վարդանկար երազները մղձավանջի սև շապիկներ են զգենում:

Համոն մտնում է մի անծանօթ, տարեց հովիւի տուն և հարցնում խրախճանքի մասին:

**- Ղարիբ եղբայր, ճիշտ եօթն օր է, քառսուն սարէն,
Քառսուն ձորէն, փեհլիվաններ, սազանդարներ
Հաւաքուեր են, եկեր այստեղ, Արիֆ պէկն իր
Միակ աղջիկն աղաւնասիրտ, հարս է տուեր
Յիսունը անց աղուէսի մը, Օմար պէկին:**





Ծեր հովիւը հիացունով է խօսում Ֆատիլէի մասին և չի թագնում ունեցած զգուանքը հանդէպ և՛ նրա հօր, և՛ Օմար պէկի: Պատմում է նաև այն մասին, որ եօթ տարի առաջ Ֆատիլէն, իբրև սիրոյ երդում, իր մատանին տուել էր մի չոպան տղի:

**ԱրիՖ պէկը զայն արքորեց մեր սարերէն.
Երջանկութիւնն իր աղջկան հիմա միակ,
Օմար պէկին կը վաճառէ որպէս ապրանք:**

Այստեղ բանաստեղծը քննադատում է այն մտայնութիւնը, ըստ որում մարդիկ զոհում էին իրենց ջահել ու գեղեցիկ դուստրերի երջանկութիւնը, նրանց պարտադրելով ամուսնանալ տարիքն առած վաւաշոտ ունեւորների հետ, թելադրուած էլ ավելի հարստութիւն դիզելու ագահութիւնից: Միաժամանակ բանաստեղծը նորից է անդրադառնում պոեմայի հիմնական թեմաներից մէկին, որ տիրող դասակարգի անարդար վերաբերմունքն է հանդէպ չքաւոր գիւղացուն: Համոն անծանոթ հովիւին յայտնում է իր ով լինելը և խօսում է Ֆատիլէին փախցնելու իր ծրագրի մասին: Ամենակարևոր հանգամանքը այս իրադրութեան մէջ Համոյի Սաման սարում գտնուելու իրողութիւնը Ֆատիլէի ականջին հասցնելու հարցն է: Ծեր հովիւն ուզում է Համոյին օգնել այդ հարցում և իր դստեր, քաղցրաժպիտ Ֆիտանի միջոցով լուր է հասցնում Ֆատիլէին: Համոն ու Ֆիտանը մտնում են պալատ ու մօտենում աշուղներին այն պահին, երբ նրանցից մէկը երգում էր գովքը Ֆատիլէի: Համոն բարևում է երգիչներին և յայտնում նրանց իր Օհան բեգի գուսանը լինելու հանգամանքը: Համոն նրանց ասում է, որ գալիս է Վանից ու գնում է Հալեպ՝ բախտ փնտրելու: Գուսանները խնդրում են Համոյից, որ մնայ գիշերն իրենց հետ.

**Ղարիբ եղբայր, մեր մօտ կեցիր, թող միասին
Գովքը երգենք հզօր փեսին, ջահել հարսին,
Բաղդիդ ճամբան վաղն առաւօտ կ'երթաս փնտրելու:**

Երգիչներն առաջարկում են, որ Համոն խմի հարսի կենացը ու գովերգի նրան:

**Երագիս մէջ քեզ
Ուզեցի բռնել,**





**Աղջիկ տենչավառ,
Դուն յասմիկ դարձար:**

Ֆատիլէն լուսամուտի առաջ կանգնած ապշահար լսում է երգը: Եհշտ այդ պահին՝

**Թուխ աղջիկ մը սենեակ մտաւ տասնութամեայ,
-Գիշերդ թող, իշխանուհի, բարի ըլլայ,
Հարսանիքի նուէր մ'ունիմ տալու քեզի,-
Բարեժպիտ Ֆիտանն ըսաւ խորհրդաւոր
Եւ մատանին մատնեմատին անցուց անոր:**

Ֆատիլէն իսկոյն ճանաչում է մատանին, որը նա տուել էր Համոյին իրենց առաջին հանդիպման ժամանակ: Ֆիտանը բացատրում է, որ Համոն պատրաստ է իր սիրած եարին ուրուրների ճապուռներից ազատել և տանել Վան: Ֆատիլէն համաձայնում է փախչել Համոյի հետ.

**-Գնա, ըստ, հովիւ Համոն թող պինդ թամբէ
Նժոյզն իր ժիր, առնէ աղեղ, նետ ու աշտէ,
Աքլորականչն երբ որ լսէ, ուրուրներէն
Որպէս արծիւ թող գայ փրկել իր աղաւնին:**

Աքլորականչին, ըստ պայմանաւորուածութեան, Համոն փախցնում է Ֆատիլէին, պալատում տիրում է իրարանցում: Դռնապանները գոռում են. «Տարի՛ն, տարի՛ն, հէ՛յ, օգնութիւն, հարսը տարին...»

Բանաստեղծը հետևյալ պատկերով է նկարագրում Համոյի ու Ֆատիլէի փախուստը:

**Լայանթիկունք ձիաւոր մը փոշեյարոյց,
Ինչպէս մրրիկ սուրաց արագ, ետին թողուց
Լոկ արծագանք սմբակներու տրոփներէն,
Ու մութին մէջ արծակուած նետի մը նման
Հանդիպակաց անտառին մէջ մխրձեցաւ:**





Բանաստեղծը Յամոյի և Ֆատիլէի յաջող փախուստը համառօտ ու հասկանալի կերպով է ներկայացրել: Յեղինակը երկարաբանութիւնների մէջ չի մտել և արուեստական խոչընդոտներ ստեղծելով սիրավէպը չի ծանրաբեռնել: Սիրահարների փախուստի տողերը առանձնայատուկ նրբութիւն են տալիս վէպին, Յամոյի և Ֆատիլէի փախստեան ամբողջ գործողութիւնը, բանաստեղծը մի քանի տողերով կարողացել է այնպէս տարազել, որն ընդգծում է նրա վիպասանական տաղանդը:

Փախստական սիրահարները սարերում հանդիպում են մի խումբ հովիւների: Խարոյկի շուրջ նստած հովիւներին Յամոն պատմում է իր կեանքի ամբողջ պատմութիւնը, որի աւարտին, ծերունի, ալեմօրուս մի հովիւ, որի ճակատին դաժան կեանքն ակօսել էր բազում կնճիռ ու աչքերում դրոշմել՝ վրէժի բոց, խրոխտ ձայնով ասում է.

**Յագար երագ ու բիւր իղձեր մենք այրեցինք,
Որ խարոյկը խրախճանքին միշտ ճարճատի
Աղաներուն ու պէկերուն արիւնարբու:
Գիշերն այս մութ հսկայ արգանդ մըն է յղի,
Ոչ ոք գիտէ թէ վաղն արդեօք ի՞նչ կը ծնի,
Քանզի անցեալն յուշ է կապոյտ, ապրում միայն,
Մշուշապատ խոհերու սար՝ մութ ապագան...
Այս գիշեր իսկ, լուսաբացէն դեռ շատ առաջ,
Աղուեսի պէս գաղտագողի անոնք կու գան:**

- Քեռի, - ըսաւ հովիւ մը վիթխարի,-
Մենք դուրս կու գանք, անահ վագրի նման մարտի:

- Գուպարին մէջ մեր բազուկներն կ'ընենք աշտէ,
Կուրծքերը մեր պողպատակուռ՝ վահան ձեզի,

- Մեր արիւնը եղբայրութեան կարմիր գինի,
Եթէ իյնանք պայքարին մէջ այդ կատաղի, -
Յերթով ըսին լեռնական հովիւներն արի:

Յովիւները գիտէին ,որ թէ վաղ թէ ուշ Օմար բեգն իր զինակիցներով փորձելու է սպանել Յամոյին: Նրանք որոշում են մահուան գնով պաշտպանել իրենց հիւրին:





Օմար բեգը հասնում է այն բացատրը, որտեղ մի ջահել տղայ դիմաւորում է նրան, իսկ միւս հովիւները դիրք են բռնում բեգի զինուորների դէմ:

**- Չոպան,- ըսաւ վիրաւոր վագրի մը նման
Մռնչալէն, - Յովիւ Յամոն ո՞ւր պահեցիր,-**

ասում է բեգն ու սպառնում նիզակը մխրճել հովիւի կրծքին, իսկ հովիւը խրոխտ ձայնով պատասխանում է.

**-Չոպան Յամոն ու Ֆատիլէն մեր հիւրերն են,-
Խրոխտ ձայնով ըսաւ հովիւն աներկէւան, -
Այս սարերուն վրայ, իշխան, նուիրական
Օրենք մը կայ, զոր հայրերը մեր իմաստուն,
Պապենական իբրև ժառանգ մեզ թողուցին.
Մենք չենք խառներ, եթէ նոյնիսկ թափի արիւն,
Եղբայրութեան բաժակի մէջ վատութեան թոյն:**

Յեղինակն այստեղ մեզ ընծայել է ազնուութեան շքեղ մի օրինակ: Իմանալով բեգերի առաջադրանքը, հովիւները կարող էին բացատ հաւաքուած բեգերին ու նրանց զինակիցներին մէկ առ մէկ նետահար սպաննել. բայց դրա փոխարեն նրանք մի ներկայացուցիչ են ուղարկում Օմար բեգին դիմաւորելու և նրան ասելու, որ պատրաստ են ամէն գնով պաշտպանել Յամոյին և Ֆատիլէին:

Օմար բեգը զայրացած հովիւի խօսքերից, բարձրացնում է իր նիզակն ու ուզում է սպանել բանբերին, երբ նոյն վայրկեանին Ֆատիլէն նետահարում է բեգին, որը շնչասպառ ընկնում է գետին: Սկսւում է ահեղ կռիւ:

Յովիւները նետահար սպանում են բեգի բոլոր հետևորդներին, բացի երկու հոգուց, որոնցից մէկը լինում է Օմար բեգի եղբայրը, իսկ միւսը՝ աղուէսախորհուրդ չար վեգիլը, որ թագնւում է Բաղեշ տանող ճանապարհի նեղ լեռնացքում, որտեղից պարտադիր անցնելու էին Յամոն և Ֆատիլէն: Մայրամուտին սիրահարները հասնում են նոյն լեռնացքը: Յամոն մի պահ կանգնում է լեռնացքում, նայում հպարտ սարերին ու երգում.

**Շողն արեւուն քեզ համբոյր,
Երազ ունիմ հազար, բիւր,**





**Եարս պիտի Վան տանիմ,
Յէ՛յ, հպարտ սար, ճամբայ տուր:**

Հագիւ երգն աւարտած՝ Համոն ձիուց ընկնում է ու գլորում
ահեղագոռ անդունդն ի վար: Վեգիլին յաջողուել էր նետահարել
նրան իր թագստոցից: Ֆատիլէն ի տես պատահած ողբերգու-
թեան, անձնասպան է լինում իրեն զգելով նոյն ձորը, որտեղ, մի
ժայռի վրայ, Համոյի անշունչ մարմինն էր հանգչում:

Բանաստեղծն իր պոեման աւարտում է հետևյալ քառեակով.

**Մութ-մութ ամպեր լուսնի դեմքին լաչակ եղան,
Սար ու անտառ հագան սուգի սև պատմութան,
Խաւարն ինչպէս դամբանաքար մ'հսկայական,
Ծածկեց ձորը, գերթ խորունկ, ցուրտ մի գերեզման:**

Կատարյալ մի Ջուլիետ...:

Վեպի վերջավորութիւնը շատ նման է Շեքսպիրի «Ռոմեո և Ջու-
լիետ» ողբերգութեան: Ինչպէս որ Ջուլիետը չի ցանկանում եարի
մահանալուց յետոյ ապրել, նոյնպէս էլ Ֆատիլէն որոշում է վերջ
տալ իր կեանքին Համոյի սպանութիւնից յետոյ: Ինչպէս Ջուլիետին
էին ամուսնացնում հակառակ իր կամքին, նոյնն անում էին Ֆատի-
լէի պարագային: Երկուսի սերն էլ անկեղծ էր ու գաղտնի և երկուսն
էլ նոյն բանն էին մտածում. «Առանց եարի կեանքը խորունկ ցաւ է
ու վիշտ»: Ինչ վերաբերում է Ռոմեոյի և Համոյի կերպարներին,
նրանք էլ ունեն հասարակած շատ գծեր: Երկուսն էլ գաղտնի սի-
րահարուած են և այդ պատճառով էլ՝ աքսորուած:

Համոն բացի անկեղծ ու խորունկ սիրող լինելուց՝ նաև մի քաջ
ասպետ է, որ չի վախենում թշնամու բանակից և արծիւի պէս ու-
րուրների ձեռքից փախցնում ու ազատում է եարին: Ընդհանուր
առմամբ Ասատուր Կիւզելեանի այս հակիրճ սիրավէպը գրուած է
գեղեցիկ ու պատկերաւոր բանաստեղծութեամբ: Պատմութիւնը
հետաքրքրական է, խօսքերը՝ իմաստալից, խորհրդածութիւննե-
րը՝ փիլիսոփայական: Սիրավէպը հարուստ է համամարդկային
գաղափարներով՝ ինչպիսիք են անաղարտ սէր, ազատութիւն, եղ-
բայրութիւն, արդարութիւն, դասակարգային հաւասարութիւն և
մարդկային իրաւունքների պաշտպանութիւն: Ես բանաստեղծին
ցանկանում եմ աւելի մեծ յաջողութիւններ: Թող լինի մեր ապագայ
Շէկսպիրիը, Գիոթէն կամ Շիլլերը:

Մանուկ 3. Փրեանց





ԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ

«ՉԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ»

Արտասահմանի մէջ, ներկայ պայմաններու տակ գիրք հրատարակել, կը նշանակէ նահատակուիլ...

Ներկայիս, երբ մարդուն առաջին և միակ մտահոգութիւնն է գլուխ պահել, իսկ գլուխ պահելէն վերջ ապրիլ՝ քիչ մը մարդու պէս, երկրորդական կը մնայ հոգեկան գեղեցկութիւններու ձգտելու մարմաջը: Իսկ անոնք, որոնք տակաւին կրնան վառ պահել արուեստին բոցը, այդպիսիները կրնան մեզ բաժնել առօրեայէն, սովորականէն, հասարակէն եւ ցոյց կու տան տարբեր աշխարհ մը:

Մեր մօտ ունինք Ասատուր Կիւզելեանի նոր լոյս ընծայած «ՉԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ» բանաստեղծութեան գիրքը:

Նախ ըսենք, թէ անկախ գրքին ունենալիք գրական արժէքէն, երբ նոր լոյս տեսած գիրք մը ունենանք, պահ մը կը տարուինք մտածելու, թէ մէկը ճգնած է, ժամանակ վատնած, արտասահմանի այս նեղ գրական պայմաններու տակ քաջութիւն է ունեցած գիրք մը հրատարակելու: Այս երեւոյթը արդէն քաջալերական է եւ հեղինակն ալ բնականաբար արժանի խրախուսանքի, եւ անոր նախածեռնական ոգին ալ շնորհաւորելի:

Երկրորդ՝ հեղինակը լոյս կ'ընծայէ զայն առանց մտահոգուելու, թէ ինչ ընդունելութիւն պիտի գտնէ. գրախօսող մը պիտի գնտուի՞. լա՞ւ պիտի արտայայտուին, թե՞ վատ:

Քննադատները ժլատ կ'ըլլան յաճախ եւ անոնց սուրն ալ կ'ըլլայ՝ կտրուկ:

Եթէ հեղինակը «բախտաւոր» էակ մըն է եւ իր «աստղն ալ փայլուն», քննադատութիւնը անոր հանդէպ անշուշտ կ'ըլլայ բարեացական: Չակառակ պարագային, տարուած աշխատանքները յօդս կը ցնդին...:

Չոս հարկ է, որ դիմանայ հեղինակը... քաջութիւնը ասկէ՛ է, որ կը սկսի: Պէտք չէ յուսահատի տրուած արդար կամ անարդար վճիռէն ու մնայ միշտ բարձր:

Քննադատ չեմ, ըրածս քննադատութիւն ալ չէ բնականաբար, բայց երանի՛ թէ ունենայինք ԻՐԱՒ քննադատ կամ քննադատական մարմին մը, որ յանձն առնէր արտասահմանի մէջ հրատարակուող գիրքերուն քննադատութիւնը եւ տար իր անաչառ վճիռը:





Դժբախտաբար, դեռ գոյութիւն չունի նման մարմին մը, կամ դէմք մը, որ մեր ըսածը իրականացնէր:

Անցնինք բովանդակութեան: Տեղ-տեղ արծակ բանաստեղծութեան դրոշմով, իսկ մեծ մասամբ՝ չափաւոր, հեքիաթային, սիրային կեանքի մը մշակումն է, զոր Կիւզելեան տուած է պոեմայի ձևով:

Պատկերները հարազատ են, հերոսները կենդանի եւ ընթերցողը կը կապուի անոնց: Սա արդէն որոշ յաջողութիւն մըն է: Կիւզելեանի գիրքը, որուն սեռը նախապէս մշակած են արդէն մեր բանաստեղծներէն ոմանք, ներշնչումը առած է անցեալէն: Հոն կայ սերը՝ բուռն, ատելութիւնը, նախանձը, վրէժը, բռնակալութիւնը, եւ անոր դէմ ցցուելու ոգին: Քանի մը մէջբերումներ՝ գաղափար մը տալու համար:

**Նախանձն ու սէրը դէմ դիմաց ելան,
Ինչպէս թշնամի երկու փեհլիվան,
Կատաղի թափով երկար կռուեցան,
Քայց սէրը յաղթեց, սէրն եղաւ յասմիկ,
Նախանձը մնաց անարմատ ծաղիկ:**

Կիւզելեան մեծապէս երգած է սէրը ու փառաբանած զայն իր այս գործով:

**Սէրը բիւ ծով, իսկ կասկածը ճերմակ փրփուր,
Ջոր ալիքներն ափ կը նետեն ջարդ ու փշուր:**

Իր այս գործով, Կիւզելեան կը յայտնուի որպէս բանաստեղծ.

**Արեւի վերջին շողերը հագած
Հովերը եկան համբոյրի նման
Հովիւ Համոյի շուրթերուն հպան:**

Այլ տեղ մը ան կ'ըսէ.

**Աշնանային հիւանդագին միջօրէ մ'էր,
Կը հազային հիւծախտաւոր տժգոյն ծառեր...**





Պատկեր մըն ալ.

**Արեւ, տուն գնա,
Բարով քուն գնա,
Եարս սար պիտ գայ,
Քեզմէ կ'ամչնայ:**

Լեզուն պարզ է, բարդութիւններ չկան, բայց երբեմն կը նշմարուին պզտիկ պղտորումներ, ինչպէս քար մը ջուրի հոսանքին դիմաց, որ կը շեղէ ընթացք:

Յաջողած փորձ մը կարելի է նկատել Ասատուր Կիւզելեանի «ՅԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ» գործը եւ կը մաղթենք նոր ներշնչումներ եւ յարատեւութեան ոգի, որպէսզի կարենայ անսայթաք ընթանալ հայ գրականութեան ճանապարհին:

**Շահանդուխտ
«Այգ», 2 հոկտեմբերի, 1960 թ.**





«ՍՓՅՈՒՌՔ», 1960 թ. հոկտեմբերի 15

ԳՐԱԴԱՏԱԿԱՆ

«ՀԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ»

Գրեց՝ Գեորգ Աճեմեան

Ասատուր Կիւզելեանի առաջին քերթողագիրքն է, որ կը յանձնուի լոյսին՝ բերելով իր հետ յայտնութեան մը բոլոր տուեալները: Արդարեւ, իր բանաստեղծութիւններուն չենք հանդիպած ցարդ մեր գրական հանդէսներուն մէջ, ուր ընդհանրապէս կը ծաղկին, եւ կամ՝ յաճախ կը խամրին մեր բանաստեղծները: Կը հետեւցնենք ուրեմն, թէ հեղինակը գիտցած է համբերել, զերծ մնալով ինքզինք տպուած տեսնելու շուտիկութենէն: Գործը չէ՝ տուժած այս յապաղումէն, այլ ընդհակառակը, թերեւս ալ օգտակար եղած է իրեն՝ իր արուեստը կատարելագործելու ճիգերուն մէջ:

Առանց վերապահութեան կրնանք ըսել, թէ բանաստեղծ մըն է Ասատուր Կիւզելեան: Բանաստեղծ մը՝ իսկական առումով, եւ ոչ թէ մէկը անոնցմէ, որոնք ոտանաւոր, չափածոյ տողեր կը մրոտեն: Իր տաղաչափութիւնը թերի է նոյնիսկ, եւ սակայն ներկայ է իր մէջ վաւերական բանաստեղծը, որ կրնայ ձերբազատուիլ հասարակէն, անմիջականօրէն տափակէն, եւ բարձրանալ՝ հոգեկան եւ իմացական բարձրութեան մը:

«Համոյ եւ Ֆատիլէ»-ն սիրավէպ մըն է, որ երկնուած է որպէս երկարաշունչ քերթուած, պոեմա, կամ՝ ինչ որ կ'ուզեք կոչել զայն: Նիւթը առնուած է քրտական կեանքէ, բնոյթով՝ ողբերգական (ինչպէս կ'ըլլան ժողովրդային սիրավէպերը ընդհանրապէս), իրագործումով՝ քնարերգական եւ մասամբ դիւցազներգական, ու խորքով՝ հարուստ: Ընկերային, դասակարգային բաժանումներու չարիքները, անոնց անարդարութիւնն ու աւատապետական դրութեան անհեթեթութիւնը կը կազմեն խորքը այս սիրավէպին, ուր լաւն ու բարին, գեղեցիկն ու ճշմարիտը կ'ըլլան ոտնակոխ՝ ընծայելով մեզի ողբերգութիւն մը, որ նոր չէ անշուշտ իր տեսակին մէջ: Բայց թարմ է շունչով, մանաւանդ երբ նկատի ունենանք այն պարագան, որ արեւմտահայերէնի մէջ չէ մշակուած պոեման:





Յանդգնութիւն է անշուշտ առնուած քայլը՝ անծի մը համար, որ նախքան բանաստեղծութիւնը իր աւելի պարզ ձեւերուն մէջ փորձելը, կը մշակէ երկարաշունչ քերթուածը: Բանաստեղծութեան այս սեռը արդարեւ, ունի իր փորձաքարերն ու խոչընդոտները, ուր նուազագոյն սայթաքումի մը պարագային, հեղինակը կրնայ խախտել ամբողջ գործին հաւասարակշռութիւնը: Որովհետեւ, երկարաշունչ քերթուածի մը երկունքը ենթակայ է յաճախ անբաղձալի ընկրկումներու, դանդաղութեան եւ կրկնութիւններու, երբ բանաստեղծը չկարենայ վառ պահել իր շունչին ջերմութիւնը, անընդմիջաբար, եւ առանց տկարութեան: Մուսան որովհետեւ, կը դաւաճանէ երբեմն դժբախտաբար, երբ քերթողը կլանուած է իր սեւ աշխատանքով, զլանալով իրեն ներշնչումի առաջին պահերու խանդավառութիւնը, հզօրութիւնն ու վերացումը:

Ասատուր Կիւզելեան յաջողած է սակայն մատչիլ ընդհանուր միջինի մը, անշէջ պահելով իր ապրումներուն ջերմութիւնը, տողերը համեմելով պատկերներով, զեղումներով, եւ բնութեան ու կենցաղի նուիրուած նկարագրութիւններով: Արդիւնքը՝ որպէս ամբողջութիւն, նուաճում մըն է արուեստի մարզին մէջ: Ներկայ է բառերու, գոյներու, պատկերներու, եւ անկեղծութեան համադրութենէն գոյացած ներդաշնակութիւնը, որ հեղինակին տողերը կը բարձրացնէ արուեստի մակարդակին, ընթերցողին ընծայելով գեղեցիկ վայելք մը: Այլ խօսքով՝ ներկայ է բանաստեղծութիւնը, որ կը յաջողի վարակել ընթերցողն ու վերացնել զայն:

Ըսինք՝ ներկայ է բանաստեղծութիւնը: Կը կրկնենք, որպէսզի աննկատ չանցնի մեր անոր ընծայած կարեւորութիւնը: Դժուար է սահմանել **բանաստեղծութիւն** բառը այս պարագային. որովհետեւ, տաղաչափեալ գրութեան մը մէջ ճշդելէ ետք բոլոր անհրաժեշտ նիւթերը, ու հաստատելէ ետք արուեստին վերաբերեալ ենթադրեալ օրէնքներու լրիւ եւ անթերի գործադրութիւնը, կրնանք տակաւին չգտնել անոր մէջ բանաստեղծութիւնը: Եւ ի՞նչ է բանաստեղծութիւնը այս պարագային, եթէ ոչ շունչը, հզօրութիւնը, խենթութիւնը՝ ներքին, հոգեկան պոռթկումներուն: Ասատուր Կիւզելեան այս իմաստով բանաստեղծ մըն է՝ էութեամբ, հոգիով: Ինչ փոյթ, որ չէ տիրապետած տակաւին իր արուեստին թեքնիք, մասնագիտական գաղտնիքներուն. վանկերուն թիւը թէւ միշտ ճիշդ՝ չափուած ու կշռուած, կը խախտին սակայն ոտքերը երբեմն, ինչպէս նաեւ՝ յանգերն ու երաժշտականութիւնը:





Անտեղի բառեր կամ ածականներ կը վիրաւորեն երբեմն մեր ականջները՝ ստեղծելով շփոթ, անորոշ հոգեվիճակներ: Բայց այս բոլորը կարելի է սրբագրել աշխատանքով եւ բժախնդրութեամբ՝ ձերբագատուելով լեզուական տաղաչափական արգելքներէն: Սակայն անհրաժեշտը, էականը՝ ներկայ է: Ճաշակ մը տալու համար, կը մէջբերենք:

**Հազա՛ր գարուն, հազա՛ր արեւ մեր սարերուն,
Մեր կոյսերուն կերասաշուրթ, կակաչի գոյն
Մեր յոյսերուն, ջահել տըղոց կաղնեմարմին,
Սիրողներու վարդ սիրտներուն, հազա՛ր գարուն:**

**Հազա՛ր համբոյր մեր դաշտերուն, մեր գիւղերուն,
Հազա՛ր սրինգ մեր պատանի հովիւներուն,
Հազա՛ր երազ անոնց երգին ու տաղերուն,
Հազա՛ր համբոյր անոնց պապակ շրթունքներուն:**

Նախերգանքի առաջին երկու տուներն են ասոնք, ուր առաջին առիթով մեր ուշադրութիւնը կը գրաւէ բանաստեղծին հարազատ մթնոլորտ մը ստեղծելու մտահոգութիւնը: Եւ կը յաջողի ան: Շատ պարզ, բայց հոգեխռով բառերով կը հիւսէ գովքը սարերուն եւ անոնց «կերասաշուրթ կոյսերուն» ու «տղոց կաղնեմարմին», դաշտերուն ու գիւղերուն ու «պատանի հովիւներուն»: Ու այս բոլորէն վեր՝ նախամարդու բարութիւնն է, որ կ'արձագանգէ բանաստեղծի տողերէն՝

Հազա՛ր գարուն, հազա՛ր արեւ մեր սարերուն,

Եւ կամ՝

Հազա՛ր համբոյր մեր դաշտերուն, մեր գիւղերուն:

Պարզ եւ առինքնող, բարի եւ խորապէս ջերմ՝ ինչպէս շինականին ու հովիւին հոգին: Չմոռնանք, որ Համոն հովիւ մըն է, որու ողբերգական սերն է, որ պիտի երգէ մեզի բանաստեղծը: Ու այս նախերգանքը կը յաջողի ստեղծել անհրաժեշտ մթնոլորտն ու տրամադրութիւնը, որովհետեւ պատկերները, երաժշտականութիւնը,





պարզութիւնն ու վարակիչ բարութիւնը՝ բանաստեղծի տողերուն, կը գրաւեն ընթերցողին սիրտը անմիջապէս: Նորընծայի մը համար տաղանդի երաշխիքն է այս՝ վստահաբար:

Շարունակելով մեր ընթերցանութիւնը, կ'առաջնորդուինք սիրոյ կածաններէն. նախ՝ Ֆատիլէն:

**Արծաթագգեստ որպէս լուսաստղ, սա սեւաչեայ
Յովի տղան ժպիտ-ժպիտ կը պըլպըլայ
Ֆատիլէի մտածումի երկնքին վրայ:**

Եւ ապա՝ Համոն.

**Իսկ Համոյի տենչանքները կակաչաթոյր,
Բոժոժաւոր գառներու պէս, պէկի դասեր
Համբոյրներու կածաններէն կը բարձրանան
Դէպի անոր սրտի սարը կախարդական...**

Ասատուր Կիւզելեան կը յաջողի վառ պահել իր տողերուն յուզականութիւնը՝ զանոնք համեմելով պատկերներով եւ խորհրդածութիւններով՝ ընծայելով ընթերցողին գեղեցիկ, ապրուած պահերու ըմբոշխնումը: Միեւնոյն թափով եւ անկեղծութեամբ ան կրնայ արտայայտել իր ցասումը չարին եւ անարդարութեան դէմ:

**Նախանձն հոգւոյն մէջ գորշ օձ մը դաժան,
Նենգ մարդ մըն էր ան՝ վաթսուն տարեկան.
Քծնող, խաբէբայ, կեղծիքով սնած,
Քանի գիւղացի մահուամբ էր պատժած:**

Չ'ուշանար տառապանքն ու յուսահատութիւնը. բաժանումը կը կրօ՛ժ երկու սիրահարներու մարմինն ու հոգին:

**Պատուհանին առջեւ կանգնած անրջախոհ
Պէկի դուստրը դիտեց տխուր սարերը վեհ,
Հեքիաթային հսկաներու պէս լայնալանջ
Ու վիթխարի: Միտքը թռաւ, գաղթող ինչպէս
Վայրի կռունկ, դէպի սարի գագաթը վէս.
Բացաւ շրթերն իր հոգիին, կարօտի ծով,
Ծծեց կախարդ հին օրերուն համբոյրը զով.**





**Բայց երբ ուրախ ճիչեր հասան ականջներուն,
Մտածումի անձաւներուն մէջ դրին բոյն
Յուսալքման բուերը գորշ, մահահանգոյն.
Իսկ երագներն երբեմնի վառ, վարդանկար,
Մղձավանջի սեւ շապիկներ հագան բոլոր.**

Այսպէս՝ կը շարունակուի պատմունը պոեմայի 77 էջերուն մէջ: Տաղաչափեալ տողերու մէջ հեղինակը վարպետի մը վարժութեամբ կը դնէ շարժում, գործողութիւն, եւ կը պատմէ իր սիրավէպը:

Արդիւնքը կը խանդավառէ մեզ, եւ իրաւունք կու տայ մեզի Ասատուր Կիւզելեանէն ականկալելու աւելին, աւելի կատարեալն ու գեղեցիկը: Արդարեւ, երբ ներկայ է տաղանդը, բանաստեղծութիւնը, երկրորդական դժուարութիւնները յաղթահարել հեշտ պետք է ըլլայ: Եւ Կիւզելեան՝ ունի տաղանդը: Պէտք է թօթափէ սակայն իր վրայէն ազդեցութիւնները, որ նմանօրինակ գործի մը պարագային կրնան անխուսափելի թուիլ. բայց, մեր կարծիքով, կարելի է ձերբազատուիլ անոնցմէ, եւ մատչիլ ինքնատիպութեան, որովհետեւ հեղինակին իրագործածը արեւմտահայ մեր բանաստեղծութեան այս մարզին մէջ անհերքելի խոստում մըն է: Ուրեմն՝ Կիւզելեան պէտք է (եւ կրնայ) թօթափէ ազդեցութիւնները, կատարելագործէ իր տաղաչափութիւնը, եւ մնաւանդ խուսափի արեւելահայ խոնարհումներու, հոլովումներու եւ յօդերու գործածութենէն, որոնք կը խոցեն իր տողերուն գեղեցկութիւնը: Արեւելահայերէնը կրնայ մեր ականջներուն աւելի երաժշտական հնչել եւ դիւրացնել տաղաչափութեան կիրարկումը. բայց կ'աղավաղէ մեր լեզուն, որ նոյնքան մը երաժշտական եւ գեղեցիկ է (երբ թափանցենք անոր գաղտնիքներուն), եւ աւելի ճկուն՝ որպէս արտայայտութեան միջոց: Անաղարտ պահենք արեւմտահայերէնը, երբ տակաւին կը գործածենք զայն արտասահմանի մէջ:

Եզրակացնելով, կ'ողջունենք միայն բանաստեղծ Ասատուր Կիւզելեանի մուտքը մեր գրականութեան անդաստասնէն ներս, իրմէ սպասելով նորանոր գործեր եւ նուաճումներ:





THE ARMENIAN MIRROR-SPECTATORBOOKS

November 26, 1960

Books

HAMO and FADILE, by Assadour Guzelian, in Armenian (printed by the Sevan Press, Beirut), published by the author, Calcutta, 1960, 77pp. \$1.00.

Mr. Guzelian is the capable young Armenian master at the Armenian College in Calcutta, who was previously at Antelias.

This ballad, Hamo and Fadile, is I believe, his first published work and proves a promising start to a literary career.

The tale is an adaptation from a Kurdish story, relating an unusual and sad love affair, which reflects Kurdish life and contains echoes from the ancient ballads recited by the gousans (minstrels).

Assadour Guzelian writes and speaks almost perfect Armenian, using the language to the greatest advantage, which unfortunately is not often done. It may be that it is more difficult in the Western dialect than in the eastern.

The booklet has a most attractively designed cover, which sets the mood of the tale. The text is printed clearly and neatly, except that the contents of each page are unnecessarily framed and thus give the impression of excessive decoration defeating its own subject.

Yedvard Gulbenkian





«ՀԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ»

Հնդկահայ հասարակական գործիչ ու մեր թերթի թղթակից Ասատուր Կյուզեյան լույս ընծայած է արևելյան թեմայով «Համոյ եւ Ֆատիլէ» վերտառությամբ քերթված մը, որ ունի պոեմական ռոմանթիք բովանդակություն մը:

Քնարաշունչ այս գրվածքը սրտահույզ պատմությունն է ողբերգական սիրո մը, որուն հերոսներն են Համո և Ֆատիլէ:

Դեռ փոքր հասակեն կորսնցնելով իր հայրը, Համոն կմնա որբ իր հիվանդ մոր կողքին ու կյանքի դաժան պայմանները կստիպեն զայն իբրև հովիվ ծառայության մտնելու բազմաթիվ ոչխարներու տեր Արիֆ պեկի մոտ:

Գրողը հետևյալ տողերով կբնորոշե մեծահարուստ Արիֆ պեկը.

**Արիֆ պեկն անգութ երեսուն տարի
Գյուղացիներու արյունն էր քամեր,
Պալատ էր շիներ՝ քանդելով տուներ,
Անհամար այգի՝ խոփովն աղքատի,
Քրտինքն էր ցաներ շինականներու,
Անոնց մանգաղով ոսկի հնձելու:**

Ու գարնանային օր մը պեկին աղջիկը՝ Ֆատիլէ, հոր փոխանորդին հետ միասին կմեկնի անտառ այծյամ որսալու: Հեռուեն աղջիկը կլսե սրինգի մը նվագը, կհափշակվի անով ու կվազե դեպի սարն ի վեր: Հովիվին հասակը, տեսքն ու նվագը հրապուրած են Ֆատիլեն, որ առաջին անգամ՝

Ձգաց կարոտը սիրո համբույրին:

Սերը ի մի կծուլե Համոյի և Ֆատիլէի ծաղկափթիթ սրտերը:

Սակայն ծեր ու չարամիտ փոխանորդը, որ աչք ուներ աղջկան վրա, կներկայանա պեկին ու կպատմե, թե երագին մէջ տեսած է անոր աղջկան պառկիլը ճորտի մը գրկին մէջ: Պեկը զայրացած, որ ճորտ մը հանդգնած է իր աղջկան սիրտը գրավել, կանչել կուտա հովիվ Համոն ու սպառնագին կհրամայե անոր հեռանալ Սաման սարեն:





Սիրո հուրը սրտին մեջ Համոն կհեռանա Սաման սարեն ու թափառելով լեռները՝ կհասնի Վանա սարին վրա սրտակից հովիվներու մոտ, որոնք կատեն շահագործող և անխիղճ պեկերը և հարազատ եղբոր պես կհյուրընկալեն Համոն ըսելով, որ թև ու թիկունք պիտի ըլլան անհրաժեշտ իրենց նմանին:

Հովիվ Համոն կդառնա գուսանը Օհան պեկին, սակայն հոգեպես խռովահույզ է, սիրած աղջկան կարոտը կտանջե զինք: Օհան պեկին սարքած խնջույքները չեն կրնար մարել անոր մեջ սիրո կրակը:

Անարդարության դեմ պայքարող ու սիրած յարին կարոտով ապրող Համոն, առավոտ մը կանուխ կթամբե իր ձին, կառնե աղեղն ու նիզակը և հրաժեշտ կուտա իր հովիվ ընկերներուն, որոնք համոզված են թե՛

Կխորտակվի ստրկության բեռն անպայման:

Համոն սրարշավ կհասնի Արիֆ պեկին պալատը, ուր Ֆատիլեի հարսանիքն էր Օմար պեկին հետ: Կմտնե ներս և աշուղներուն հետ միասին ինքն ալ սրինգ կնվագե, երջանկություն մաղթելով հարսին և ապա ցմրուր խմելով փարչ մը զինի: Հարսանեկան խնջույքի ժամերը կսահին և տասնութամյա թուխ աղջկա մը միջոցով Համոն կհաջողի դուրս բերել Ֆատիլեն ու միասին ձի հեծած մութ գիշերին կմխրճվին անտառին մեջ:

Սերը առավ իր ազատ թռիչքը, պալատը իրարանցումի մեջ է:

Սակայն ծեր ու նենգ փոխանորդը ժայռի մը ետեւ թակարդ լաբած կսպասեր:

Կուզեր Համոն նետահարել, իսկ Ֆատիլեն վերադարձնել հորը՝ առատ ոսկիի փոխարեն:

Դեռ հազիվ համբուրած էր Ֆատիլեի շրթունքները, երբ նետահար՝ Համոն կիյնա ձիու վրայեն ու կգլորվի անդունդն ի վար:

Կլսվի գետին վշոցը, վշտաբեկ և հուսահատ Ֆատիլեի լացը.

**Յարս ինկավ, սարս ինկավ,
Երջանկության ծառս ինկավ.
Ես ինչ ընեմ գարնան բույրը
Երբ ալ չկա
Յարիս գարուն՝ վարդ համբույրը:**





Ֆատիլեն ձայնեց յարին... շուրջն ամեն բան դարձավ խավար, աչքը փակեց ու նետվեցավ անդունդն ի վար:

Դեմոկրատական ոգիով մը գրված Ա. Կյուզեյանի ռոմանթիք պոեմը խորհրդանիշ մը կարելի է համարել արևելքի ժողովրդական խավերու մղած պայքարին ընդդեմ բռնության, խավարին և ընդդեմ տիրող, շահագործող դասակարգերու, որոնք սերն անգամ դարձուցած են վաճառքի նյութ:

Ա. Կյուզեյանի հայերենը մաքուր է, արտահայտիչ են ընդհանրապես բանաստեղծական՝ պատկերները: Իր այս գրական վաստակով հնդկահայ հասարակական գործիչ Ասատուր Կյուզեյան իր ներդրումը կկատարե սփյուռքահայ առաջադիմական գրականության մեջ:

**«Նոր կյանք» շաբաթաթերթ,
Բուխարեստ, Ռումանիա
Ուրբաթ, 19 մայիսի 1961թ.**





Ներկայացրել է «Սփյուռք»-ը, 27 հունիսի 1961 թ.

«ՅԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ»

Պր. Ասատուր Կիզելեանի նոր լոյս տեսած սիրավէպէն՝ «ՅԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ», կու տանք հատուած մը, ուր՝ վստահ ենք, թէ մեր ընթերցողները պիտի գտնեն բանաստեղծական ջերմ ու թարմ շունչ մը, որ դժբախտաբար կը պակսի մեր բանաստեղծությանը ներկայիս: Սիրավէպը անմշակ մնացած կալուած մըն է Արևմտահայ քերթողութեան մէջ, եւ այս ունի իր պատճառները, անշուշտ, դժուարամատչելի սեռ մըն է արդարև ՊՈԵՄԱՆ: Արդար հպարտութեամբ մը եւ հաճոյքով կ'ողջունենք ուրեմն «Սփիւռք»-ի բարեկամ և աշխատակից Պր. Ասատուր Կիզելեանի այս առաջին փորձը, որ որոշ յաջողութիւն մը կ'արձանագրէ այս մարզին մէջ: Առիթ կ'ունենանք տակաւին արտայայտուելու գիրքին մասին:

Այնուհետև ներկայացուում են հատուածներ պոեմից.

- Ապրած մնաս պէկ, արելչատության
- Մաղթանք է բերած ծառադ անարժան:
- Բարի օր, վեգիլ, նորութիւններ՞ կան,
- Թէ կ'ուզես հիներ պատմել ձեւով նոր:

...եւ հատուածի շարունակությունը

Ուսին եափունջի, ձեռքին գաւազան,
 Կանգնեցաւ Յամոն պէկին դէմ դաժան,
 Որուն նայուածքը քարբի մը նման
 Սողաց իր բոյնէն ու փաթթեցաւ
 Չոպան տղայի աչքերուն անձայն.
 -Ի՞նչ կ'նես Յամոյ, գիշերով եթե
 Անօթի գայլ մը հօտէդ ներս մտնէ,
 Ու փորձես տանիլ ոչխար մը անկէ:

...եւ հատուածի շարունակությունը





ԳՐԱԿԱՆ ՌԱԴԻՈՅԱՂՈՐԴՈՒՄ

ԱՍԱՏՈՒՐ ԿՅՈՒՉԵԼՅԱՆԻ «ՉԱՄՈՅ ԵՎ ՖԱՏԻԼԷ» ՊՈՆԵՍԸ

Ասատուր Կյուզեյանն ապրում է Կալկաթայում: Նա Չնդկաստանից մեկնել է Մերձավոր արևելքի հայաշատ վայրերը: «Չամոյ և Ֆատիլէ» պոեմը, որի տիտղոսաթերթի վրա գրված է «Կալկաթա», լույս է տեսել Բեյրութում, երբ հեղինակը գտնվում էր այնտեղ: Ասատուր Կյուզեյանը նամակագրական ջերմ կապեր է պահպանում Չայաստանում ապրող մտավորականների հետ, քաջածանոթ է հայ մշակույթին: Նրա սրտին առանձնապես մոտ են տաղանդավոր բանաստեղծ Չովհաննես Շիրազի ստեղծագործությունները: Այդ երևում է ոչ միայն նրա նամակներից, այլ «Չամոյ և Ֆատիլէ» պոեմից: Թե «Սիամանթո և Խաջեգարեի», թե «Չամոյ և Ֆատիլէ» նյութը քաղված է քրդական բանահյուսությունից: Ծանոթանանք վերջինիս բովանդակությանը: Չամոն քուրդ հովիվ է, արածացնում է Արիֆ բեկի, աստղերուն թիվեն շատ-շատ ավելի, ոչխարները: Բեկի աղջիկը՝ չքնաղ Ֆատիլեն, սիրահարվում է նրան: Կատաղած բեկը Չամոյին հեռացնում է Սաման սարից, մի հասարակ հովիվ ինչպե՞ս կարող է բեկի փեսան լինել: Թափառական Չամոն սիրած աղջկա կարոտը սրտում հասնում է Վանա սարերը, ուր հովիվները հյուրընկալում են նրան: Նա «Լուր-դա-լուր»-ի Չասոյի նման գիտե այնպես նվագել, որ ոչխարները կախարդված լսեն նրա սրնգի ձայնը: Եվ ահա մի ուրիշ բեկ նրան հրավիրում է իր մոտ: Եթե Չամոն կարողանա իր նվագով դյուրել ծարաված ոչխարներին և թույլ չտալ, որ նրանք ջրին մոտենան, ապա կդառնա բեկի պալատի գուսան:

Այդպես էլ լինում է: Անցնում է մի քանի տարի: Երազ է տեսնում Չամոն, գալիս է Ֆատիլեն և նրան հայտնում է, որ իրեն ամուսնացնում են: Սիրահար հովիվը հեծնում է ձին և նորից գալիս դեպի Սաման սարը: Երազը ճիշտ էր: Չամոն այլ գուսանների հետ մասնակցում է հարսանիքին, երգում է.





**Երագիս մեջ քեզ
Ուզեցի բռնել
Աղջիկ տենչավառ,
Դուն հասմիկ դարձար:**

Այդ երգը նա երգել էր տարիներ առաջ, իր և Ֆատիլէի առաջին հանդիպման ժամանակ: Ֆատիլեն հասկանում է, որ եկել է Համոն: Սիրահարները գիշերը փախչում են: «Տարի՛ն, տարի՛ն, հե՛յ, օգնություն, հարսը տարի՛ն»: Լուրն արագորեն տարածվում է: Հետապնդում են փախչողներին, որոնք հասցնում են ապաստանել մի խումբ քուրդ հովիվների մոտ: Կռիվ, նետերի տարափ: Ֆատիլեն սպանում է իր փեսացուին: Սպանվում են և ուրիշները: Հետապնդողներից միայն երկուսն են ազատվում, մեկ էլ աղվեսատիպ մի մարդ, որը դարան մտած՝ նետահարում է Համոյին: Ֆատիլեն ծանր վշտից ինքնասպան է լինում՝ իրեն նետելով ձորը՝ Համոյի մոտ:

Ահա «Համոյ և Ֆատիլե» պոեմի համառոտ բովանդակությունը: Ինչպես տեսնում ենք ակնհայտ է նմանությունը Շիրազի «Սիամանթո և Խաջեգարե» պոեմի հետ: Երկու գործերն էլ քրդական նույն լեզենդի մշակությունն են:

Նմանություններ կան նաև բանաստեղծական մտածելակերպի տեսակետից: Դժվար է գտնել որևէ պատկեր, որը վերցված լինի Շիրազից, բայց ընդհանուր հյուսվածքի վրա կա «Սիամանթո և Խաջեգարե» պոեմի ազդեցությունը:

Որևէ ստեղծագործություն ընթերցելիս առաջին հարցը լինում է, բանաստեղծ է հեղինակը, թե՞ պարզապես գիտի տաղաչափության օրենքները: Անպայման բանաստեղծ է Ասատուր Կյուզելյանը: Նա կարողանում է երևույթները ներկայացնել բանաստեղծականորեն: Ահա բազմաթիվ օրինակներից մեկը՝

**Գիշերն ելավ անտառներն խավարամած
Ու շրջագգեստն անպարագիծ նետեց Վանա
Անդորրաշունչ ու խոհական սարերուն վրա:
Խարույկին շուրջ, որուն բոցերն օձամարմին
Ոգիներու նման խելար կդառնային**





**Ձիրար գրկած՝ ճռճռացող կրակին մեջ,
Արևախանձ ու կաշմաբուռն չոպան տղաք
Բոլորվեցան վաստակախոնջ:**

Կյուզեյանը գիտի պատմել, գտնել տվյալ դրության համար ամենադիպուկ խոսքը: Այսպես, Չամոն չի ուզում Արիֆ բեկի հացն ուտել.

**Բայց անծանոթ քաղցը, բեկ մ'ալ ինք դաժան
Չուժկու մատներով կխեղդեր տղան:**

Գրողի համար կարևոր հատկանիշ է սյուժետային գիծը զարգացնելը: Այդ տեսակետից ևս Կյուզեյանը քննություն է բռնում: Թերևս այս գործում նրան բավականին օգնել է «Սիամանթո և Խաջեգարե» պոեմը, որը նրա սեղանի գրքերից մեկն է :

Չաջողված են նաև ժողովրդական խաղերի ոգով գրված երգերը, որ երգում է Չամոն՝ արտահայտելով տվյալ պահին ապրած իր հույզերը: Այսպիսի երգեր կան նաև Շիրազի պոեմում:

Թերևս «Չամո և Ֆատիլե» պոեմը ավելի մեծ տպավորություն կթողներ, եթե լիներ քրդական հիշյալ լեգենդի առաջին մշակումը: Ամեն մի բանաստեղծ պետք է ձգտի ունենալ իր սեփական ոճը, իր գրելաձևը: Մեզ թվում է, որ դրան կարող է հասնել և Կյուզեյանը, որի «Չամոյ և Ֆատիլե» պոեմը վկայում է հեղինակի օժտվածության մասին:

Չաղորդվում են հաս վածներ «Չամոյ եւ Ֆատիլե» դրեմից


Վ. Վարդանյան





ԱԼԲԵՐՏ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԻ
«Հարատևող բարեկամություն» գրքից

ԱՍԱՏՈՒՐ ԿՅՈՒՋԵԼՅԱՆԻ
«ՀԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ» ԴՅՈՒՑԱԶՆԱՊՈՆԵՄԸ



«Հարատևող բարեկամություն» գրքում տեղադրված են պոեմի «Ձոն», «Մուտք», «Նախերգանք» հատվածները

Որպես խմբագիր կրկին կարդալով «Համոյ և Ֆատիլէ» դյու-
ցազնապոեմը, հարմար գտա գրքում զետեղել նաև իմ բանաս-
տեղծությունը՝ նվիրված Ասատուր Կյուզեյլյանին: Այս ակրոստի-
քոսը լավ է բնութագրում «Համոյ և Ֆատիլէ» գրքի հեղինակին:





ԱՍԱՏՈՒՐ ԿՅՈՒՁԵԼՅԱՆԻՆ
Ակրոստիքոս

Ամեն առավոտ դու հեռու-հեռվից
աղոթք ես հղում քո Երևանին,
Սիրով ու սրտանց ողջույն ես տալիս
քո Արարատին, կապույտ Սևանին,
Ապրում ես հեռվում, բայց հոգիդ այստեղ
երջանկանում է հայրենի շնչով,
Տրոփում է քո սիրտը կարոտած
հայրենի երկրի հարազատ կանչով:
Ու թեև հեռու՝ միշտ հայ ես մնում
քո խառնվածքով, նկարագրով,
Րոպե իսկ անգամ դու չես մոռանում,
թե ով է հայը ճակատագրով...

Կիլիկիան է քո ծննդավայրը,
բայց դու ապրել ես Սիրիա-Չալեպում,
Յուրահատուկ է քո կրթությունը
լույսերի աղբյուր հին Դպրեվանքում,
Ուսուցիչ եղար Կալկաթայում հին,
իսկ հետո կյանքը քեզ Լոնդոն տարավ,
Զինվորը դարձար հայոց սուրբ դատի,
և ձայնդ հասավ հյուսիս ու հարավ:
Եղար խմբագիր, բանաստեղծ, երգիչ,
ասմունքող, գրող, բարերար դարձար,
Լրատու աղբյուր, պատմության մեկնիչ,
և այս ամենը՝ հավատով պայծառ:
Յուրովի դարձար կենտրոն հայության,
Լոնդոն եկողը քեզ մոտ է գալիս,
Ազգի, Սփյուռքի, լեզվի փրկության
ճանապարհը դու ճիշտ ես ցույց տալիս...
Ներիր, որ այստեղ՝ քո հայրենիքում,
քեզ ինչպես հարկն է, դեռ չենք մեծարում,
Բայց դու միշտ մերն ես, մեր հարազատը,
մեր մեծ հայորդին, հայը մեծանում:

Ալբերտ Փարսադանյան





ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍԱՏՈՐ ԿԻՈՒՋԵԼԵԱՆ



Կիւզելեան գերդաստանը դարերով ապրած է Տաւրոսեան լեռնաշղթայի մէջ բոյն դրած՝ Կիլիկիոյ հայկական Սովուկ Օլուկ Գիւղը, որ կը գտնուի Ալեքսանդրեա (Իսկենտերուն) նաւահանգիստ քաղաքէն շուրջ 10 ք.մ. հեռու, անտառապատ լեռնալանջի մը վրայ: Առաջին Աշխարհամարտին, Ասատուրի ծնողքն ու երեք հօրեղբայրները, տասնեակ հազարաւոր հայերու հետ, կենթարկուին բռնագաղթի: Սակայն հանգամանքերու բարեբախտ բերումով, փոխանակ Տեր-Ջոր աքսորուելու՝ կը դրկուին Դա-

մասկոս, թրքական բանակին համար ճանփայ կառուցելու: Կարևոր թիւով Կիւզելեաններ, ներառեալ Ասատուրին քոյրը, Վարդուհին, զոհ կ'երթան Մեծ Եղեռնին: Վարդուհին, աքսորի ընթացքին սուինահար կը սպանուի թուրք զինուորի մը ձեռքով: Երբ անգլիական բանակը կը գրաւէ Սուրիան, Կիւզելեանները կը փրկուին և կը վերադառնան իրենց ծննդավայրը, Սովուկ Օլուկ, որ Ջինադադարէն յետոյ կը դրուի Ֆրանսայի հովանաւորութեան ներքև:

Կարապետ և Ռահել Կիւզելեաններու հինգերորդ և վերջին մանչ զաւակը կը ծնի 14 Մայիս, 1932-ին և կը մկրտուի Ասատուր, ձեռամբ Տէր Յովհաննէս քահանայի:

1939-ին, Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն անմիջապէս առաջ, Ֆրանսան Ալեքսանդրեոսի նահանգը, անհասկնալի պատճառներով, կու տայ Թուրքիոյ, աւելի ճիշտ պիտի ըլլար ըսել՝ «կը նուիրէ» Թուրքիոյ, որուն հետևանքով, երեսուն հազար հայեր, ներառեալ Կիւզելեանները, կը տեղափոխուին Լիբանան: 1940-ին Կարապետ և Ռահել Կիւզելեան կ'որոշեն հաստատուիլ Սուրիոյ Հալէպ քաղաքը, ուր Ասատուր կը յաճախէ տեղւոյն Կիլիկեան Վարժարանը, որուն ընթացքն աւարտելով 1948-ին կ'ընդունուի Կիլիկիոյ





Կաթողիկոսութեան Անթիլիասի դպրեվանքը, Լիբանան, որպէս Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի սան:

Սարտարապատի հերոսը, Լուսահոգի Գարեգին Կաթողիկոս, կը հոգայ Ասատուրին դպրոցական ծախսերը մինչև իր մահը, 1952 թ.:

Դպրեվանքի մէջ Ասատուր կ'ունենայ կարգ մը անուանի դասախօսներ, ինչպէս Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց, հայ մանրանկարչութեան մեծագոյն մասնագէտը. Շահան Պերպերեան՝ արուեստաբան, փիլիսոփայ, գրական քննադատ, երաժիշտ. Սիմոն Սիմոնեան՝ գրաբարագէտ, պատմաբան, բանասէր, վիպագիր. Բիւզանդ Եղիաեան՝ անուանի մանկավարժ, դպրեվանքի ուսումնապետը՝ անոր հիմնադրման առաջին օրէն. Համբարձում Պերպերեան՝ անուանի երաժիշտ. Խորէն Գաբիկեան, Տոքթ. Թովմեան, Գնել Վրդ. Երեմեան. Շահէ Վրդ. Աճեմեան և ուրիշներ:

Ուսանողութեան շրջանին Ասատուրն իր գործօն մասնակցութիւնը կը բերէ դպրեվանքի ընկերային, գրական, թատերական և մշակութային ձեռնարկներուն:

Կիւզելեան 1955-ին կ'աւարտէ դպրեվանքը: Շահէ Վրդ. Աճեմեանի կարգադրութեամբ, ամերիկահայ բարերար մը յանձն առած էր հոգալ Ասատուրին համալսարանական ծախսերը Միացեալ Նահանգներու մէջ: Երբ Ամերիկեան հիւպատոսարանը կը մերժէ Ասատուրին վիզա տալ, ան 1955-56 դպրոցական տարեշրջանին կը պաշտօնավարէ Հալէպի Կիլիկեան վարժարանէն ներս: Ուսուցչական աշխատանքներուն զուգահեռ՝ Կիւզելեան իր գործօն մասնակցութիւնը կը բերէ հալեպահայութեան կրթական, գրական, մշակութային և ընկերային կեանքին: Կիլիկեան Վարժարանի Շրջանաւարտից Միութեան վարչութեան նախաձեռնութեամբ, ան կու տայ շարք մը դասախօսութիւններ, նուիրուած հայ ժողովրդի պատմութեան, վաղամեռիկ բանաստեղծներ՝ Պետրոս Դուրեանի, Միսաք Մեծարեանցի, Մաթէոս Զարիֆեանի ստեղծագործութեանց, ինչպէս նաև Կոմիտաս Վարդապետին և հայկական ժողովրդական երգերուն:

1957-ին Ասատուր Կիւզելեան կը հրաւիրուի Կալկաթայի Հայոց Մարդասիրական Գեմարանի Հոգաբարձութեան կողմէ, որպէս հայերէն լեզուի, գրաբարի, հայ գրականութեան, հայ մատենագրութեան և հայ ժողովրդի պատմութեան դասատու:





Ուսուցչական աշխատանքներուն զուգահեռ՝ ան կը հիմնէ երգչախումբ և թատերախումբ, մասնակցութեամբ ճեմարանի ուսանողութեան և կալկաթահայ երիտասարդ ուժերու: Թատերախումբը կը բեմադրէ, ի միջի այլոց, Յակոբ Պարոնեանի «Պաղտասար Աղբար» և «Մեծապատիւ Մուրացկաններ» կատակերգութիւնները, որոնք մեծ խանդավառութիւն կը ստեղծեն համայնքէն ներս: Կիւզելեան կը ստանձնէ նաև Կալկաթայի Նազարէթայ Ս. Եկեղեցւոյ երգչախումբին ղեկավարութիւնը:

Համայնքի մշակութային կեանքը վերակազմակերպելու առաջադրութենէն թելադրուած, Կիւզելեան կ'ընդունի վարել Հայկազեան Մշակութային Միութեան Վարչութեան քարտուղարի պաշտօնը: Ան վերոյիշեալ միութեան նախաձեռնութեամբ կը կազմակերպէ հերթական դասախօսութիւններ, մշակութային և գեղարուեստական ձեռնարկներ:

Յեղինակավոր Ասիական Ընկերութիւնը (Asiatic Society) Ասատուր Կիւզելեանը կ'ընտրէ Ընկերութեան «Պատուոյ Անդամ»: Հայերէն գիրերու գիւտի 1600-ամեակին առիթով Կիւզելեան կը կարդայ դասախօսութիւն մը վերոյիշեալ ընկերութեան անդամներուն, որուն ներկայ կը գտնուին շուրջ հարիւր ակադեմիկոսներ, գիտնականներ և համալսարանի դասախօսներ: Ան իր դասախօսութեան մէջ՝ բացի Մեսրոպ Մաշտոցի և հայերէն տառերու գիւտի մասին խօսելէ, կ'անդրադառնայ նաև հայերէն ձեռագրերու մէջ պահպանուած գաղափարագիրերու և Մահանջատարոյի (Հնդկաստան) պեղումներէն յայտնաբերուած հնդկական գաղափարագիրերու միջև գոյութիւն ունեցող նմանութեանց, որ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէ հնդիկ գիտնականների մօտ: Հիմնուելով Ջենոբ Գլակի «Տարոնի Պատմութիւն» գիրքին մէջ պահպանուած տեղեկութիւններուն վրայ, Կիւզելեան կը պաշտպանէ այն վարկածը, ըստ որում՝ հայկական գաղափարագիրերը Հնդկաստանէն տարուած են Հայաստան Ն. Ք. երկրորդ դարուն: Կիւզելեանի դասախօսութիւնը կը հրատարակուի Ասիական Ընկերութեան հանդէսին մէջ (Journal of the Asiatic Society) 1962-ին, “Some Notes On Ancient Armenia” խորագիրով:

Ռաբինտրանատ Թագորի ծննդեան հարիւրամեակին առիթով, Ասատուր Կիւզելեան կը գրէ ընդարձակ ուսումնասիրութիւն մը





նուիրուած հնդիկ մեծ գրողի կեանքին ու գրականութեան, որ կը հրատարակուի Միացեալ Նահանգներ լոյս տեսնող «Ծիրանի Գօտի» ամսաթերթին մէջ, 1962-ին:

«Կալկաթայի Երաժշտական Ակումբ»-ի հրաւերով, Կիւզելեան կու տայ դասախօսութիւններու շարք մը հնդիկ երաժշտասէր հասարակութեան, նուիրուած Կոմիտասին, ինչպէս նաև հայ դասական և ժողովրդական երաժշտութեան:

1960-ին Ա. Կիւզելեան կ'աջակցի հայ ժողովուրդի մեծ բարեկամ, Պենկալ Նահանգի Սենաթի նախագահ, Փրոֆ. Սունիթի Քումար Չաթըրճիին, որ կը համարուեր Զնդկաստանի մեծագոյն արևելագետը այդ տարիներուն, որպէսզի հնդիկ գիտնականը ամբողջացնէ իր մեկ ուսումնասիրութիւնը, նուիրուած հայկական հերոսական առասպելներուն և «Սասունցի Դաւիթ» դյուցազնավէպին:

Ուսումնասիրութիւնը հետագային կը հրատարակուի Ասիական Ընկերութեան Զանդեսին մէջ, (Journal of the Asiatic Society) «Armenian Hero Legends and The Epic of David of Sasun» խորագիրով: Մեծանուն գիտնականը յիշեալ աշխատանքը կը կարդայ Արևելագետներու 25-րդ Միջազգային Զամագումարին, Մոսկվա, օգոստոս 1960-ին:

1963 թուականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներուն, Ամենայն Զայոց կաթողիկոս Վազգէն Ա., Սալապար Եկեղեցւոյ հրաւերով, կ'այցելէ Զնդկաստան և կ'արժանանայ պետական արժանավայել ընդունելութեան: Ասատուր Կիւզելեան Վազգէն Ա.-ի Զնդկաստան կատարած շրջապտոյտի ընթացքին կ'ընկերակցի Վեհափառին, որպէս Նորին Սրբութեան թարգմանն ու քարտուղարը: Վեհափառն ու իր շքախումբը, որուն մաս կը կազմէին Երուսաղեմի Զայոց Պատրիարք Նորին Ամենապատուութիւն, Տէր Եղիշէ Արք. Տէտերեան և այլ բարձրաստիճան եկեղեցականներ, կ'ընդունուին Զնդկաստանի Նախագահ, Տոքթ. Ռատաքրիշնանի, Վարչապետ Ջավահարլալ Նեհրուի և պետական ուրիշ բարձրաստիճան անձնավորութիւններու կողմէ: Կ'արժէ նշել որ ընդառաջելով Վեհափառի հրաւերին, նախագահ Տոքթ. Ռատաքրիշնան քանի մը տարի յետոյ, կ'այցելէ Զայաստան:

1957 թ-ի Դեկտեմբերի 5-ին Ասատուր Կիւզելեան կ'ամուսնանայ հնդկահայուի Վիվիէն (Նարինէ) Ալեքսեանի հետ:





Կիւզելեանները կը բախտավորուին երկու աղջիկ զաւակներով. 1963-ին կը ծնի Կարինէն, Կալկաթա, իսկ 1965-ին՝ Արմինէն, Լոնտոն:

1963-ին Ասատուր Կիւզելեանն առաջին անգամ ըլլալով կ'այցելէ հայրենիք, Հայաստանի Կրթական Նախարարութեան հրավերով և հոն կը մնայ երկու ամիս: Խորհրդային շրջանին չորս տարբեր առիթներով ևս ան կ'այցելէ Հայաստան, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի և Վազգէն կաթողիկոսի հրաւերներով: 1968-ին, որպէս պետութեան հյուր, կը մասնակցի Երևանի 2750-ամեակի սոնակատարութիւններուն: Հայաստանի անկախութիւնէն ի վեր Կիւզելեան կանոնաւորաբար կ'այցելէ հայրենիք:

1964-ին Կիւզելեանները կը տեղափոխուին Անգլիա և բնակութիւն կը հաստատեն Լոնտոնի մէջ: Ասատուր նոյն տարուան դեկտեմբերին կը նշանակուի խմբագիր «Արեգակ» ամսաթերթի, որ սկսած էր հրատարակուիլ 1964-ին, պարսկահայ ծանօթ առևտրական, Հայկ Գալուստեանի նախաձեռնութեամբ ու նիւթական օժանդակութեամբ: «Արեգակ» կը փակուի յունիս, 1966-ին:

Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի և հայ գրողներու խնդրանքին ընդառաջելով՝ Ա. Կիւզելեան 1974-ին կը հիմնէ «Լոնտոն» ամսաթերթը, որ երկու տարի, ի գին նիւթական մեծ դժուարութիւններու լոյս տեսնելէ յետոյ, կը փակուի 1976-ին:

Լրագրական աշխատանքներուն զուգահեռ՝ Ա. Կիւզելեան, որպէս անդամ Հայ Տան Մշակութային Յանձնախմբի և քարտուղար՝ Համայնքային-Եկեղեցական Խորհուրդի, գործօն մասնակցութիւն կ'ունենայ լոնտոնահայութեան ազգային, կրթական, մշակութային և ընկերային կեանքին մէջ: Ան կու տայ դասախօսութիւններու երկար շարք մը՝ նուիրուած հայ ժողովրդի պատմութեան, գրականութեան և մշակոյթին: Միաժամանակ հայերէն լեզու կը դասավանդէ հայ և օտար չափահաս ուսանողներու: 60-ական թուականներուն ծանոթ դերասան Ասատուր Օհանեան, Լոնտոնի մէջ հիմնած էր թատերախումբ մը՝ մասնակցութեամբ մի քանի յայտնի դերասաններու, ինչպէս Գրիգոր Սաթամեան, Վարուժան Խըտշեան, Գեորգ Մալիքեան և ուրիշներ: Ընդառաջելով Օհանեանի հրաւերին՝ Ասատուր կը մասնակցի թատերախումբի աշխատանքներուն:





Յակոբ Պարոնեանի «Պաղտասար Աղբար» կատակերգութեան մէջ կը խաղայ Պաղտասար Աղբարի, իսկ Սմբատ Բիւրատի «Վարդանանք»-ին՝ Ղևոնդ Երէցի դերերը:

Ասատուր Կիւզելեան կը գրէ յօդուածներ, պատմուածքներ, գրական, պատմա-բանասիրական ուսումնասիրութիւններ և բանաստեղծութիւններ, որոնք կը հրատարակուին աշխարհացրիւ հայ մամուլին մէջ: 1960-ին, Պէյրութի «Սևան» հրատարակչատունը լոյս կ'ընծայէ Կիւզելեանի «Համոյ և Ֆատիլէ» սիրավէպը, զոր անգլերէնի կը թարգմանէ հնդկահայ մտաւորական Մանուկ Փրեանց, 1962-ին:

Ա. Կիւզելեանը սերտ կապեր կը հաստատէ Անգլիոյ մտաւորական շրջանակներու, գրողներու, պատմաբաններու, մամուլի և հեռուստատեսութեան ներկայացուցիչներու հետ: Ան յաճախ ելոյթ կ'ունենայ անգլիական ծայնասփիւռի և հեռուստատեսութեան կայաններէն, Հայաստանի և հայ ժողովրդի հետ կապուած հարցերու շուրջ: 1987-ին BBC-ի Ռատիոկայանը կը ծայնասփռէ Կիւզելեանի «Նոր Բրիտանացիներ» (New Britains) հաղորդումը, նուիրուած իր իսկ կեանքին, որ ջերմ ընդունելութեան արժանանալով ունկնդիրներու կողմէ՝ մէկ շաբաթուան ընթացքին կը ծայնասփռուի երեք անգամ:

BBC-ն կ'որոշէ Կիւզելեանի ելոյթը հաղորդել Միջազգային Ալիքով (BBC World Service), բայց թրքական Կառավարութեան՝ Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան վրայ բանեցուցած ճնշումին իբրեւ հետևանք՝ հաղորդումը ժամանակաւորապէս կը հետաձգուի: Երկու տարի անց՝ BBC-ին մէկ շաբաթուան ընթացքին 8 անգամ կը ծայնասփռէ «Նոր Բրիտանացիները», արժանանալով թրքական Կառավարութեան «զայրոյթին»: Իսթանպուլի «Հիւրիւրյէթ» թերթը, չորս էջերու վրայ սփռուած ընդարձակ խմբագրական մը կը գրէ հաղորդումին դէմ, «Ասատուր Կիւզելեանի Սուտերու Գործարանը Լոնտոնի մէջ» խորագրով:

Ասատուր կանոնաւորաբար կը մասնակցի, Կիւզելեան ընտանիքի սերտ բարեկամ, բանաստեղծուի Սարա Չըրչիլի (դուստրը Անգլիոյ համբաւաւոր Վարչապետ Ուինսթոն Չըրչիլի) կազմակերպած միջազգային գրական հաւաքոյթներուն, որոնց ներկայ կ'ըլլան բազմաթիւ երկիրներէ եկած գրողներ, բանաստեղծներ և արուեստագէտներ:





Այդ հաւաքոյթներուն՝ Կիւզելեան կը ներկայացնէ հայ գրականութեան մեծերէն Նարեկացիի, Քուչակի, Սայաթ-Նովայի և Պետրոս Դուրեանի գործերը:

Անգլիոյ մէջ Ասատուր Կիւզելեանի քաջալերանքով կարգ մը անգլիացի մտաւորականներ և համալսարանի դասախօսներ, կը գրեն յօդուածներ և գիրքեր նուիրուած հայ ժողովուրդի պատմութեան ու մշակույթին: Անոնցմէ կ'արժէ յիշել երկու անուն. Լոնտոնի Համալսարանի Արևելեան և Ափրիկեան Ուսմանց Դպրոցի Կովկասեան Ամբիոնի Վարիչ, Prof. David Marshal Lang-ը, որ կը գրէ «Հայաստան, Քաղաքակրթութեան բնօրրան» (Armenia Cradle of Civilisation) և «Աքսորուած ժողովուրդ մը» (A People in Exile) գիրքերը, և Christopher Walker-ը, որ հեղինակն է՝ «Հայաստան, Ազգի մը Գոյատևումը» («Armenia, Survival of a Nation») հատորին:

1988-ին, երբ ահաւոր երկրաշարժը քար ու քանդ կ'ընէ Հայաստանը, անգլիական ռադիոկայաններու և հեռուստատեսութեան կենդրոններու հրաւերով, Ասատուր Կիւզելեան կ'ունենայ բազմաթիւ ելոյթներ Հայաստանին օգնութիւն հասցնելու նպատակով:

Ասատուր Կիւզելեան կը նամակակցի, բարեկամական սերտ կապեր կը հաստատէ սփիւռքի և Հայաստանի բազմաթիւ անուանի գրողներու, երաժիշտներու, գիտնականներու, արուեստագէտներու, մարզիկներու, հասարակական ու քաղաքական գործիչներու հետ, ինչպէս՝ **Կամսար Աւետիսեան, Վարազդատ Յարութիւնեան, Պարոյր Սևակ, Լևոն Հախվերդեան, Գևորգ Էմին, Նայիրի Ջարեան, Յովհաննէս Շիրազ, Վահագն Դավթեան, Սիլվա Կապուտիկեան, Մարոյ Մարգարեան, Անահիտ Սահիւնեան, Համոյ Սահեան, Ստեփան Ալաջաջեան, Գրիգոր Քեշիշեան, Վարդգէս Պետրոսեան, Հրաչեա Ղափլանեան, Հենրիկ Մալեան, Բերսաբէ Գրիգորեան, Վարդգէս Համազասպեան, Ուիլիամ Սարոյեան, Սիմոն Սիմոնեան, Բիւզանդ Թօփալեան, Ջարեհ Որբունի, Վիքոր Կարտօն, Վահէ Վահեան, Անդրանիկ Ծառուկեան, Վահրամ Մավեան, Ալիսիա Կիրակոսեան, Արամ Խաչատուրեան, Սարգիս Բալասանեան, Առնոյ Բաբաջանեան, Ալեքսանդր Յարությունեան, Էդուարդ Միրզոյեան, Ադամ Խուդոյեան, Էդգար Յովհաննիսեան, Պավել Լիսիցեան, Գոհար Գասպարեան, Լուսինէ Ջաքարեան, Յովհաննէս Չեքիջեան, Ջիվան Գասպարեան, Վիքտոր Համբարձումեան, Էզրաս Հասրաթեան, Ալբերտ Ազարեան և շատ ուրիշներ:**





Արամ Խաչատուրեան այնքան կը տպավորուի 1977 փետրուարին Ասատուր Կիւզելեանի իրեն ձօնած բանաստեղծութենէն, որ Մոսկվա վերադարձին, կը սկսի երաժշտութիւն յօրինել «Ամենայն Հայոց Երաժիշտ» քերթուածին համար: Դժբախտաբար Վարպետը կը մահանայ յաջորդ տարի, 1978-ին, և այդ աշխատանքն ալ կ'արժանանայ բազմաթիւ ուրիշ կիսաւարտ մնացած գործերու ճակատագրին:

Ասատուր Կիւզելեանի ազգային, հասարակական, ուսուցչական, գրական, մշակութային և եկեղեցանուէր գործունէութեան առ ի գնահատանք՝ 1982-ին, Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը զինք կը պարգևատրէ «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանով:


Ասատուր և Վիվիէն, ինչպէս նաև իրենց ավագ դուստրը՝ Կարինէն, կը բնակին Լոնտոն, իսկ Արմինէն, իր երեք մանչ զաւակներով՝ Ալեքսանդր (ծ. 1995), Ճեյմս (ծ. 1997) և Մայքէլ (ծ. 1999) կ'ապրին Devon նահանգի Paignton ծովափնեայ քաղաքին մէջ:





ASSADOUR GUZELIAN (Biographical Notes)

For centuries Guzelians have lived in the Taurus Mountains, in the Cilician Armenian village of Sovouk Olouk, situated on a hill top half an hours drive from the sea port of Alexandreta (Iskenderun). A great number of the family perished during the Armenian genocide organized and executed by the Turkish Government during the First World War. They were deported to Syria en route to the Der Zor desert along with tens of thousands of other Armenians. It



is fortunate that the Turkish Army was in need of a labour force for building roads in the Damascus region and being young, Assadour's parents were selected and sent to Damascus instead of Der Zor, where most of the Armenian deportees perished from hunger and thirst. When the Turks were defeated and the British occupied Syria, Assadour's parents returned home which area was then placed under French mandate.

The fifth son of Garabed and Rahel Guzelian was born on 14th May 1932 and baptized Assadour (gift of God) by Rev. Hovhanness, the village priest. In 1939, when for no apparent reason the French "**donated**" the territory of Sanjak of Alexandreta, which included Sovouk Olouk, to Turkey, the family, along with 30, 000 Armenians, moved first to Lebanon and then settled in Aleppo (Syria) 1940.





Here Assadour attended the Kilikian Armenian School, obtaining his diploma of primary education in 1948.

He then studied for seven years at the Armenian Seminary of the Catholicosate of Cilicia in Antelias, Lebanon, where he had many well known teachers; Catholicos Garegin Hovsepian, the greatest specialist in Armenian manuscripts and miniatures; Simon Simonian, an outstanding scholar in classical Armenian, Armenian History and ancient Armenian literature, as well as a novelist and short story writer; Shahan Berberian, an art critic, philosopher and composer; Puzant Yeghiayan, a well known pedagogue; Hampartsoum Berberian, a famous musician.

Assadour Guzelian, who was actively involved in the literary, theatrical and artistic activities of the seminary, finally graduated in 1955.

During the 1955—56 school year, Guzelian taught at Kilikian School in Aleppo, being actively involved in the cultural life of the Armenian Community of Aleppo. At the request of Kilikian Graduate's Union, he delivered a number of lectures dedicated to "The Origin of the Armenians", "Bedros Tourian's Life and Literary Heritage", "Missak Metsarents", "Komitas and the Armenian Folk Music" etc.

In 1957 Guzelian was invited to Calcutta (India) to teach classical Armenian, modern Armenian, Armenian literature and history at the Armenian College and Philanthropic Academy, a very old Armenian educational institution founded in 1821. In addition to his duties as a teacher, Guzelian, with the participation of members of the community, as well as the students of the Armenian College and Davidian Girls School, established a choir and theatrical group, staging amongst others, Hagop Baronian's "Metsabadiv Mouratsganner" (Honorable Beggars) and "Baghdassar Akhbar" (Brother Baghdassar).





He was also appointed the conductor of the Armenian Church choir. With the aim of revitalizing the cultural life of the community, he was elected secretary to the Haikazian Cultural Society, organized regular cultural evenings and delivered a series of lectures covering various aspects of Armenian history and culture, including Indo-Armenian relations.

The prestigious Asiatic Society of India invited Guzelian to become an honorary member. On the occasion of the 1600th Anniversary of the invention of the Armenian alphabet, Guzelian delivered a lecture to the learned members of the Asiatic Society dedicated to St. Mesrop Mashtots and 5th Century Armenian literature. The lecture was attended by over hundred academicians, scholars and university lecturers.

As a member of the Calcutta Music Club, he gave a number of lectures on Komitas and Armenian folk music.

On the occasion of the Centenary of Rabindranath Tagor, Guzelian wrote an extensive essay dedicated to the life and works of the great Indian writer, which was published in “Tsirani Goti” magazine (United States).

In 1960 Guzelian assisted the famous Indian scholar, Prof. Dr. Suniti Kumar Chatterji, the Chairman of West Bengal Senate, in writing a study entitled “Armenian Hero Legends, and the Epic of David of Sassun”, Which the author presented to the Caucasian Section of the 25th International Congress of Orientalists, Moscow, August 1960.

In November-December 1963, His Holiness Vasken First, Catholicos of All Armenians paid an official visit to India as the guest of Catholicos Basilios of the Malabar Assyrian Church. During his month long tour of India, Guzelian acted as His Holiness’ interpreter and secretary. Accompanied by His Beatitude Archbishop Yeghishe





Derderian, the Armenian Patriarch of Jerusalem and other high ranking ecclesiasts, His Holiness was cordially received by The President of India, Dr. Radhakrishnan, Prime Minister Jawaharlal Nehru and many other dignitaries. A few years later Dr. Radhakrishnan visited Armenia as the guest of His Holiness Vasken First.

In December 1957, Guzelian married Vivienne Alexy, an Armenian, born in India. The couple were blessed with two daughters – Karine born 1963 Calcutta and Armine 1965 London.

In 1963, Guzelian visited Armenia for the first time, as the guest of the Ministry of Education and stayed in the motherland for two months. During the Soviet period he visited Armenia on four more occasions as the guest of the Committee for Cultural Relations with Armenians Abroad. In 1968 Guzelian was invited to the motherland by the Government of Armenia to participate in festivities marking the 2750th Anniversary of Yerevan-Erebouni, the capital of Armenia. Since independence he has regularly visited Armenia.

In 1964 Assadour Guzelian and his family settled in London. That same year he was appointed the Editor of “Aregak” (1964-66), an Armenian monthly, published by Mr. Haik Galoustian, a well known Armenian businessman from Iran. In 1974, Guzelian founded “The London Armenian Monthly” and acted as its chief Editor until 1976, when due to financial difficulties, he was forced to stop the publication.

In parallel with his journalistic work, Guzelian, as a member of the Cultural Committee of The Armenian house and the secretary to the London Armenian Community and Church Council, became actively involved in the national, educational and cultural life of the Community. He gave a series of lectures at Armenian House, dedicated to Armenian literature and culture.





He also established classes teaching Armenian to Armenian and non-Armenian adults. During the sixties Assadour Ohanian, the well known actor, had formed an excellent theatrical group in London with the participation of some young Armenian actors, such as Krikor Satamian, Varoujan Khedeshian and Gevork Malikian. Guzelian became a member of the group and played roles such as Baghdasar Akhbar in Baronian's "Baghdasar Akhbar" and Ghevond Yerets in Smpat Purad's "Vartanak".

Assadour Guzelian has written many articles, short stories, essays and poems which have been published in the Armenian press world-wide.

In 1960 "Sevan Press" in Beirut published his first poem book entitled "Hamo Yev Fadile", which was translated into English by the Indian Armenian scholar, Manook Periants in Calcutta (1962). Guzelian has many novels, short stories and poems, which he hopes to publish in the near future.

For almost 40 years Guzelian has been closely associated with the British media. He has given many interviews to the British press, television and radio regarding events and issues related to Armenia and the Armenians. In 1987 BBC Radio broadcast a series entitled "New Britains", one episode of which was dedicated to Assadour Guzelian's life. The programme was nominated "Pick of the Week" and was due to go to the BBC world Service, when, due to pressure from the Turkish Government, it was postponed temporarily. Two years later it was broadcast eight times in one week, enraging the Turkish Government. The Turkish daily "Hururyat" wrote a four page long editorial against it entitled "Assadour Guzelian's Factory of Lies in London". One could not expect any thing else from the mouth piece of the Turkish Government!





Guzelian actively participated in International literary evenings organized by poetess Sarah Churchill (daughter of the famous British Prime Minister Winston Churchill) a close friend of the Guzelian family, by introducing to participants some of the outstanding Armenian writers such as Krikor Narekatsi, Sayat Nova and Bedros Tourian.

In 1988 when Armenia was devastated by an earthquake, Guzelian was invited to broadcast almost daily on British radio and television with the aim of obtaining assistance for Armenia.

Guzelian has had correspondence and enjoyed personal friendships with many great Armenian writers, musicians, artists, scientists and men of letters of his time; Kamsar Avetissian, Varazdat Haroutyunian, Paruyr Sevak,

Gevorg Emin, Nairi Zarian, Hovhanness Shiraz, Vahagn Davitian, Silva Kapoutikian, Maro Margarian, Anahit Sahinian, Hamo Sahian,, Vartges Petrossian, Hratchia Ghaplanian, Henrik Malian, William Saroyan, Simon Simonian, Vahram Mavian, Aram Khachatourian, Arno Babajanian, Alexander Haroutyunian, Edward Mirzoyan, Pavel Lisitsian, Gohar Gasparian, Loucine Zakaryan, Victor Hambardzoumian, Ezras Hasratian, Levon Hakhverdian, Jivan Gasparian, to name but few. He has been one of the few to whom Aram Khachatourian wrote four letters in Armenian, which Guzelian donated to the Khachatourian Museum in Yerevan.

Khachatourian was so impressed by the poem entitled “Amenayn Hayots Yerajisht”, written by Guzelian in February 1977 and dedicated to the great composer that on this return to Moscow he started to compose music based on the poem. Unfortunately the author of the “Sabre Dance” passed away in 1978 before completing the task.





Assadour Guzelian has encouraged and assisted a number of British scholars to write about Armenians, such as Prof. David Marshal Lang, author of “Armenia, Cradle of Civilization”, “A People In Exile”, Christopher Walker, “Armenia, The Survival of a Nation” and others.

In recognition of his services to the nation, Armenian literature, culture and the Church, in 1982 His Holiness Vasken First, Catholicos of All Armenians honored Guzelian by granting him the “Sourb Nerses Shnorhali” medal (ST. Nerses the Graceful).

Assadour Guzelian Lives in London with his wife Vivienne and elder daughter Karine. His second daughter, Armine lives with her three sons Alexander (1995), James (1997) and Michael (1999) live in Paignton, a seaside town in Devon, England.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ալբերտ Փարսադանյան. Ստեղծագործական սխրանք	3
«Համոյ եւ Ֆատիլէ»	4
Ձօն	5
Մուտք	6
Նախերգանք	8
Ա	9
Բ	13
Գ	22
Դ	24
Ե	29
Զ	37
Է	41
Ը	46
Թ	48
Ժ	56
ԺԱ	60
ԺԲ	74
ԺԳ	85
ԺԴ	92
Համառոտ բառարան	92
HAMO AND FADILEH	93
PREFACE BY THE TRANSLATOR	94
Ա. Կիւզելեան. Մանուկ Փրեանցը և իմ «Համոյ եւ Ֆատիլէ» պոեմը	146
Մանուկ 3. Փրեանց. Իմ նկատողութիւններս պրն. Ասատուր Կիւզելեանի «Համոյ եւ Ֆատիլէ» բանաստեղծութեան մասին	148

Չեղինակը.....	149
Մուտք.....	152
Նախերգանք	153
Համոյ եւ Ֆատիլէ.....	153
Շահանդուխտ. «Համոյ եւ Ֆատիլէ»	173
Գէորգ Աճեմեան. «Համոյ եւ Ֆատիլէ»	176
THE ARMENIAN MIRROR-SPECTATORBOOKS	181
«Նոր կյանք». «Համոյ եւ Ֆատիլէ».....	182
«Սփյուռք». «Համոյ եւ Ֆատիլէ».....	185
Գրական ռադիոհաղորդում. Ա. Կյուզեյանի «Համոյ եւ Ֆատիլէ» պոեմը	186
«Հարատևող բարեկամություն» գրքից.....	189
Ալբերտ Փարսադանյան. Ասատուր Կիզելեանին	190
Կենսագրական տեղեկութիւններ.	
Ասատուր Կիզելեան	191
ASSADOUR GUZELIAN	199

**ԱՍԱՏՈՒՐ ԿԻԶԵԼԵԱՆ
ՀԱՄՈՅ ԵՒ ՖԱՏԻԼԷ**

**ASSADOUR GUZELIAN
HAMO AND FADILEH**

Հրատարակչության տնօրեն
ՎԱՀՐԱՄ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Խմբագիր
ԱԼԲԵՐՏ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Անգլերեն բաժնի խմբագիր՝
ԿԱՐԻՆԵ ԿԻԶԵԼԵԱՆ

Գեղարվեստական խմբագիր
ՄԱՆԵ ԼԱԼԱՅԱՆ

Շապիկի ձևավորումը՝
ԴԻԱՆԱ ԱՎԱԳՅԱՆԻ

Չափսը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 13 տպ. մանուկ:
Թուղթը՝ օֆսեթ - 80գ: Տպաքանակը՝ 1000 օրինակ:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24, հեռ. 28 54 28

E-mail: vmv_print@yahoo.com

